Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

891.99
U-24

891.542-2
Մ-24

# ԹԱՄԷԼԱ

ԿԱՄ

## ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ ԳԻՇԵՐՆԵՐԸ.

ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆ ԵՐԳԱԽԱՌՆ:

Ի ՀԻՆԳ ԱՐԱՐՈՒԱԾՍ ԵՒ ՅԻՆՆ ՊԱՏԿԵՐՍ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ

ՍՐԱՊ Մ. ՄԱՆԱՍԵԱՆԻ



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԻՒՀԷՆՏԻՍԵԱՆ

= 1863 =

891.99
Մ-24
ՀԱՍԽ Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI. 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
132
10 NOV 2011

# ԲԱՄԲԻՌ

ԿԱՄ

## ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ ԳԻՇԵՐՆԵՐԸ.

ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆ ԵՐԳԱԽԱՌՆ

Ի ՀԻՆԳ ԱՐԱՐՈՒԱԾՍ ԵՒ ՅԻՆՆ ՊԱՏԿԵՐՍ

---

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ

ՏՐԱԳ Մ. ՄԱՆԱՍԵԱՆԻ

1001
2424

24 JUN 2013 41804

## ԱՆՁԻՆՔ

| | |
|---|---|
| ԿՈՄՍ ՏԱՐՍԻ | ՄԱՐԹԷՆ |
| ՐԷՆԷ | ԳՐԻԳՕՆ |
| ԿԱՍՊԱՐ | ԼԱՐՖԱՅՈՒ |
| ՊԷՐԹԱ | ՔՕՆՍԹԱՆ |
| ԲԱՄԲԼԱ | ՄՕՆՆԻԷ |
| ԹԻԳՕ | ԱԼՊԷՐԹ |
| ՄՕՐԻՍ | ԼՕՍԱՆ |
| ՄԱ.ՔՍԻՄ | ԳՐԱՍԻ |
| ԲՕԼԻՍԱՐ | ԺԻՒՍԹԻՆ |

Գործաւոր թիթեռներ, Ջինուորականք, Հանդիսականք, Դիմակաւորք, Ժողովուրդ եւայլն։

# ԲԱՄԲԼԱ

ԿԱՄ

# ԹԱՐԵԿԵՆԴԱՆԻ ԳԻՇԵՐՆԵՐԸ

## ԵՐԳԱԽԱՌՆ ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆ

### Ի ՀԻՆԳ ԱՐԱՐՈՒԱԾՍ ԵՒ ՅԻՆՆ ՊԱՏԿԵՐՍ

## ԱՐԱՐՈՒԱԾ Ա.

### ՊԱՏԿԵՐ Ա.

### ԴՐԱԽՏ ԹԻԹԵՌՆԵՐՈՒ

ԾՈՒՔԱՏԱՁԵՒ ՍՐԱՀ ՄԸ, ԿԱՆԹԵՂ ՄԸ ՎԱՐԷՆ ԿԱԽՈՒԱԾ ԿԸ ԼՈՒՍԱՒՈՐԷ

### ՏԵՍԱՐԱՆ Ա.

ՄԱՐԹԷՆ, ԼԱՐՖԱՅՈՒ, ԳՐԻԳՕՆ, ԹԻԹԵՌՆԵՐ.

ԽՄԲԵԱԿՔ

ԵՐԳ

Երբ բարերարն հզօր Աստուած
Ձիմաւնք գրեաւ տիեզերաց
Ուղեց այսու ազգի մարդկան
Տալ օրինակ աշխատութեան.
Ուստալք ուրեմն և մենք աստի
Հաստատ գիտաք միշտ 'ի միտի
Թէ աշխատանք յամենայնի
Լինի անշուշտ արդիւնալի
   փառք աշխատողին
   փառք գործաւորին
Կեցցէ թիթեռն աշխատող
Կեցցէ թիթեռն որ չէ գող
Ապրի թիթեռն յամն բաղում
Ընէ թիթեռն կեր ու խում
Մընա թիթեռն յաւիտեան
Զանոյ չաւել գաւազան.

ՄԱՐ. (կը նայի դէպ նկարին շուրջը նկարէն կը մտնայ) Ո՛հ, հոգնեցայ։ (նկարը վար կ'առնէ ու կը նստի։)

ԼԱՐ. Բարեւ Մարթէն, ուսկից կուգաս։

ՄԱՐ. Բասալէն. այսօր շատ տեղ պտտեցայ . . . շատ առուտուր ըրի . . . չորս ֆրանքի չափ վաստըկեցայ։

ԼԱՐ. Չորս ֆրա՛նք։

ՄԱՐ. Եւ գեանէն խել մը բան ժողվեցի, որոնք ծախելու ըլլամ նէ . . . ։

ԼԱՐ. Ես ալ բաւական աշխատեցայ այսօր, և ահա երեք զոյգ հին կօշիկներ՝ որոնք երեկ շըտկրտեցի և յանձներ էին, կարեցի, շտկեցի, նորոգեցի . . . հէ՜, հէ՜, վաղն առտու կըրիկնեըը պիտի համրեմ։

ԳՐԻ. Ես ալ աս զգեստը կարեցի, կարկատեցի լմնցուցի։

## ՏԵՍԱՐԱՆ Բ.

### ՆՈՅՆՔ ԵՒ ՄՕՐԻՍ

ՄԱՐ. (Մօրիսին) Ի՞նչ կուզես։

ՄՕՐ. (Ծոփանալով) Թիթիններուն դրախտը կոչուած տեղը աս է մի։

ՄԱՐ. Այո՛, զի՞նչ կ'ուզէք։

ՄՕՐ. Պ. Րէնէ տը Սավինէն՝ որ սովորաբար հոս կը գտնուի եղեր։

ՄԱՐ. Ա՜հ, այն բարի բժիշկը՝ որուն այնքան երախտապարտ ենք ի՛նչ ազնիւ մարդ . . . հոս չէ. բայց կուգայ։

ԼԱՐ. Անունդ, պարոն։

ՄՕՐ. Մօրիս։

ԳՐԻ. Մականո՞ւնդ։

ՄՕՐ. Տիւվալ, (ժպտալով) աս ի՛նչ հետաքրքիր մարդիկներ են։

ԼԱՐ. Հրամմէ՛ նստէ, պարոն։

ՄՕՐ. Շնորհակալ եմ, բայց կըրնա՞մ արդեօք ես ալ ձեզի հարցընել՝ թէ դուք ո՞վ էք, և ի՛նչ գործ կ'ընէք։

ՄԱՐ. Ինչո՞ւ չէ . . . ինչո՞ւ չէ. մեզի Թիթի կ'ըսեն. Թիթի, այս ինքն գործաւոր, ամեն բանի համար, վասն զի արհեստնիս որոշ չէ, ամեն բանի ձեռք կը զարնենք. ծառայութիւն, կօշկակարութիւն, գերձակութիւն, հնավաճառութիւն, վաճառականութիւն . . . բայց տեսակ մը վաճառականութիւն։ Աս ծառայութիւններուն վրայ կ'աւելցնենք գիշերները փողոցները պտըտելով՝ գետնէն սիկառներու կտորուանք ժողվել, և յետոյ անոնք զանոնք գործածելու ծախել. մեծ բայց բարեսիրտ պարոններուն և տիկիններուն կողմնակի գաղտնի նամակները տանիլ և բերել. կառքերուն դուները բանալ. ծաղիկ ծախել, և վերջապէս ամեն տեսակ գործի կուգանք, և ամեն բանի ձեռք կը զարնենք։

ԼԱՐ. Մեր մէջը ընկերութիւն մը հաստատած՝ ամենքնիս հոս եղբայր՝ և միատեղ կ'ապրինք։

ՄՕՐ. Ասոնք ամենն ալ աղէկ. սակայն այս տեղը դրախտ Թիթիններուն կը կոչուի՞։

ԳՐԻ. Այո՛ . . . հիմա պիտի ըսէք թէ այս բոլորովին դրախտ մը չէ, և թէ մենք ալ բոլորովին հրեշտակ չենք. բայց մեզի համար դրախտ մը կը սեպենք այս բնակարանը, վասն զի շատ երջանիկ կեանք մը կ'անցնենք, և մեր մէջը հաւասարութիւնն ու եղբայրութիւնը կը տիրէ։ Բացառելով հայր Թիպօն մեր գլուխը ուժով՝ հաստըկեկ ու խոշորկեկ մարդ մը, որ չորս անգամ կարգուած է, և որուն բարեսրտութեանը, վեհանձնութեանը, եղբայրսիրութեանը չափ չկայ։

ԼԱՐ. Այո՛, հայր Թիպօն մեր ամենուս հայրը կը սեպուի, այս դրախտը ինքը ստեղծեց։ Ուր տեղ որ աղքատ մարդ մը գտնայ՝ հոս կը բերէ՝ կ'աշխատցնէ և ընկերութեանս անդամ կ'ընէ։

ՄԱՐ. Եւ Կասպար անունով եղբայր մ'ալ ունինք՝ որ մեզի պէս Թիթի է. միայն սա տարբերութեամբ որ հիմա դուցէ իշխանի մը պէս մեծ ու հարուստ կ'ըլլար՝ թէ որ խեղճին գլխուն խել մը դժբաղդութիւններ չի գային։

ԹԻՊ. (Ներսէն երգելով) Լա, լա, լա . . . ։

ՄԱՐ. Ահա՛ հայր Թիպօն կուգայ։



## ՏԵՍԱՐԱՆ Գ.

### ԱՌՋԻՆՆԵՐԸ ԵՒ ԹԻՊՕ

ԹԻՊ. Լա, լա, լա, լա, բարև ձեզ որդեակներ։

ԱՄԵՆՔԸ. Կեցցէ՛ հայր Թիպօն։

ԹԻՊ. Ի՞նչ լուր կայ՝ նայինք . . . Կապլիմօ, կաթիլ մը տուր ինծի ինչպէս որ տիկին Վամբիւռ կը սէր։

ՄՕՐ. (ցած Մարիէնին) Վամբիւռ . . .

ՄԱՐ. (ցած Մօրիսին) Իւր առջի կինն էր։

ԹԻՊ. (ըմպելէն ետ [illegible]) Ի՞նչ լուր կայ նայինք։

ՄԱՐ. Չոր առողջութիւն։

ԹԻՊ. Աղէ՛կ. դուք ալ ինծի պէս եղէք, որ կեանքիս մէջ բընաւ հիւանդցած չեմ, ո՛չ անանկ ատեն մը աշխարհք եկած եմ որ՝ մարդկանց մարմինը քարէ շինուածի պէս ուժով և քաջառողջ կ'ըլլար։

ԼԱՐ. Ի՞նչ, հայր Թիպօ, հիւանդ եղած չե՞ս ամենևին։

ԹԻՊ. Հիւա՞նդ մի, ե՞ս, հէ՛ . . . անծանօթ բառ մըն է այդ ինծի և եթէ մեռնելու ատենս գայ, աչքերս պիտի գոցեմ առանց ցաւ մ'անգամ զգալու՝ ինչպէս որ տիկին Սավաժօն կ'ըսէր.

ՄՕՐ. (Մարիէնին) Սավաժօ՞ . . .

ՄԱՐ. Իր երկրորդն էր։

ԼԱՐ. Քանի տարուան կինաք ըլլալ, հայր։

ԹԻՊ. Աստուած գիտէ այդ, ես մինչև վաթսուն տարիքս համրեցի, յետոյ ամիսները տարիները իրարու խառնուեցան, կամաց կամաց ծննդեանս թուականը մոռցայ . . . այո՛ ճիշդ 60 տարու էի երբոր իմ Լաֆրինա մեռաւ։

ՄԱՐ. (Մօրիսին) Իր երրորդ կինն էր։

ԹԻՊ. Եւ տիկին Մարթան թաղած օրուանս թուականը մոռցած եմ։

ՄՕՐ. (Մարիէնին) Մարթա՞ն։

ՄԱՐ. Իր չորրորդը։

ՄՕՐ. Եւ յուսամ թէ վերջինը։

ՄԱՐ. Ո՞վ գիտէ։

ԹԻՊ. Ի յիշատակ չորս հանգուցեալ ամուսիններուս։ (ըմպելէն գաւաթը վեր առնելով կ'երգէ)։

Օ՜ն զայս բաժակ
Ես փոյթ պարպեմ
Ի յիշատակ
Նոցա՝ խմեմ։
Եղբայր Թիպօ կ'ըսեն ինծի
Անձինս իշխան եմ և գերի
Ե՞րբ չըզխմեմ աշխարհ եկայ
Բայց չորս անգամ կարգուեցայ։
Օ՜ն զայս բաժակ և այլն.
Առջի կինըս չէր գեղեցիկ
Եւ երկրորդն ալ վաթսուննոց էր
Իսկ երրորդը որ գաճաճիկ
Զորրորդիս չափ զիս կը սիրէր։
Օ՜ն զայս բաժակ և այլն.
Չորս ամուսինս ալ կ'պաշտէի
Եւ չորսէն ալ շատ գոհ էի
Ափսոս երան՝ մեռան շուտով
Զիս անմխիթար այրի թողլով։
Օ՜ն զայս բաժակ և այլն։

ԹԻՊ. Բայց ո՞ւր են՝ չեմ տեսներ իմ սիրելի զաւկներս, ո՞ւր է Բամէլան, ո՞ւր է Կասպարը։

ԼԱՐ. Կասպար դուրս ելաւ։

ԹԻՊ. Կասպա՞ր . . . դեռ գիշեր չեղա՞ծ . . . ի՛նչ զարմանալի բան

. . . Փարիզ գալէն 'ի վեր՝ ասանկ բան մը բռնած չէր ։

ՄԱՐ. Ճիշդ ես ալ, հայր Թիպօ կ'ուզէի հասկնալ թէ ի՛նչու համար Կասպար մինակ գիշերները դուրս կ'ելլէ ։

ԹԻՊ. Ի՛նչու համա՞ր . . . վասն զի կը վախնայ արդարութենէն ։

ԼԱՐ. Ի՞նչ, միթէ յանցաւո՞ր է ։

ԹԻՊ. Յանցաւո՜ր . . . ես ըլլայի դատաւորը՝ զինքը բնաւ չէի մեղադրեր . տասը տարի առաջ Կասպարը Մարսիլեա կը բնակէր . ու կարգուած էր . և գիշեր մը իւր կինը ծովեզերքը սիրահարի մը հետ գտեր է ու . . . ու . . . այսչափ գիտեմ, վասն զի ինքն անգամ չ'յիշէր թէ այն միջոցին ի՛նչ անցեր է միջերնին . կռուե՞ր է հետը, խղդեր է, թէ ծո՞վն է նետեր . այն ատենէ 'ի վեր իւր կինը կորսնցնելով՝ Մարսիլեայէն հոս իմ քովս եկաւ . և ահա ցարդ այն յիշատակովը կը տարտամի ցորեկները դուրս ելլալու ։

ԱՄԻՆ. Խեղճ Կասպար ։

ԹԻՊ. Չ'ըլլայ թէ այս պատմութիւնը յիշէք իրեն . խեղճը սրտէն կէս խենթի պէս է ։ — Բայց Բամէլյան ո՞ւր է ։

ԼԱՐ. Բամէլյան իւր սիրուհւոյն տունը գացած պիտի ըլլայ ։

ԹԻՊ. Այէկ ըսիր, այսօր ամսագլուխ է, և անշուշտ ստակ պիտի առնէ, ահա տարի մը 'ի վեր է որ ամէն ամսագլուխ ստակ պիտի առնէ . . . կարծեմ փուճ տեղը կ'աշխատի ազնիւ այն տիկնոջ քով ։

ՄԱՐ. Ո՛հ, հայր Թիպօ, որչափ կը սիրէ Բամէլյան ։

ԹԻՊ. Անշուշտ . . . իմ հոգեզաւակս է . . . . քանի մը տարի կայ, երբ ես շադանակի վաճառականութիւն կ'ընէի . . . ձմեռուան ժամանակ սաստիկ ցուրտ իրիկուն մը՝ երբ մէկ կողմէն ձիւն անձրև, միւս կողմէն քամին կը փչէր՝ ես ալ փողոցին մէկ անկիւնը շադանակս վառարանին քովը կծկտած կը տաքնայի, յանկարծ տղու մը լալու ձայնը առի, առջի անգամ ուշ չըդրի, բայց երկրորդ ձայնը սաստկացաւ՝ ոտք ելայ՝ քանի մը քայլ առի դէպ 'ի ձայնը . . . միայն ի՞նչ տեսնեմ . . . . փողոցին մէջ տեղը պառկած վեց եօթը տարեկան աղջիկ մը, որ ցուրտէն կը դողդղար ու կուլար . մեկէն վերուցի գետնէն՝ շալկեցի՝ վառարանիս քովը բերի՝ տաքցուցի . ու կողովիս մէջ տեղաւորելով շալկեցի բերի . . . ամիսի մը չափ ծանր հիւանդութենէ մը ետքը երբ բոլորովին առողջացաւ ան ատեն հարցուփորձ ընելով տեղեկացայ որ յատուկ աղջկան աղքատիկ մայրը որմէ զատ մէկն ալ չ'ունէր՝ մեռեր է . և թէ հանգուցեալը իւր անգութ տանտիրուհւոյն քանի մը Ֆրանք պարտք ունենալուն համար՝ բարբարոս կինը անողորմաբար անմեղ որբը տունէն դուրս ձգեր էր . խեղճն փողոցի դացի անոր տունը՝ հանգուցելոյն պարտքը վճարեցի՝ և ունեցած կարասիքը . և քանի մը պիտանի թղթերն ալ վերուցի բերի հոս՝ ահա այսպէս ան օրուընէ իմ հոգեզաւակս եղաւ, բայց բուն զաւկիս պէս կը սիրեմ զինքը, և ամենքնիս ալ կը սիրենք ։



ՄԱՐ. Միթէ Բամէլյան հա՞յր ալ չունի ։

ԹԻՊ. Հայրը հարուստ մարդ մըն է եղեր, որ անգթութեամբ իւր կինն ու միակ զաւակը թողեր՝ հեռու տեղ գացեր է, որուն աշխարհիս որ անկիւնը գտնուիլը չըգիտցուիր, բայց ինչպէս ըսի Բամէլյային քովէն քանի մը պիտանի թղթեր ելան աս բանիս վրայօք, որոնք գուցէ օր մը մեզի հարկաւոր կ'ըլլան ։ Ասիկայ իմ կարծիքս չէ, մինակ Կասպարին յայն է . . . ։

## ՏԵՍԱՐԱՆ Դ.

ԱՌՋԻՆՆԵՐԸ, ԵՒ ՐԷՆԷ

ՐԷՆ. (գալով) Բարև ձեզ եղբարք ։

ԹԻՊ. Ո՜հ, ո՛ մեր բժիշկը . բարի եկաք Պ. Րէնէ ։

ՄՕՐ. Ես ալ քեզի կ'սպասէի ։

ԹԻՊ. Կրակիւժօ, կաթիլ մը սուր բժշկին . — երթամ քառորդէ մը կը դառնամ ։

## ՏԵՍԱՐԱՆ Ե.

ՐԷՆԷ, ՄՕՐԻՍ

ՄՕՐ. Զարմանալի բան որ հըռչակաւոր բժիշկը՝ ու մայրաքաղաքիս ամենէն մեծ տիկնանց աչքը մտած մարդը՝ ատենօք ստացած բարեկամացը այսչափ հաւատարիմ կեցեր է ։

ՐԷՆ. Անշուշտ . . . ատոնք էին իմ հաւատարիմ բարեկամներս, որոնց վրայ բժշկութեանս առաջին փորձերն ըրի ։

ՄՕՐ. Եւ անկուտի զիրենք կը բժշկէիր ։

ՐԷՆ. Այո՛ բայց և այնպէս այս օրուան ունեցած փառքը հռչակս ալ ատոնց՝ այս առաքինի անձանց կը պարտիմ, որոնք երախտապարտ սրտիւ իմ անունս համբաւեցին ։

ՄՕՐ. Ըսածիդ նման ամէն տեղէն քեզ կը կանչեն, ուր որ երթամ՝ քու գովեստներդ կը լսեմ ։ Ինչպէս որ Շօսէ—Տանդէն փողոցը թիւ ութերորդ հարուստ Տարսի կոմսին տունը՝ ուր որ անցեալները քեզ ներկայացուցի, անհամեմ հանք մըն է քեզի համար . ուր ուզածիդ պէս կրնաս վարուիլ . քանի մը միլիոնի տէր անձ մը քեզի համարմունք կապեց . կոմսուհւոյն ջղային հիւանդութեանը համար տուած դեղերդ մեծ ազդեցութիւն ըրին թէ իրեն և թէ կոմսին . և այնչափ քուկին կամացդ կը հնազանդին որ մինչև անգամ անձամբ կոմսուհւոյն հետ թև առ թև շրջագայելու պատիւ ես . . . անանկ չէ՞ . . . խեղճ կոմսը . . . ասանկ որ երթայ, կինը չըբնացած ինքը պիտի հիւանդնայ ։

ՐԷՆ. Կը սխալիս պարոն, կոմսուհին իմ սիրուհիս չէ ։

ՄՕՐ. Խօսքիդ հաւատալը ապուշի մը գործ է ։

ՐԷՆ. Անշուշտ, պարոն, չքնաղ կին մըն է, և գուցէ իրեն անտարբեր չըլլայի . . . ։

ՄՕՐ. Տիկին Պէրթա Տարսին քեզ կը պաշտէ՞ ։

ՐԷՆ. Արդարև առջի բերան ինձ ալ անանկ թուեցաւ թէ զինքը պիտի սիրեմ . բայց սիրտս ուրիշի մը հետ կապուած տեսայ ։

ՄՕՐ. Ատոնք տղայական խօսքեր

են. Ես տետրակիս վրայ կը դաւեմ ամեն բան. աղէկ գիտեմ որ Պէրլթան քեզի համար բոլոքեր է, ինչպէս որ դուն ալ անոր համար. ուստի ինծի պէս բարեկամէ մը ատիկայ ծածկելդ չի վայլեր. բայց ինչ որ է նէ՝ գոցենք աս խօսքերը . . . հիմա հոս գալուս պատճառը ըսեմ քեզի . . . այս գիշեր Կոմսը խնջոյք մը կուտայ իր պալատը, և Կոմսուհին ինձմէ խօսք առաւ քեզ հոն տանելու ։

ՌԷՆ. Զքեզ պղտիկ չեմ ձգեր ։

ՄՕՐ. Արդէն աներկբայ էի այդմասին. երթանք ուրեմն ։

ՌԷՆ. Ո՛չ. հոն կը տեսնուինք ։

ՄՕՐ. Խօսքդ ինձ գրաւ. կեցիր բարով ։ (Մօրիս կ'երթայ) ։

## ՏԵՍԱՐԱՆ Զ.

ՌԷՆԷ (առանձին) ԹԻԹԻՆԵՐԸ (ետքը) ԿԱՍՊԱՐ

ՄԱՐ. Ո՞վ ուզեր է զիս ։

ԼԱՐ. Ո՞վ է զիս բնտռողը ։

ՊՐԻ. Զիս ալ ուզեր են ։

ԹԻԹ. Զիս ալ, զիս ալ . . .

ՌԷՆ. Ի՞նչ կայ . . . ի՞նչ ունիք . . . շուարեալ մէկ մէկու ետեւէ կը հանիք ։

ՄԱՐ. Դրախտին դրան աջին իմ անունս գրեր են, որ կը նշանակէ թէ զիս բնտռող մը կայ ։

ԼԱՐ. Նմանապէս իմ անունս ։

ԱՄԵՆՔԸ. Իմս ալ, իմս ալ . . .

ՄԱՐ. Ապրիլի ձուկ մը չըլլայ ։

ՊՐԻ. Ո՞վ է գրողը ։

ԱՄԵՆՔԸ. Ո՞վ, ո՞վ . . .

ԿԱՍ. (գալով) Ո՛վ . . . ես ։

ԱՄԵՆՔԸ. Օհ հօ՜, Կասպարը ։

ԿԱՍ. Ո՛հ. առտուանց 'ի վեր չէք գիտեր որչափ տեղ քալեցի և որչափ հոգնեցայ . . . Թախտական հրէային պէս վազելէն շունչս կտրեցաւ . . . ։

ԱՄԵՆՔԸ. Ի՞նչ կայ . . . դըժբաղդութի՞ւն մը . . . ։

ԿԱՍ. Այս առտու յանկարծ նամակ մը ընդունեցայ, բայց . . . տեսայ որ Բամէլային տիրուհւոյն տիկին Մարթային կողմէն գրըուած էր . . . . մէկ խօսքով կ'իմացնէր թէ մեր աղջիկը Բամէլան քովէն կը վռնտէր ։

ԱՄԵՆՔԸ. Վռնտե՜լ . . .

ՄԱՐ. Ի՞նչու համար ։

ՌԷՆ. Ի՞նչ պատճառաւ ։

ԿԱՍ. Պատճառ չկայ ։

ՄԱՐ. Ըսել է թէ մեր աղջիկը առանց գործքի մնաց հիմա ։

ԿԱՍ. Այո և առանց ապրուստի, վասըն զի բարերարը ամիս մը աշխատցնելէն ետքը՝ առանց ստակ մը տալու այդ նամակը կը խրկէ ինծի որով հեռաւոր տեղ ճամբորդութիւն ըրած ըլլալը կը յայտնէ ։

ԱՄԵՆՔԸ. Անօրէնութի՜ւն ։

ԿԱՍ. Բայց ես Բամէլան ազատեցի աղքատութենէ ։

ԱՄԵՆՔԸ. Կեցցե՜ս . . . և ի՞նչպէս ։

ԿԱՍ. Մտիկ ըրէք ինչպէս ։ — Բամէլան աղէկ կար կարել գիտէ. և թուաբանական չորս գործողութիւններուն ալ ծանօթ է. միտքս դրի որ իրեն խանութ մը բանամ և մէջը քանի մը տեսակ վաճառք դնելով՝ այսինքն քանի մը թաշկինակ, քանի մը ձեռնոց, վզնոց, գլխարկ եայլն յանձնեմ իրեն, որ ինքը աշխատի՝ ծախէ ու վաստկի ։



ՄԱՐ. Որոշմունք շատ բարի . . . բայց աս բանծդ ստկով կ'ըլլայ, ստկով ։

ԿԱՍ. Աղէկ գիտցար, թո՛ղ որ իմացնեմ . . . . խանութ մը բընտրեցի՝ գէշ աղէկ գոյս, հիմայ 600 ֆրանք պէտք է՝ խանութին տարեկան վարձքին համար և 2000 ալ վաճառքներուն համար, ընդ ամենը 2600 ֆրանք ։

ՄԱՐ. Հօ՜. այդչափ ֆրանք մըլ է կորսնցուցեր . . . որ . . .

ԿԱՍ. Համբերէ՜ . . . հիմակու հիմա 1600 ով ալ բանը կը լմննայ . . . . 600 ֆրանք . . . . խանութին վարձքին համար, և հազար ֆրանք կանխիկ տալով՝ 2000 ֆըրանքի վաճառք տալու բարեսիրտ մէկը գտայ. ուրեմն հիմա 1600 գտնալու ենք միայն ։

ԱՄԵՆՔԸ. Ի՞նչպէս ։

ԿԱՍ. Միթէ Բամէլան մեր աղջիկը չէ՞.

ԱՄԵՆՔԸ. Այո՛ ։

ԿԱՍ. Պէտք չէ՞ մի ուրեմն անոր երջանկութիւնը հոգանք.

ՄԱՐ. Այո, բայց . . .

ԿԱՍ. Եղբայր Թիպօն որ հիմա՝ գալու ատենս ճամբան տեսնալով այս բանս ինձմէ լսեց, իր ծոցէն 600 ֆրանք տալ խոստացաւ ։

ԱՄԵՆՔԸ. Կեցցէ եղբայր Թիպօ ։

ԿԱՍ. (կ'երգէ)

Կեցցէ Թիպօ
Հայր մեր արդոյ
Կեցցէ Թիպօ
Արժան սիրոյ.
Թիթի Թիպօն է մեր հայր
Մեր ամենուն բարերար
Որքան մենք զանի սիրենք
Ա՛լ եւելունի արժէ.

Կեցցէ Թիպօ եայլն
Թիթի Թիպօն բարերար
Աղքատները կը հոգայ
Հիւանդ ըլլաս կամ թշուառ
Կը փրկէ՝ դարման կուտայ.
Կեցցէ Թիպօ եայլն.

Եղբայրք, բանը 1500 ֆրանքին վրայ մնաց. աս ալ մենք տալու ենք . . . ես իմ կողմանէս 30 ֆըրանք կուտամ . . . . հա՜ նայիմ, դուք ալ երեւցէք, քանի՞ք խոստնեցէք, մեր ամենուս ալ պարտքն է . . . արդէն վաթսուն հոգիի չափ կանք . . . ամեն մէկերնիս ամիսը մէյմէկ ֆրանք տալու արդէն պարտաւոր ենք, որ տարին 12 ֆրանք ըսել է. ասոր վրայ ութ մըն ալ աւելցնելով կրնաք կանխիկ 20 ական ֆըրանք տալ. և այսպէս մեր աղջըկանը երջանկութեան պատճառ ըլլալու ամենաքաղցր բերկրութիւն կ'ունենանք. ուրեմն ձեզ տեսնամ եղբարք . . . հա՜ նայիմ մէկ, երկու, իրեք ։

ՄԱՐ. Ես իմ կողմանէս չեմ քաշուիր ։

ԼԱՐ. Ինծի որ մնայ, շատ աղէկ ։

ՊՐԻ. Ես ալ կուտամ, ես ալ ։

ՈՒՐԻՇ ՄԸ ։ Ես ալ, ես ալ ։

ԿԱՍ. Սիրտ ունեցողները ձեռքերնին վեր վերցնեն ։

ՄԱՐ. Ես երկու ձեռքս ալ կը վերցնեմ ։

ԱՄԵՆՔԸ. Ես ալ, նոյնպէս.

ՌԷՆ. Կեցցէ՜ն բարի ընկերներս . . . ես ալ ահա կը խոստանամ ձեզի պակասը տալու ։

ԿԱՍ. Կեցցես Պ. Ռէնէ ։

ԱՄԵՆ ՔԸ. Կեցցէ՜ ։

## ՏԵՍԱՐԱՆ Է.

### ԱՌՋԻՆՆԵՐԸ ԵՒ ԹԻԳՕ

ԹԻԳ. Ի՞նչ է նայիմ... ի՛նչ խոր անցում է.

ԿԱՍ. Ուրախութիւն... երջանկութիւն.... առաջարկութիւնս ընդունեցաւ:

ԹԻԳ. Շատ աղէկ, աղւոր, ազւոր որդեակներս... և դու սիրելիդ իմ Կասպար, դու ալ անշուշտ քու առաքինութեանդ վարձքը պիտի առնես, վասն զի Բամէլյին համար մինչև անգամ ինքզինքդ վտանգի մէջ դրեր ես:

ՌԷՆ. Ի՞նչպէս:

ԹԻԳ. Հապա՞... Մարսիլեայէն հոս գալէն 'ի վեր երբեք ցորեկ ատեն դուրս ելած չէր, և ահա այսօր առաջին անգամն է՝ որ ելաւ:

ՌԷՆ. Ի՛նչ առաքինութիւն:

ՄԱՐ. Ի՛նչ բարեսրտութիւն:

ՌԷՆ. Երանի անոր՝ որ քեզի պէս եղբայր մ'ունի:

ԹԻԳ. Յուսամ թէ ալ այսուհետև ամէն օր դուրս կ'ելլես, տեսար որ վախու բան մը չկայ:

ԿԱՍ. Ո՛հ անանկ կը կարծես դու, մէյմ'ալ ինծի հարցուր... երբոր փողոցը բերուսոր անցաւորաց մէջ՝... կարծես ամէնքն ալ ինծի կը նայէին և որպէս թէ ամէնքն ալ զիս կը ճանչնային ահն ու սարսափը սիրտս մի վրաս, սկսայ վազել, բայց կրցա՞ գալել, ծունկունքներս բռնուեցան, շունչս կտրեցաւ, կը կարծէի թէ ամէն ետևէս գալողներ ինծի կը հետևէին. դիպուածով մէկը եթէ ինծի դպչէր. կը կարծէի թէ խեղճն զիս պիտի բռնէ: Նոյն միջոցին... յանկարծ անդիէն փառաւոր կառք մը կանցնէր... կարծես թէ սպասաւորները աչքերս դէպ 'ի կառքը քաշեցին... ա՛հ ի՛նչ տեսնամ... քիչ մնաց որ խենթենայի:

ԹԻԳ. Անշուշտ ատենապետն էր կառքին մէջը... հէ, հէ, հէ...

ԿԱՍ. (ցած Թիգօյին) Այո՛, դարձեալ տեսայ: (Այս միջոցին ՌԷՆԷՆ կ'երթայ):

ԹԻԳ. Զո՞վ:

ԿԱՍ. Անիկա՛:

ԹԻԳ. Անիկա՞.

ԿԱՍ. Այո՛ մեռածը, խեղդուածը... իմ կինս...

ԹԻԳ. Մի՛ խենթենար դարձեալ այդ քու երևակայութիւնդ է...

ԿԱՍ. Մեծէր ասիկա, իրաւցնէ կը խենթենամ.... բայց այնչափ շուտով անցաւ կառքը՝ որ ատեն չմնաց... ծառի մը կռթնեցայ որ չիյնամ:

ԹԻԳ. Խեղճ Գասպար, կ'երևայ թէ խմած էիր:

ԿԱՍ. Ո՛հ, ոչ, խմած չէի, հոգիս Թիգօ...

ԹԻԹԻ ՄԸ. (գոչէ) Կասպար:

ԿԱՍ. (վախով) Հէ՛, ի՞նչ կայ:

ԹԻԹԻ. Քեզ կուզեն:

ԿԱՍ. Ո՞վ:

ԹԻԹ. Չգիտեմ... մարդ մըն է:

ԿԱՍ. Ո՞վ պիտի ըլլայ... արդարութեան պաշտօնեայ մը անշուշտ:

ԹԻԳ. (ցած) Խե՛նդ ես:

ԿԱՍ. Ո՛հ, կը սարսափիմ:

ԹԻԳ. Մի՛ վախնար, գնա նայէ անգամ մը:



ԳՐԻ. (գոչէ) Կասպա՛ր, Կասպա՛ր, հասի՛ր...:

ԿԱՍ. Ահա՛, ահա՛...:

ԳՐԻ. Աղջիկ մը... աղջիկ մը... որ քիչ մնաց կառքի մը տակ մնալով ջարդ ու փշուր պիտի ըլլար՝ վախէն մարեցաւ ինկաւ:

ԱՄԵՆՔԸ. (դէպ 'ի դուռը վազելով) Աղջիկ մը, (ընդհանուր շփոթութիւն):

ԹԻԳ. Բամէլյան չըլլայ:

## ՏԵՍԱՐԱՆ Ը.

Առաջինները և ԲԱՄԷԼԱ զոր ՌԷՆԷՆ թևին մէջ առած կը բերէ:

ԳՐԻ. Խեղճ աղջիկը.... քիչ մնաց որ...:

ՌԷՆ. Մի՛ վախնաք... ձեռքը բռնելու ատեն ունեցայ, աղէկ վրայ հասայ, և ասոր եղեր որ մէկ տեղը չվիրաւորեցաւ, միայն վախցաւ... քիչ մը ջուր տուէք, հերիք է.. և առաւել բան մը չի կայ:

ԱՄԵՆՔԸ. Ջո՛ւր... ջո՛ւր... (Կասպար ներս կը վազէ):

ՌԷՆ. Ահա՛ արդէն իր աչքերը կը բանայ:

ԹԻԳ. Բամէլյա՛... աղջիկս...:

ԲԱՄ. Ո՛հ Թիգօ... եղբայրս... ո՞վ զիս փրկեց:

ԹԻԳ. Պ. Ռէնէն... մեր բժիշկը... մեր բարեկամը:

ԲԱՄ. Ո՛հ, պարոն, կեանքս ձեզի կը պարտաւորիմ... առանց ձեզի... ա՛հ առանց ձեզի հիմա մեռած էի: (դողդողալով կը լայ)

## ՏԵՍԱՐԱՆ Թ.

Առաջինք ՊԵՐԹԱ (ետևէն ժողովուրդը)

ՊԵՐ. (ժողովրդեան) Է՛յ ի՛նչ կայ, ի՛նչ եղաւ որ... դուք ի՛նչ խռար կ'անցնիք. ո՞ւր է նայիմ խաս աղջիկը, ահա ողջ առողջ է:

ՌԷՆ. Ո՛հ տիկին, քիչ մնաց որ ճզմուէր:

ՊԵՐ. (շարժմունքով մերժելով) Պարոն Ռէնէն հոս. (բարձր) Հրամանքնիդ էք պարոն... ձեզ տեսնելու համար առանկ դիպուածի մը սպասելու է եղեր... (Բամէլյային) աղջիկս, կարծեմ թէ հագուստդ քիչ մը ճմռկեցաւ, ահա քեզի տակ... առ աս քսակը, և նոր մը շինել տուր: (ժանեկ մը կուտայ):

ԲԱՄ. Տիկին... (ոտք կ'ելլէ ժանեկը ծոցէն կ'իյնայ՝ և Ռէնէ կ'առնէ գետնէն):

ԹԻԳ. Սատկած Բամէլյային... ի՛նչ ըսել է... գիտցիր որ մեր աղջիկը մուրացկան չէ:

ՌԷՆ. (ցած Պերթային) Տիկին, թէ որ անոյշ խօսք մը ըսէիք՝ ըստակ տալէն աղէկ կ'ըլլար:

ՊԵՐ. Ալ հոս տեղ գործք մը չունիք Պ. Ռէնէ, կը խնդրեմ, թևերնիդ ինծի տուք ու մինչև կառքս տանիք զիս:

ՌԷՆ. Շատ աղէկ տիկին.... երթանք: (ին փակուի ատէն Կասպար յետոյ առանով մը կու գայ, ու Պերթան փնտռելով կը շարժուի):

ԿԱՍ. (որուն յետոյէն առանը կ'իյնայ) Տէր աստուած... ի՛նչ կը տեսնեմ... կինկանս ուրուականն է ա՛հ... (կը մարի. — վարագոյր:)

# ԱՐԱՐՈՒԱԾ Բ.

## ՊԱՏԿԵՐ Ի.

## ՓԱՌԱՒՈՐ ՍԵՆԵԱԿ ՄԸ

### ՏԵՍԱՐԱՆ Ա.

ՔՕՆՍԹԱ՛Ն *աթոռի մը մէջ ընկղմած սիկառ կը ծխէ, եւրը ԺՒՍԹԻՆ*

ՔՕՆՍԹԱՆ (կ'երգէ)
Սրտեղ նաւիմ
Քի՛չ մը հանգչիմ
Բերնէս լեզուս
Ընկած է դուրս
Շունչըս պակսած
Թոքըրս ցամքած
Հոգնած և հէգ
Վաստակաբեկ.
Ի՛նչ դէշ վիճակ ծառայել.
Վեր վար երթալ միշտ վազել
Թէ և ձիւնէ՝ անձրեւէ
Գործն ըղձառան բարեւէ ։

(Դրսէն զանգակի ձայն կու գայ) զրնկ. զրնկ . . . մի՛ կարծեր որ անգէս շարժիմ. Նայիմ սա օրագիրը ի՛նչ կը գրէ . . . քաղաքական լուրերուն տեղեկանանք . . . . (կրկին զանգակի ձայն), ալ համբերութիւնս կը հատնի . . . օրագիր կարդալու ան գամ հանգիստ չեն ձգեր մարդը ։

ԺՒՍ. (գալով) Քօնսթան, դուն դռնին ձայնը չի լսեցի՞ր . . . կոմսուհին քեզ կը կանչէ ։

ՔՕՆ. Ես ալ կ'երթայի ։

ԺՒՍ. Օրագի՞ր կարդալով ։

ՔՕՆ. Գիտե՞ս ինչ է ըսածը ։

ԺՒՍ. Կարծեմ կար կարող կինկան պիտի խրկէ. այս իրիկուան հանդէսին համար պատրաստած շքեղ զգեստը ուշանալուն համար գնացիր որ շատ բարկացած է ։

ՔՕՆ. Միշտ կը բարկանայ, կարծես բարկութեան չաստուածուհին է տիկինը. անանկ որ եթէ համարձակէր՝ մինչեւ անգամ ըզմեզ կը ծեծէր ։

ԺՒՍ. Ցիրուցի սա վիճակը դիմանալու բան չէ. ծառայ ենք իրաւ, բայց մենք ալ մարդ ենք, հոգի ունինք, և մեր վիճակին համեմատութեամբ պատիւ կը կենք. անանկ որ երթալու ըլլայ, չտալը ես հաշիւս պիտի կարեմ ։

ՔՕՆ. Ի՞նչ անմիտ ըը խօսք. մեզի համար պատիւ բառը ի՛նչ բան է. տեղի՛ն նայինք, տեղի՛ն. իրաւ է թէ կոմսուհին խիստ է՝ անտանելի է՝ բայց սոր հետ մեկտեղ կոմսն ալ բաւական առատաձեռն է. մէկ կողմէն տիկինը կը պոռայ կը յանդիմանէ, միւս կողմէն կոմսը փոխադարձ կը վճարէ. իմէ թէ ըլլայ ծեծեր ալ ի՛նչ կ'ուզէի. մէկ կողմէն ծեծ կ'ուտէի՝ միւս կողմէն կուտ կ'առնէի ։

ԺՒՍ. Այո՛, քիչ շատ իրաւունք կու տամ ըսածներուդ. միայն սա կայ որ՝ մեր տէրն ալ այնչափ ընդունելի մարդ մը չերեւար ինծի ։ Ատեն ատեն անանկ շուարեալ աչքերով կը նայի, անանկ մը տխուր և բարկացած կ'երեւայ որ՝ դիմացն ելլելու կը դողամ ։

ՔՕՆ. Ինծի ալ կու գայ թէ մեր տէրը ընդունելի մարդ մը չէ ։ Իսկ կոմսուհին ալ է, ի՛նչ է, ուսկից եկաւ, ամենեւին չըգիտցուիր, և իրեն տիկին Տարսի կը կոչենք, բայց (ցած) մեր տիրոջը կինն ըլլալուն ամենեւին ստոյգ չեմ ։

ԺՒՍ: Լաւութիւն . . . .

### ՏԵՍԱՐԱՆ Բ.

ԱՌԱՋԻՆՆԵՐԸ ԵՒ ՊԷՐԹԱ

ՊԷՐ. (Ներսէն պոռալով կու գայ). Քօնսթա՛ն, Ժիւսթի՛ն, պաթխաթ ո՞ւր էք ։

ԺՒՍ. և ՔՕՆ. Տիկի՛ն . . . ։

ՊԷՐ. Երկու ժամ է՝ որ զանգակը կը զարնեմ, խուլցե՞ր էք, ի՛նչ էք եղեր, անզգամներ ։

ՔՕՆ. Չի լսեցինք ։

ՊԷՐ. Ո՞ւր է շնչազգեստս՝ նայիմ. ժամէ մը հրաւիրեալները կու գան՝ և տակաւին ես հագուած չեմ ։

ԺՒՍ. Պաթխաթը գնաց կար կարող աղջկան, երթամ նայիմ անգամ մը ։

ՊԷՐ. Շո՛ւտ ըրէ ։

ԺՒՍ. (Մեկնելով) Աս ի՛նչ անտանելի կին է ։

### ՏԵՍԱՐԱՆ Գ.

ԺՒՍԹԻՆ, ՊԷՐԹԱ

ՊԷՐ. (Հայելիին նայելով) Տէ՛ր Աստուած, աս ի՛նչ երես է . . . աս ծաղիկները գլխուս չեն յարմարիր Ժիւսթին ։

ԺՒՍ. Հրամմէ ։

ՊԷՐ. Եկուր նայիմ, քանի որ աս կերպարանս երեսիս վայլեցնես ։

ԺՒՍ. Շատ աղէկ ։

ՊԷՐ. Չէ՛, չէ՛, աստանկ չըլլար . . . ձգէ՛, ձգէ՛, ձեռքերդ բան չիգար ։

ԺՒՍ. Այո՛, տիկին ։

ՊԷՐ. Խենդ մըն ես դուն ։

ԺՒՍ. Այո՛, տիկի՛ն ։

ՊԷՐ. Լիրբ մը . . . ։

ԺՒՍ. Այո՛, տիկին ։

ՊԷՐ. Գլխի՛ լաճս. (կը կարէ զանի) ։

ՏԱՐ. (Ներսէն) Պէրթա՛ ։

ԺՒՍ. (զարհուրելով) Ահ, տէ՛ր իմ, տէր իմ . . . ։

ՏԱՐ. (Ապշութեամբ և նշան մը ընելով) Դուրս ել, Ժիւսթին ։

ԺՒՍ. (Մեկնի երթալով) Ահա՛ գանէ երկու ոսկի վաստկեցայ ։

### ՏԵՍԱՐԱՆ Դ.

ՊԷՐԹԱ, ՏԱՐՍԻ

ՊԷՐ. (կը նստի) Չեմ հասկընար ի՛նչ պատճառաւ միշտ [երբոր սպասաւորներուս] հետ կռուելու ըլլամ կու գաս գլխ կ'արգիլես ։

ՏԱՐ. Կը՞նը . . . ահ սիրելի Պէրթա այդ խօսքը անտեղի է. մարդ միայն իր հաւատարին հետ կրնայ կռուիլ. իսկ ՚ի պատիւ ծառաներուն՝ կը վանենք զանոնք ։

ՊԷՐ. Ի՛նչ, դա՞ս մըն է որ կու տաս ինծի ։

ՏԱՐ. Ո՛չ ։

ՊԷՐ. Վանե՞լ . . . այո՛, անշուշտ քեզի համար վանել բառը հնչելը դիւրին է. մարդ մը որ առանց իր կինը ձգեց. անշուշտ դիւրաւ կրնայ ծառայի մը ճամբայ տալ ։

ՏԱՐ. Կ'աղաչեմ Պէրթա, իմ անցեալ դէպքերս մի՛ յիշեցներ ։

ՊԷՐ. Այո՛, չէք ուզեր որ յիշեմ, որպէս զի դուք ալ խղճա չըլլաք. անանկ չէ՞ ։

ՏԱՐ. Ո՛հ Պէրթա, չես մտածեր

որ այդ խօսքերդ զիս կը վշտացը-
նեն. արդէն գիտես թէ քեզ որ-
չափ կը սիրեմ, և լաւ ևս գիտես
թէ սիրուհւոյ մը հայրական որ-
չափ սաստիկ է։ Այո՛ տեղի ունիք
զիս մեղադրելու, վասն զի բո-
լոր աշխարհք կը մեղադրէ զիս,
կարծելով թէ իմ ամուսինս և
իմ մէկ հատիկ զաւակս՝ աղջիկս
անէս վանեցի՝ հեռացուցի և
կամ մեռուցի. ո՛հ, ահա այս
զաւն յիշատակն է՝ որով կենացս
օրերը կը հալին ու կը մաշին։
Աւա՜ղ, չկայ ապացոյց մը՝ որով
կարենամ հաստատել իմ անմե-
ղութիւնս. բոլոր աշխարհք այս-
պիսի անագորոյն անգթութեան
մը գործադիր կը կարծէ զիս,
բայց գիտէ Երկինք թէ անմեղ
եմ։ Ուստի սիրելիդ իմ Պերթա,
դու ես միայն իմ այս ցաւոյս
մխիթարութիւնն ու սփոփանքը,
քու քովդ կգտնամ մխիթարութիւն
գտնալ իմ անհնարին վշտացս,
քու արփիադեղ դիմացդ փայլ-
մամբ միայն կը փարատին սրտիս
տրտմութեան և սգոյ թանձր
մարախուղը. և ահա քեզ ձանչ-
նալէս 'ի վեր՝ և զքեզ սիրե-
լէս 'ի վեր է որ երբեմն ժպիտ
մը շրթանցս վրայ կ'երևայ. և
երանի, բիւր երանի էր ինձ եթէ
մինչ տանիկ ապրէի. այո մինչ
մինչ քու քովդ։ (Յետոյ կը պագնէ)

ՊԷՐ. (Ժամացոյցին նայելով Մեկուսի)
Արդեօք պիտի գա՞յ։

ՊԷՐ. Եթէ գիտնայիր՝ որչափ
գեղեցիկ ես։

ՊԷՐ. ([illegible]) Իսկ ես ինք-
զինքս շատ տգեղ կը գտնամ։

ՏԱՐ. Տգե՞ղ ... ի՛նչ կ'ըսես ...
երանի՜ թէ՝ ամէն 'կանայք քեզի
պէս տգեղ ըլլային. ամէնն ալ
գեղեցիկ պիտի ըլլային։ Սակայն
աղէկ միտքս ինկաւ, գիտե՞ս՝ ի՛նչ
կայ, սիրելիս ...։

ՊԷՐ. Ի՞նչ։

ՏԱՐ. Կերևայ թէ շատ հիւանդ
եմ։

ՊԷՐ. Դո՞ւն։

ՏԱՐ. Այո՛, այո ... երեկ մեր
բարեկամ բժիշկը պարոն Րէնէն
կ'ըսէր ...։

ՊԷՐ. Րէնէ՞ ... (Մեկուսի) ո՜հ
... (Բարձր) և ի՛նչ կ'ըսէր։

ՏԱՐ. Զիս կ'ըստիպէր՝ ձմեռը
Նիս անցընելու։

ՊԷՐ. Նի՞ս երթալ։

ՏԱՐ. Այո՛, ի՛նչ կ'ըսես ասոր։

ՊԷՐ. Ի՞նչ կրնամ ըսել, քանի
որ առողջութեանդ համար է։

ՏԱՐ. Շնորհակալ եմ սիրելիս։
Բայց իմ առողջութեանս հոգ-
տանելէ աւելի քու երջանկու-
թեանդ վրայ կը հոգամ. կը մը-
տածեմ որ զքեզ Նիս տանիլը ամ-
պամած հորիզոնի մէջ թաղել է։

ՊԷՐ. Շնորհակալ եմ։ (Մեկուսի)
արդեօք Րէնէն պիտի գա՞յ։

ՏԱՐ. Բայց և այնպէս՝ մի կար-
ծեր թէ այսու մեծ զոհ մ'ըրած
ըլլամ քեզի ... բժիշկին բանծնե-
րը բանի տեղ չեմ դներ. և ի՛նչ-
պէս կրնամ հաւատք ընծայել
անոր խօսքերուն՝ երբ ես ինք-
զինքս բոլորովին աղէկ կը գտնամ
... թող որ այս իրիկուն այս բանիս
վրայօք հետը խօսինք, և իւր ան-
ձունի բժշկութեանը վրայ խըն-
դալով քիչ մը զբօսնունք։

ՊԷՐ. Ըսել է թէ պիտի գայ։

ՏԱՐ. Անտարակոյս։



ՊԷՐ. Եւ անշուշտ իր բարեկամ
Մօրիսին հետ։

ՏԱՐ. Մօրիսի՞,

ՊԷՐ. Այո՛։

ՏԱՐ. Ոչինչ մարդ մը։

ՊԷՐ. (Մեկուսի) Մօրիսէն կաս-
կած ունի. (Բարձր) Մօրիսին չե՞ս
հաւնիր, և սակայն շատ սիրուն
կ'երևի ինձ։

ՏԱՐ. Իրա՞ւ։

ՊԷՐ. Իմ ամենէն քաջ պարա-
կիցս է։

ՏԱՐ. Ստոյգ եմ թէ քեզի սիրա-
հարեալ է։

ՊԷՐ. Չ'գիտեմ, բայց թող ա-
նանկ ըլլայ։

ՏԱՐ. Եթէ գիտնայի որ ...։

ՊԷՐ. (Խնդալով) Հա՜, հա՜, հա՜։

ՏԱՐ. Մի՛ խնդար, Պերթա, գիտ-
ցիր որ այդ բանը կարծածէդ ա-
ւելի կը դպչի ինծի։

ՊԷՐ. (Ծաղրագին) " Քեզ ձանչ-
նալէս 'ի վեր, քեզ սիրելուս օ-
րուընէ 'ի վեր թեթևագոյն ժը-
պիտ մը շրթանցս վրայ կ'երևին՝
և երանի բիւր երանի և այլն և-
այլն " կ'ըսէիր քառորդ մ'առաջ
մոռացկոտ պարոնս։

ՏԱՐ. Ներէ սիրելիդ իմ։

ՊԷՐ. Քիչ մնայ որ թաղութեա-
նըս արժանի չպիտի ըլլայիր։

ՏԱՐ. Ո՛հ, չես գիտեր Պերթա
որչափ անտանելի են ինծի այն
թեթևսոլիկ պարոնները, այն դա-
տարկախօսները՝ որոնք անխտրա-
բար ամէն կնոջ կը սիրահա-
րին, և սիրոյ բառը ամէն տեսակ
խօսակցութեան մէջ կը գործա-
ծեն, ոչ հաւատք ունին՝ ոչ խըղ-
ճմտանք, ոչ բարեկամութիւն կը-
ճանչնան, ոչ պարտաւորը՝ ան-
պատիւէն, ոչ պարկեշտը՝ ան-
պարկեշտէն որոշել գիտեն. և ա-
մէն տեսակ անկարգութեանց
տեղի տալով խաղաղ ու պարկեշտ
ընտանեաց պատիւը կ'արատեն,
հանգստութիւնը կը վրդովեն.
նպատակնին իրենց յօժարու-
թեանցը հաճիլ է։

ՊԷՐ. Ա՜հ, հա՛. կ'երևայ թէ նա-
խանձոտ բնաւորութիւն մ'ու-
նիս։

ՏԱՐ. Այո՛, նախանձոտ եմ, և
վա՜յ անոր՝ որ կը համարձակի ..։

ՊԷՐ. Ի՞նչ կ'ընես։

ՏԱՐ. Կը մեռցնեմ. . ո՛չ, մե-
կէն կը մեռցնեմ ... ի՛նչ, Պեր-
թա, կը դողա՞ս։

ՊԷՐ. Ե՞ս ...

ՏԱՐ. Այո՛, և դեռ կը դողան
շրթունքներդ ... ի՛նչ կը նշա-
նակէ այդ սոսկումդ։

ՊԷՐ. Եւ միթէ կարո՞ղ եմ այդ-
սպառնալիքները անտարբեր կեր-
պով մտիկ ընել. ո՛հ, սարսափելի
մարդ մըն ես եղեր, և գիտցիր
թէ ես ինքնին ինծի համար կ'ըս-
կըսիմ վախնալ։

ՏԱՐ. Քեզի՞ համար ... ինչո՞ւ։

ՊԷՐ. Ինչո՞ւ ... վասն զի այդ-
կասկածներովդ պատճառ կ'ըլլաս
որ այսուհետև չհամարձակիմ
մէկու մ'ալ երեսը շիտկ շիտակ
նայելու, հետս ամէն խօսողները
աչքիդ իմ սիրահարս պիտի երե-
ւան ուրեմն։

ՏԱՐ. Մի՛ վախնար, չեմ սխալիր
աչքս սուր է։

ՊԷՐ. Իրա՞ւ։

ՏԱՐ. Այո՛, և այն ամէն սիրուն
պարոններուն մէջ՝ որոնք բոլոր-
տիքդ կը ծփան, միայն մէկը կայ

որ կը սիրեմ ։

ԳԻՐ. Ո՞վ ։

ՏԱՐ. Րէնէն ։

ԳԻՐ. (Ճէվիր) Ա՜հ ։

ՏԱՐ. Բայց աղջիկ մը կը լսեմ . . կարծեմ հրաւիրեալք կուգան ։

ԳԻ. Ո՜հ, եկան, և ես դեռ պատրաստ չեմ ։

ՏԱ. Գնա՛ պատրաստուէ ուրեմն, ես ալ երթամ հանդիսականաց արժանաւոր ընդունելութիւն մը ընեմ ։

# ՊԱՏԿԵՐ Գ.

(ՐԷՆԷ)

## ԼՈՒՍԱՒՈՐԵԱԼ ԵՒ ԶԱՐԴԱՐՈՒՆ ՍՐԱՀ ՄԸ

### ՏԵՍԱՐԱՆ Ա.

ՄԱՔՍԻՄ, ԼՕՍԱՆ, ՄՕՆՆԻԷ, ԱԼՊԵՐԹ ՄՕՐԻՍ ԵՒ ՀՐԱՒԻՐԵԱԼՔ

ԽՄԲԵԱԿՔ.

Կեցցէ՛ հանդէս և խնջոյք
Որոնց ձեռքէ՛ն կը տեղան
Զուարճութիւն և հաճոյք
Տխուր սրտից հեգ մարդկան ։
Կեցցէ՛ն խրախճանք կեցցէն միշտ
Որք մահացուաց ՚ի սրտէն
Ծանրաբեռնեալ ցաւն ու վիշտ
Խլէ՛ն ՚ի բաց յարմարէն .

ԼՕՍ. Ցիրաւի, պարոններ . այս տունը պալատ մ՚ն է . և կամքին նման հիւրընկալ չ՚կայ ՚ի Փարիզ ։

ՄՕՆ. Այո՛, բայց շատ տաք կը նէ կոր հոս . . . ալ չեմ կրնար շունչ առնել ։

ԼՕՍ. Շնորհակալ եմ պարոններ որ զիս այս տունը բերիք, և կամ՚ մին ներկայացուցիք ։

ՄՕՆ. Նայէ՛ որ իւր բարեկամութիւնը ստանաս . հարուստ այրիէ, բարի և քաջ մարդ մ՚ն է ։

ԼՕՍ. Ամերիկացիք սովորաբար աղէկ մարդիկ կ՚ըլլան ։

ՄԱՔ. Կամը Ամերիկացի չէ, Փարիզցի է, բայց 15 տարի առաջ ինծի հետ երկար ատեն Ամերիկա գնաց կեցաւ ուր անհուն հարստութիւն մը ստացաւ ։

ԱԼՊ. Պարոննե՛ր ։

ՄՕՆ. Ի՞նչ կայ ։

ԱԼՊ. Զեզի լուր մը տամ ։

ՄԱՔ. Ի՞նչ լուր ։

ԱԼՊ. Նոր բան մը, նոր ։

ԱՄԵՆՔԸ. Ի՞նչ, ի՞նչ ։

ԱԼՊ. Կամուհին մեկու մը սիրահարեալ է ։

ԱՄԵՆՔԸ. Պա՜հ ։

ԼՕՍ. Իմ կարծիքս ալ այդ է ։

ՄՕՆ. Իսկ ես՝ ստոյգ եմ ։

ՄՕՐ. Արդեօք ո՞վ է այն երջանիկ մարդը ։

ԱԼՊ. Գժբաղդաբար ես չեմ . . բայց իրար մ՚ացնէք պարոններ, դուք ալ չէք ։

ՄՕՆ. Ես գիտեմ, ո՞վ է ։

ԱԼՊ. Ո՞վ ։

ՄՕՆ. Իր երիկն է ։

ՄԱՔ. Մօննիէ, դու շատ պարզամիտ ես . նայէ՛ որ երբեք չի կարդուիս ։

ՄԱՔ. Բայց վերջապէս ո՞վ է ։

ԱԼՊ. Շշտ . . . Րէնէն է ։



ԱՄԵՆՔԸ. Րէնէ՜ն ։

ՄՕՆ. Մոքէս անցաւ ։

ԱԼՊ. Լռութի՜ւն ։

### ՏԵՍԱՐԱՆ Բ.

ԱՌՋԻՆՆԵՐԸ ԵՒ ՐԷՆԷ

ՐԷՆ. (Ալլէրինի յէօ-ը կէօրիւճէ) Բարև կամս . . . Պարոնայք ։

ԱԼՊ. Սիրելի Րէնէ . ճիշդ քու վրայօքդ կը խօսէի բարեկամացս հետ ։

ՐԷՆ. Իմ վրայօքս, ի՞նչ էր խօսածդ, անշուշտ գէշ բաներ . ինչպէս որ ընտիր բարեկամաց մէջ սովորութիւն է, անանկ չէ՞ . . . բայց թողունք ատոնք և ըսէ նայիմ ո՞վ կայ, ո՞վ չիկայ հոս ։

ՄԱՔ. Արդէն գրեթէ սրահնե-րը բոլորովին լեցուն են . աչքդ չորս կողմը դարձուր, տե՛ս որ-չափ ազնուական ուսեր և տաղե-րու սէս փայլող որչափ ադամանդ-ներ կան ։

ՐԷՆ. Երթանք պտոյտ մ՚ընենք ։

Երա-ժշտ-ութիւն ։

### ՏԵՍԱՐԱՆ Գ.

ԲՕԼԻՍԱՐ (եարը) ՔՕՆՍԹԱՆ (ձանդփառականք կը պատին) ։

ԲՕԼ. (Ճին-ի) Աս ի՞նչ փառաւոր հանդէս, ի՞նչ հարստութիւն . . . Կամուհին զիս ուզեր է . անշուշտ կարևոր գործքի մը համար է . և անտարակոյս քանի մը հազար ֆրանքի վասն . . . (Քօնաթանին որ յէօ-ը . . . ) բարև բարեկամ ։

ՔՕՆ. Գաւաթ մը բօնչ չէք խմեր, պարոն ։

ԲՕԼ. Աղէկ ըսիր, քիչ մը պակսած. (Գա-աճ մը կը խմէ) . այս բօնչը խիստ լաւ է . (Էլլէրէ տ՚ալ կը խմէ) գուցէ քիչ մը թեթև . (Էլլէրէ տ՚ալ) բայց լաւ է, լաւ ։

ՔՕՆ. (Ճէկրա-ի) Կարծեմ աս մարդը առաջին անգամն է որ բօնչ կը խմէ ։

ԲՕԼ. Իմ կողմանէս այս տան վերաբերեալին ըսէ որ այս բօնչին մէջ քիչ մը աւելի ռոմ, չայ, շաքար ու լէմօն դնելու որ ըլլայ՝ կատարեալ կ՚ըլլայ . այսպէս ալ չար է՝ թէպէտ լաւ . բայց գուցէ սխալած ըլլամ, ու համը չեմ աղէկ առած . մէյ մ՚ալ նայիմ ։

ՔՕՆ. Համը նայելով չէք հասկնար, պարոն, խմեցէք, (Ճէկրա-ի) աս մարդուն ստամոքսը բաւական խոր ըլլալու է, և կամ ծակ ունի . (Բարձր) պարո՛ն, միթէ՞ հրաւիրեալ չէ՞ք ։

ԲՕԼ. Կամուհին տեսնելու եկայ . հանդէսին մասնաւոր հրաւիրեալներէն չեմ ։

ՔՕՆ. Հրաւիրեալ չէ՞ք . . . (Ճէկրա-ի) ըսել է թէ ծառայ է . (Բարձր խմելով) ուրեմն կենդանութեանդ ։

ԲՕԼ. Այո՛, աղէկ միտքս ձգեցիր . . . կենդանութեանդ (կը խմէ) խմելու մոռցեր էի ։

ՔՕՆ. Զգոյշ եղիր բարեկամ . . չ՚գինովնաս ։ (կը խմէ)

ԲՕԼ. Մի՛ վախնար ։ (կը խմէ)

ՔՕՆ. Ահա՛ կամուհին կուգայ . . . (Ճէկրա-ի) կծիկը քաշեմ ։

### ՏԵՍԱՐԱՆ Դ.

ԳԻՐԹԱ, ԲՕԼԻՍԱՐ

ԲՕԼ. Պատիւ ունիմ ձեզ բարեմաղթութիւններս մատուցանելու ձեզ ։

ԳԻՐ. Առաջնիս սուղ է . երկար ատեն զմեզ մէկ տեղ չ՚տեսնան ։



1001/9475

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ * Публичная Библиотека С.С.Р.А. 7/VI-1922 имени А. Мясникяна Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԲՕՂ. Կոմսին տոմսակները որոնք խրկեր էիք, առի քննեցի, շատ աղէկ են, կրնաք զանոնք ծախել, և ոչ ոք կրնայ արգիլել . . .

ՊԵՐ. Լաւ, անոնց վրայ վաղը կը խօսինք. արդ ուրիշ բան կայ հիմա որ կոմսը այս հարստութիւնը իմ վրաս դարձուց՝ ալ հետը ապրելու միտք չ'ունիմ։

ԲՕՂ. Հասկցայ. կ'ուզէք երթալ։

ՊԵՐ. Այո՛, բայց անցագիր մը պէտք է ինծի ։

ԲՕՂ. Այդ քիչ մը դժուար կերեւայ ինծի շատ դժուար ։

ՊԵՐ. Ստակը դժուարները կը դիւրացնէ . . . տասը հազար ֆրանք քեզի . . .

ԲՕՂ. Բաւական է. յանձն կառնեմ։

ՊԵՐ. Վաղը կուզեմ այդ թուղթը։

ԲՕՂ. Վաղը՝ կամ միւս օր ։ (Երաժշտութիւն)

ՊԵՐ. Բաժնուինք. դէպ 'ի հոս կ'ուգան ։ (Բօղ կը հեռանայ)

ՊԵՐ. (առանձին) Թէպէտ մէկ դիէն ամէն բան յաջող կ'երթայ, միւս դիէն սակայն Րէնէն վարմունքը փոխուած կը տեսնեմ և իր վրայ անանկ պաղութիւն մը կայ որ զիս կը սոսափեցնէ . . . պէտք է որ վաղը հետը տեսնուիմ . . . . թուղթ մը գրեր եմ իրեն որով զինքը կ'հրաւիրեմ . . . վաղը զիս անպատճառ գայ տեսնէ հոս. պէտք է որ սա թուղթը իր ձեռքը յանձնեմ ։ (կ'երթայ),

Երաժշտութիւն ։

## ՏԵՍԱՐԱՆ Ե.

ՐԷՆԷ (*ետքը*) ՏԱՐՍԻ ՈՒ ՄԱՔՍԻՄ

ՐԷՆ. (շփոթած կարդայ յետոյ նամակ մը առնէ)։ Այս նամակը որ կոմսուհին ձեռքիս մէջ ապրեցուց . . . ո՛հ, ո՛չ, պէտք չէ որ բանամ, ուրեմն պահեմ կամ այրեմ, վասնզի որչափ ալ զգուշացայ՝ ընդհակառակն՝ կոմսը տեսաւ . . . (Տարսի ներսէն եկած է՝ և Րէնէին յետոյ կը դիտէ՝ որ նամակը ծոցին մէջ կը ծրէ)։

ՏԱՐ. Պ. Րէնէ, կոմսուհին քեզի նամակ մը տուաւ՝ զոր ստուգապէս ես տեսայ ։

ՐԷՆ. Այո՛. կոմս ։

ՏԱՐ. Այդ նամակը պէտք է որ ինծի տաք ։

ՐԷՆ. Ներեցէք, չեմ կրնար ։

ՏԱՐ. Տուէք կ'ըսեմ։

ՐԷՆ. Անկարելի է, կոմս ։

ՏԱՐ. Թէ որ չ'տալու ըլլաք, պիտի ստիպուիմ բռնի առնել։

ՐԷՆ. Կոմսուհւոյն դէմ ունեցած կասկածնիդ անիրաւ է՝ այս նամակը ինքը գրած չէ ։

ՏԱՐ. Հապա ։

ՐԷՆ. Ես գրեցի յանցաւորը ես եմ, այո՛, այս թուղթը՝ որ գրեցի իրեն՝ և ոչ իսկ բացեր է. տես կոմս, դեռ կնիքը վրան է ։

ՏԱՐ. Ուրեմն այն մարդը՝ որում ամենայնիւ վստահ ըլլալով՝ 'ի բոլոր սրտէ կը սիրէի զայն մարդը որ դեռ՝ քիչ մ'առաջ կը գովէի, վատութեամբ իմ տունս մտեր է՝ պատիւս խաղ մը խաղալու ինծի։ Ցիրուի շատ հետաքրքիր եմ հասկնալու թէ յանդգնութեանդ աստիճանը մինչև ո՛ւր հասած է . . .



տո՛ւր սա նամակը պարոն ։

ՐԷՆ. Ո՛չ երբեք ։

ՏԱՐ. Վերջին անգամ կ'ըսեմ քեզի, տո՛ւր ։

ՄԱՔ. (մերձենալով) Պարոններ, կ'աղաչեմ։

ՏԱՐ. Թող ըլլայ. (Րէնէին վրայ կը յարձակի՝ որն որ նամակը ծրարին մօտենացնելով կը վազէ ու պատուհանէն կը նետէ). Վախեցիր . . . նեղացիր. քեզ պիտի մեռցնեմ անօրէն ։

ՐԷՆ. Պարոն, պատրաստ եմ հրամանացդ ։

## ՏԵՍԱՐԱՆ Զ.

ԱՌՋԻՆՆԵՐԸ ԵՒ ՊԵՐԹԱ

ՊԵՐ. (Մտնելով) Ո՞ւր ես պարոն, զիս կանչել կը հրաւիրես, ու քովէս անհետացած կ'ըլլաս ։

ՄԱՔ. Թողութիւն, կոմսուհի . . (Մեկնելով) ես էր պակաս ։

ՊԵՐ. (Մեկնելով) Մէ՞կնեցան (Բարձր) ինչ կը խօսիք . . . գաղտնի ։

ՏԱՐ. Րէնէյին հետ . . . գրեթէ կախ կը մնէինք, զիս կ'առնէ փախչէն երթալու հեռանալու . . . բայց մեծ ապերախտութիւն մը կ'ըլլայ ճիշդ հիմա՝ որ այսքան ընտիր բարեկամներ ստացայ ։

ՊԵՐ. (Մեկնելով) Բան մ'անցած ըլլալու է. (Բարձր) մեծ սրահը կ'հրամէ՞ք ։

ՏԱՐ. Ո՛չ տակաւին . . . բժշկին հետ քիչ մը պիտի խաղանք. (Րէնէին) անանկ չէ՞ ։

ՐԷՆ. Իրաւ է ։

ՏԱՐ. Մաքսիմ ալ իմ երկրորդս պիտի ըլլայ ։

ՄԱՔ. Մեծ սիրով։

ՊԵՐ. Յաջողութիւն կը բարեմաղթեմ ։ (Երթալով Մեկնի) պէտք է որ անցածը իմանամ. . .

ՏԱՐ. (Րէնէին) Ժամէ մը Թիթիներու փողոցը պիտի սպասեմ ձեզի ։

ՐԷՆ. Կը գտնուիմ, պարոն. (Մեկնի Երթալով) պէտք էր որ կոմսուհին ազատէի ։

ԵՐԳ.

Կեցցեն հանդէս և այլն ։ (Վարագոյր)

## ՊԱՏԿԵՐ Դ.

(ՄԵՆԱՄԱՐՏՈՒԹԻՒՆ)

ՓՈՂՈՑ ՄԸ—ՀԵՌՈՒԱՆՑ ԱՋ ԴԻՆ ՏԱՐՍԻՅԻՆ ՏԱՆ ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԸ ԿԸ ՏԵՍՆՈՒԻՆ ԼՈՒՍԱՒՈՐԵԱԼ—ՁԱԽ ԴԻՆ ԴՐԱԽՏԻՆ ԴՈՒՌԸ—ԳԻՇԵՐ ԿԸՆԷ ։

## ՏԵՍԱՐԱՆ Ա.

ԿԱՍՊԱՐ. ԹԻՊՕ. ԵՒ ԹԻԹԻՆԵՐԸ (*ձախ դիէն կ'ելլեն ձեռքերնին մէյմէկ լապտեր ու կռնակնին մէյմէկ կողով կամ տոպրակ շալկած են ։*)

ԿԱՍՊԱՐ (Կ'երգէ)

Լռեցէք
Լռեցէք
Ժամը զարկաւ կէս գիշեր
կէս գիշեր
Լռութիւն տիրեց 'ի տեղեր
'ի տեղեր
Փարիզու մէջ այս ատեն
այս ատեն
Մարդիկ քաղցր կեանք վայելեն
վայելեն

Ամէն տուն և որձանոց
որձանոց
Կը նորոգէն սրտի քոյ
սրտի քոյ
Աբբ և կանոյք միշտ զուարթ
միշտ զուարթ
Խրատու տան կարմիր վարդ
կարմիր վարդ
Կեցցէն խնճոյք և խնդում
Կեցցէ կարուն՝ տարի ու սէր
Կեցցէ Թիթիին եռանդուն
Փաւթաշեան աշխատասէր. (Կ'երգեն)

## ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՊԵՐԹԱ ԲՈԼԻՍԱՐ

ՊԵՐ. Մտադրե՞ս քամծիղ։

ԲՈԼ. Այո, պիտի կուլին։

ՊԵՐ. Պէտք է որ արգիլեմ այդ կռիւը։ Հոս պիտի գտնուին բոլոր։

ԲՈԼ. Այո, հոս գտնուելու ժամադիր եղան։ Բայց դուք զգուշացէք որ չձանձրանաք։

ՊԵՐ. Պիտի պաշտպանիմ, ու հարկ թէ ոսկին կուռերու մէջքերնին պիտի նետատիմ քամիներու համար։

ԲՈԼ. Սակայն տիկին, եթէ այս ընելու ըլլաք, յայնժամ կռիւը պիտի հանինայ՝ թէ ըէնէն կը սիրէք։

ՊԵՐ. Թող հանիշ, ըէնէն վեհանձնութեամբ իր կեանքը վտանգի մէջ կը դնէ ինծի համար, միթէ թողու՞մ որ ինծի համար մեռնի, ո՛չ, ոչ, ոչ։

Երաժշտութիւն։

ԲՈԼ. Ձայն մը կ'առնեմ։

ՌԷՆԷ (ներսէն կ'երգէ)

Բամէյա
Ինձ գթա.
Բամէյա ընդէր զիս
Չեն տեսներ քու աչեր
Է՞ր չըլթունքդ երեսիս
Չեն 'ի տար համբոյրներ
Բամէյա
Ինձ գթա
Բամէյա պատուհան
Շուտ եկիր մ'ուշանար
Տես քու կին սիրական
Քեզ տեսնել չի՞ ջանար.
Բամէյա
Ինձ գթա.

ՊԵՐ. Սիրահար մի՞ն է՞ որ սիրուհւոյն համար կը հառաչէ։ Մտիկ ընենք . . . պահուըտինք։

## ՏԵՍԱՐԱՆ Գ.

ԱՌՋԻՆՆԵՐԸ, ՌԷՆԷ, ՄՕՐԻՍ

ՌԷՆԷ (կ'երգէ)
Կը կնոջբիւն երգին։

ՊԵՐ. — Ի՞նչ կը տեսնեմ . . . ըէնէն է։

ՌԷՆ. Թող, թող վերջին անգամ տեսնեմ այն աղջիկը՝ որ կը յուսայի օր մը . . .

ՊԵՐ. (մեկուսի) Նոյն աղջիկը . . .

ՄՕՐ. (ըէնէին) Բայց եթէ քու երթաս՝ Թիթիները տաք պիտի երլեն՝ և մեծամասնութեանդ արգելք պիտի ըլլան, հապա պատիւդ։

ՌԷՆ. Թող կրեմ, պէտք է որ վերջին բարեւս տամ սիրուհւոյս։

Երգ, կրկնութիւն։

ՊԵ. (ցած) Տէ՜ր աստուած . . . երա՜լ է տեսածս, լսածս, ուրիշ մը կը սիրէ . . .

ԲՈԼ. (ցած) Թիթիներուն հոգեզուարճ։

ՊԵ. Հանկցա՜ . . . ո՛չ, վեհանձնութիւն . . .



## ՏԵՍԱՐԱՆ Դ.

ՏԱՐՍԻ, ՄԱՔՍԻՄ, ՌԷՆԷ, ՄՕՐԻՍ, ՊԵՐԹԱ, ԵՒ ԲՈԼԻՍԱՐ (պահուըտած։)

ՄԱՔ. Ահա՛ հոս են արդէն։

ՏԱՐ. Հեռուն չերթանք։

ՌԷՆ. Կամս, պատրաստ եմ։

ՄԱՔ. Բայց պարոններ, գիշեր ատեն՝ հոս մութ տեղ կռուիլ . . . այս բանիս դէմ կը կենամ, պէտք է վաղուան ձգել։

ՄՕՐ. Չէ պարոն, պատուոյ գործ մը ուշանալու չի գար։

ՄԱՔ. Վաղուան ձգելը՝ հեռուն ձգել չի սեպուիր, և ամէն տեղ սովորաբար իրիկուընէ որոշուած մենամարտութիւնը երկրորդ օրուան կը ձգուի։ Իսկ՝ նոյն գիշերը երկու կողմի անձինք իրենց տունը կ'երթան, հանդարտիկ կը նընջեն, միւս օրը լաւ մը ուտելէն և խմելէն ետքը՝ և խաղաղ սրտիւ՝ հանդարտաքայլ ժամադրեալ տեղին կ'երթան, ուր 'ի չնորհս բաղդին՝ կամ կը մեռնին՝ կամ կը մեռցնեն։

ՏԱՐ. Չէ պարոն. չէ, չեմ կրնար սպասել . . . վաղուան մնայ կ'ըսէք, միթէ սո՞րդ եմ թէ ինծի եղած նախատանաց հարուածին դիմանալով կարող ըլլամ մինչև վաղը ապրելու (ըէնէին) դու որ քժիշկ ես, պարոն, դուն գիտես թէ ի՛նչպէս կը տանջուիմ, և թէ մինչև առտու ամէն մէկ վայրկեան կը փախցուի որ արիւնս գլխ չխողդէ, ո՛չ, ոչ . . . մեռեալք չեն կրնար վրէժնին առնել, և ես այս վայրկենիս . . . ծնուրեմն, պատրա՞ստ ես, պարոն։

ՌԷՆ. Այո՛։

ՄԱՔ. Ահա՛ զէնքերը, պարոն։

ՊԵՐ. (մեկուսի) Հիմա չեմ արգիլեր . . . թող մեռնի, և վրէժխնդրութիւնս կրկին ըլլայ։

ՄԱՔ. Տեսէ՛ք պարոններ, և ոչ թուրերուն փայլը՞ կը տեսնուի։

ՄՕՐ. Իրաւ է թէ և ոչ աստղ մը կայ։

ՏԱՐ. Թող ըլլայ . . . և եթէ կուզէք՝ աչքերս անգամ գոցեցէք ես սոյդ եմ որ գլխ նախատողին կուրծքը անվրէպ պիտի գտնամ բայց վերջին խնդիր մը ունիմ ձեզմէ՝ պարոնայք, պէտք է որ այս մենամարտութեան պատճառը գաղտնի մնայ. և մէջերնիս մեռնի։

ԱՄԵՆՔԸ. Այո՛։

ՏԱՐ. Սկսինք։ (Այս միջոցին Կասպար յայտնը կը լլայ՝ որ յետոյ լապտերով երգելով կու գայ) կայնեցէք, մարդ կու գայ։

ՄԱՔ. Կարծեմ Թիթի մին է . . . (Կասպար գետինը քան փնտռելով կու գայ)։

## ՏԵՍԱՐԱՆ Ե.

ԱՌՋԻՆՆԵՐԸ ԵՒ ԿԱՍՊԱՐ

ԿԱՍ. (ինքնիրեն) Ի՞նչ մութ գիշեր է։

ՄԱՔ. Ո՛վ կայ հոն։

ԿԱՍ. (լապտերը վեր կ'առնէ) Ես եմ, ես . . .։

ՄԱՐ. Կեցիր, ի՞նչ կը փնտռես, ո՞վ ես, ո՞ւսկի կուգաս, ո՞ւր կ'երթաս։

ԿԱՍ. (վախնալով) Հէ՞ն . . . (մեկուսի) կարծեմ լաւս են։

ՄԱՔ. Շո՛ւտ ըսէ։

ԿԱՍ. Ձախ դին կ'ուգամ, աջ դին պիտի երթամ . . . գործաւոր

Թիմի եմ։

ՄԱՔ. Ի՞նչ կը փնտռէիր։

ԿԱՍ. Հնութիւնք... բարեկենդանի գիշեր է, և շատ մարդիկներ կան փողոցը... ուստի վրաներնէն ալ շատ բան կրնայ իյնալ։

ՄՕՐ. Մօտեցի՛ր։

ԿԱՍ. Ի՛նչ կուզէք ինծմէ։

ՄՕՐ. Մի՛ վախնար, բարի մարդ։

ԿԱՍ. (Քէնտի քէնտինէ) Ինծի բարի մարդ կ'ըսէ, և սակայն զիս չճանչնար։

ՄՕՐ. Ըստծնիս ըրէ, վարձքդ լման կը վճարենք... քիչ մը կեցիր հոս, լապտերդ վեր բռնէ, ու լոյս տուր մեզի։

ԿԱՍ. Ձեզի լոյս տա՞մ։

ՄՕՐ. Այո, այո. պարոնները մեջքերնին պատուոյ խնդիր մունին լուծելու, և ինչպէս որ կը տեսնես գիշերը շատ մութ է. ուստի աղէկ տեսն վրայ համար։

ԿԱՍ. Մենամարտութիւն մը... ի՛նչ խենդութիւն։

ՄԱՔ. Լռէ՛, և ըստծնիս ըրէ՛։

ԿԱՍ. Սա մարդը ամենևին քաղցրաբարոյ չէ. (Լօղօթրօղը Բէնէյին եբեօր չընոյէ՝ — ընճանըյօ։) Ի՞նչ կը տեսնեմ... Պ. Բէնէն... ի՛նչ, հրամանքդ էք որ կուզէք կռուիլ։ Բայց ես չեմ թողուր, ո՛չ... հասկցա՞ք Պարոններ։

ՄԱՔ. Աս ի՛նչ կըսէ։

ՐԷՆ. Պէտք է կասպար, անհրաժեշտ է այս բանը. և մարդ կարող չէ արգիլել։

ԿԱՍ. Սակայն...

ՏԱՐ. Կ'սպասեմ Պարոն։

ՐԷՆ. Սկսինք։

ՄԱՔ. (Կասպարին) լապտերդ վեր բռնէ։

ԿԱՍ. Ասանկ դժնդակ գործի մը ձեռնտու ըլլամ... ասանկ ահռելի տեսարանի մը ճրագ բռնեմ, ո՛հ՝ ոչ, ո՛չ երբէք։

ՄԱՔ. Կը հրամայեմ քեզ։

ԿԱՍ. Մ'աճապարեր Պարոն, ես քու ծառադ չեմ, որ այդպէս տիրաբար կը հրամայես ինձ։

ՐԷՆ. Իսկ ես կ'աղաչեմ քաղցրութեամբ։

ԿԱՍ. Կ'աղաչէ՞ք, ան ուրիշ խօսք... շատ աղէկ, ահա ես ալ կը հնազանդիմ, սակայն եթէ դողդղուն ըլլամ, մեղա կա՞յ։

ՄՕՐ. Ջանա՛ որ ձեռքերդ չի դողայ։

ՏԱՐ. Սկսինք, սկսինք, ալ բաւական սպասեցի. (Չըքարըրլար։)

ՊԷՐ. Սկսան։ (Կօղէ Թէքէրնէին նէթօ—էր։)

ԲՕԼ. (Արգիլելով) Ի՞նչ կընես։

ՐԷՆ. Ա՜հ... (Մօխալիֆին Գիրէր Կ'ինայ։)

ՄԱՔ. Վիրաւորեցաւ։

ԿԱՍ. (Լօպտէրը Կըյգէ) Ո՜հ, Պ. Բէնէն... մեր բժիշկը։

ՄԱՔ. Բէնէ՛...։

ՐԷՆ. Կարծեմ Հարուածը մահականացու է... (Տօրմին) կը ներեմ քեզի պարոն... ո՛հ, սակայն կուզէի ապրիլ։

ԿԱՍ. Տէր Աստուած... օգնութիւն... օգնութիւն. հասէ՛ք, հասէ՛ք։ (Ձախ կողմը դուռը կը զարնէ Տօրմին — Մօխալիֆ Կ'երթայ)։

## ՏԵՍԱՐԱՆ Ջ.

ԿԱՍՊԱՐ, ԹԻՊՕ, ԲԱՄԷԼԱ, ԹԻԹԻՆԵՐ

— ՊԷՐԹԱ ՈՒ ԲՕԼԻՍԱՐ (պահուըրակ)

ԹԻՊՕ ԲԱՄԷԼԱ ՈՒ ԹԻԹԻՆԵՐ

Ի՞նչ կայ, ի՞նչ կայ։



ԿԱՍ. Ա՜հ, տեսէ՛ք... պարոն Բէնէն է... վիրաւորեցին։

ԹԻՊ. Ո՜հ, ի՛նչ կը լսեմ... աղջիկս, օգնէ իրեն։

ԲԱՄ. Բէնէ՛ն... ո՛հ... (Էթէկ էթէկ Բիրբիրլէրը կը հօռնին)

ՐԷՆ. Բամէլա՛...

ԽՄԲԵԱԿՔ.

ԵՐԳ

Ի՞նչ կը տեսնենք, աս ի՛նչ դիպուած

Պ. Բէնէն վիրաւորուած

Ո՜հ տէր աստուած գըթայ վրան

Եւ մի՛ բանար դըռներն մահուան։

# ԱՐԱՐՈՒԱԾ Դ.

## ՊԱՏԿԵՐ Ե.

(ԿԱՍՊԱՐ ՈՒ ՊԷՐԹԱ)

## ՏԵՍԱՐԱՆ Ա.

ՄԱՐԹԷՆ, ԹԻՊՕ.

ԹԻՊ. (Մարթէնին որ օտան մը կ'իյնէ—ին կօ—գայ) ամբողջ խմե՞ց։

ՄԱՐ. Այո՛։

ԹԻՊ. Փառք Աստուծոյ. հիւանդնիս Պ. Բէնէ բժիշկն օր աւուր կ'առողջանայ... խեղճ երիտասարդը... չ'կրցանք իր տունը տանիլ, վախնալով որ ճամբան կը մեռնի։

ՄԱՐ. Ձեր տարած խնամքը ու հոգը հազիւ թէ իր ընտանիքն կրնար ընել։

ԹԻՊ. Եթէ ինք միայն իմ ձեռքէս յանձնուած ըլլար, թերևս հիմա ողորմած հոգի ամուսիններուս ինծմէ բարև տանելու գացած էր. վասն զի ես գիշերները քունի չեմ դիմանար և մեռելի պէս կը նիջեմ. իսկ Պարոն Բէնէի պէս հիւանդի մը, գիշերները փայլեան մը քովէն հեռանալու չէր գար. բարեբաղդաբար Բամէլա միշտ քովը կեցաւ. ո՛հ՝ տեսնալու բան էր անցեալ գիշեր, երբ յանկարծ Պ. Բէնէին արիւնը գլուխը ցատկեց, տեսնելու էր թէ ինչպէս եռանդեամբ կ'աշխատէր, խեղճ աղջիկը ինչ ընելիքը չէր գիտեր՝ օգնութիւն մ'ընելու համար, սաուգին խօսելով՝ քոյր մը՝ իր եղբօրը՝ կամ սիրուհի մը՝ իր սիրականը՝ մահուանէ ազատելու համար հազիւ թէ այնպէս չարաչար կ'աշխատէր։

ՄԱՐ. Ի՞նչ... կարծես...

ԹԻՊ. Ո՛չ. չեմ կարծեր. արոյգ եմ թէ մէկզմէկ կը սիրեն։

ՄԱՐ. Խրա՞ւ։

ԹԻՊ. Անշուշտ... որովհետև Պ. Բէնէն բաւական առողջութիւն գտաւ և կրնայ ոտքի վրայ պտըտիլ. բայց իր մարմնական տկարութեանը այլ իմն տկարութիւն յաջորդեց և որով մեր

դրախտէն ասլինքն Բամբլայէն բաժնուիլ չուզեր ։

ՄԱՐ. Ուրեմն այս սիրահարութեան դէմ կենալու է՝ վասն զի երբէք չյուսայուիր որ Պարոն Րէնէ Բամբլայէն հետ ամուսնանայ ։

ԹԻԳ. Ինչու՞ չպիտի ամուսնանայ ։

ՄԱՐ. Վասն զի Բամբլան աղքատ է ։

ԹԻԳ. Ճիշդ դու ալ կապարին պէս կը խօսիս . . . սակայն ուր է կապարը ։ !

ՄԱՐ. Չ'եմ գիտեր, քիչ մ'առաջ զինքը տեսայ որ խենդի մը պէս եկաւ՝ իր գրպանին մէջէն խել մը թղթեր առաւ ու վազելով գնաց ։

ԹԻԳ. Ո՞վ գիտէ նորէն խելքին ի՞նչ է փչեր ։ Բայց ահա սիրահարեալք կուգան ։

## ՏԵՍԱՐԱՆ Բ.

Առջինները, ՌԷՆԷ, ԲԱՄԲԼԱ.

ԲԱՄ. Զգուշացիր, Պ. Րէնէ ։

ՌԷՆ. Օ՜հ, ուժ եկաւ վրաս . . . առողջութիւնս գտայ, բոլորովին լաւացայ ։

ԹԻԳ. (Ախոռ մը պառլով) ծառայ եմ, Պ. բժիշկ ։

ՌԷՆ. Բարև, սիրելի բարեկամքս ։

ԹԻԳ. Ո՜հ, գիտցիր Պարոն, թէ դրախտի բոլոր անձինք մեծ ուրախութեան մէջ ենք, ձեր առողջութեան լուրը ամենուս անպատում բերկրութիւն պատճառեց, այս գիշեր ամենքս ալ պիտի պատրաստուինք ձեր առողջութեանը համար լուսարձակելու ։

ՄԱՐ. Այո՛ թիթեռները այսօր իրենց ուրախութիւնը ինչպէս առենը պիտի յայտնեն ։

ՌԷՆ. Մինչդեռ ես տունս պիտի դառնայի . հոգ չէ կ'երթամ և գիշերը կրկին կուգամ . սակայն քալելու ուժ չունենալուս, կառքի մը կարօտ եմ ։

ՄԱՐ. Ես կ'երթամ կառք մը վարձելու ։

ԹԻԳ. Գնա . (ցած) բայց ժամու մը չափ ուշացիր ։

ՄԱՐ. Ի՞նչու համար ։

ԹԻԳ. (ցած) Պատճառը յետոյ հարցուր, գնա և բարեկամներուն ալ ըսէ որ ասկէ երթան ։

ԹԻԳ. Ես ալ երթամ ձեր սընտուկը պատրաստեմ (Ձեռքը) այսինքն պահուըտիմ.

ՌԷՆ. Շնորհակալ եմ ։

(Թիգօ երթալ յետոյ ներովինը պահուը-տի) ։ (Թիթեռ ներթան.)

ՌԷՆ. (Ձեռքով) Սակայն և այսպէս չեմ կրնար Բամբլայէն բաժնուիլ ։

ԲԱՄ. (Ձեռքով) Պիտի երթայ . .

ՌԷՆ. Բամբլա . . . յուսամ թէ երախտագիտութեանս վրայ կասկած մը չունիս, հաւատա որ յաւիտենական պիտի ըլլայ ։

ԲԱՄ. Յաւիտենակա՞ն ։

ՌԷՆ. Իսկ դու՝ սիրելիդ իմ Բամբլա, միթէ միատեղ անցուցած ժամերնուս քաղցր յիշատակը պիտի մոռնաս . . . ո՜հ Բամբլա, մեծ են քեզի իմ պարտքերս ։

ԲԱՄ. Ո՛չ երբէք, պարոն, դեռ ես իմ ունեցած պարտաւորութիւնս առ ձեզ հատուցած չեմ, և յաւիտեան պարտաւոր եմ ձեր դիւցազնական բարերարութեանը . . . ո՜չ ապաքէն քանի մը օր առաջ ձեր կեանքը վտանգի մէջ դրիք իմինս ազատելու համար . ես այն ատեն քեզի անծանօթ աղջիկ մ' էի ։



ՌԷՆ. Ո՛հ, ո՛չ Բամբլա . արդէն կը ճանչնայի զքեզ . հիւանդանոցը այցելութեան գալ սովոր էի ուր խեղճերը կը խնամէիր . և չկրնար մէկը զքեզ առանց սիրելու տեսնել . . . ահ ատենէ 'ի վեր քու յիշատակովդ կ'ապրէի . . . այսուհետև ալ անհնար է ինծի քեզմէ հեռու ապրիլ . . . վաղը պիտի դառնամ հոս, միւս օր դարձեալ, վերջապէս ամէն օր քովդ պիտի ըլլամ՝ թէ որ հնազանդիս այցելութեանցս ։

ԲԱՄ. Ա՜հ . պարոն Րէնէ . . . . արդէն մեզմէ հեռանալդ՝ գիտնայիր ի՞նչ անհնարին ցաւ կը պատճառէ ինծի ։

ՌԷՆ. Պէտք է որ երթամ՝ չքնաղուդ իմ Բամբլա, այո՛ երթամ . բայց երթալէս առաջ թող որ քեզի սրտիս զգացումներս յայտնեմ . շատ բաներ ունիմ քեզի ըսելու . . Բամբլա . . . կը սիրեմ զքեզ ։

ԲԱՄ. (Ձեռքով) Զիս կը սիրէ . . ո՜հ ։

ԹԻԳ. (Երեսնալով) Կեցցէ . . . քիչ մնաց որ պարոն Րէնէին տեղ ես պիտի խօսէի ։

ՌԷՆ. Հայր Թիգօն . . .

ԹԻԳ. Այո՛, ես որ խօսքերդ լըսեցի . . .

ՌԷՆ. Ըսել է թէ՝ արդէն միտքս հասկցեր էիր ։

ԹԻԳ. Հապա՛, դժուար բան չէր

ՌԷՆ. Բայց Բամբլային օգնենք . . . կարծեմ կը նուաղի ։

ԹԻԳ. Հիմա կանցնի . . . այլայլութիւն մ'է . գիտեմ ի՞նչ տեսակ այլայլութիւն է . . . ատենօք իմ գլուխս ալ եկեր է ։

ՌԷՆ. Բամբլա՛, սիրելի Բամբլաս ։

ԹԻԳ. Ահա՛, խելքը գլուխը կուգայ . . . հէ՜, աղջիկս չարթննա՞ս . . . առատուած զքեզ մօրմէդ զըրկեց՝ ահա հիմա ալ քեզի ամուսին մը կուտայ ։

ՌԷՆ. Այո՛, Բամբլաս իմ ամուսինս պիտի ըլլայ ։

ԲԱՄ. Իր կի՞նը . . . ես ։

ԹԻԳ. Ի՞նչու չէ . դուցէ քեզմէ աղուորիկը՝ քեզմէ հարուստը գտնար, բայց աւելի ընտիր մը չեմ կարծեր ։

ԲԱՄ. Ո՜հ, հայր իմ, պարապ խօսքեր են ատոնք . փառաւոր գիս դող մի հաներ . գիտես որ այդ բանը անկարելի է ։

ԹԻԳ. Անկարելի՞ է ։

ԲԱՄ. Ի՞նչպէս կրնամ հաւատալ թէ պարոն Րէնէն զիս իրեն ընկեր ընդունի երբ ընտանեկան տիտղոս մ'ալ չունիմ ։

ԹԻԳ. Դուն անոր ախորժած տալու պէտք մը չունիս . վասն զի այսուհետև իր անունը պիտի կըրես . և արդէն քու մօրդ անունն ալ պատուաւոր է ։

ՌԷՆ. Ո՛հ, անշուշտ, Բամբլա, ես ալ գիտեմ քու մօրդ պատուականութիւնը . գիտեմ թէ անիկա Մօրէլը բարեպաշտ կին մըն էր, և իր երկու զինքը ծգելէն վերջը աւելի ընտրեալ քաղաքութեամբ ապրիլ՝ քան թէ իր պատուոյն հակառակ վիճակ մը վարել ։

ԲԱՄ. Պարոն Րէնէ, կ'աղաչեմ, մի՛ դատապարտեր այն անձը՝ որուն մայրս անգամ իր անհնարին

դժբաղդութեանը մէջ դէշ չէր դուրցեր . . . մահը՝ կամ դժնդակ բաղդ մը բաժնեց զիրենք իրարմէ և մայրս իր մահուան անկողնոյն մէջ նուաղեալ ձայնիւ Ռափայէլին անունը հնչելով իր հոգին աւանդեց ։

ԲԷՆ. Ինծի չըսի՞ք թէ այդ մարդը օտարական մըն է ։

ԹԻՊ. Այո՛, և այնչափ հեռու տեղ է՝ որ հաւանական է՝ թէ երբեք մէյմընալ փարիզ չիգայ ։

ԲԷՆ. Ո՞ր երկրէն է ։

ԹԻՊ. Ո՛հ, մոռցայ երկիրը . . . բայց կասպարը գիտէ ։

ԲԷՆ. Բայց տիկին Մօրէլին մեռնելէն ետքը՝ միթէ չփնտռեցի՞ն Ռափայէլը ։

ԹԻՊ. Ռափայէ՞լը . . . Աստուծոյ փառք՝ Ռափայէլներ չէր պակսիր, և այդ կարճ անունը չէր բաւեր . . . և ինչպէ՞ս փնտռել հայր մը՝ որ կը ծածկուի. Բամէլան հօս երբէք առանց հօր մնացած չէ, հարիւրի մը չափ գրեթէ ունի . . . ես յուսահատեալ եմ իր բուն հայրը գտնելու . . . բայց կասպար դեռ փնտռելու ետևէ է, և օրհնած հոգի տիկին Մօրէլին թղթերը առեր կարդալէն և քննելէն չի դադրիր ։

ԲԱՄ. Այո՛, հօրս գրած նամակները իր քովն են ։

ԲԷՆ. Այսուհետև ես ալ՝ Բամէլա, աշխատիմ պիտի հայրդ գտնելու . . . բայց գտնուի՞ կամ չգտնուի . . . ։

ԹԻՊ. (Բամէլային) Վերջապէս, տիկին Բէնէ պիտի ըլլաս ։

## ՏԵՍԱՐԱՆ Գ.

### ԱՌՋԻՆՆԵՐԸ ԵՒ ԿԱՍՊԱՐ.

ԹԻՊ. Հասի՛ր, սատանայ կասպար ։

ԿԱՍ. Բարի լոյս, հայր Թիպօն, բարի լոյս Բամէլա, Պարոն Բէնէ իմ յարգանքս . . . ։

ԹԻՊ. Աս ի՞նչ չփութութիւն ։

ԿԱՍ. (ցած Լօբօյին) Շնչէ, ամէն բան կը յաջողի ։

ԹԻՊ. Գուցէ . . . բայց ամէնէն յաջող բանը հոս է, և ահա աղէկ վրայ հասար ։

ԿԱՍ. Ի՞նչ կայ ։

ԹԻՊ. Դու Բամէլային հայրը չէ՞ս սեպուիր ։

ԿԱՍ. Գրեթէ . . . ։

ԹԻՊ. Ուրեմն իր ձեռքը քեզմէ ուզող մը կայ ։

ԿԱՍ. Պարոն Բէնէ՞ն ։

ԲԷՆ. Դու ալ գուշակե՞ր ես ։

ԿԱՍ. Շատո՛նց գիտէի ։

ԲԱՄ. (մեկուսի) Ես մինակ կը տարակուսէի ։

ԹԻՊ. Բայց Բամէլային հայր մը պէտք է որ այս ամուսնութեանը վրայ ըլլայ, և հարկ է որ դուն ըլլաս ։

ԿԱՍ. Ե՞ս . . . անկարելի է . . . ես ըլլամ ամենուն առջև . . . ո՛հ ոչ, անկարելի բան է ։

ԹԻՊ. Բայց ինչո՞ւ ։

ԿԱՍ. Կ'աղաչեմ Պարոն, ինչ որ կ'ուզես՝ ինչ որ կը պահանջես պատրաստ եմ կատարելու, բայց աս բանիս վրայօք մի բռնադատեր զիս, վասն զի պիտի ստիպես զիս ամէն բան յայտնելու ։

ԲԷՆ. Ի՞նչ բան ։

ԹԻՊ. Պիտի լսեմ ։



ԿԱՍ. Լռե՞լ . . . ո՛չ ոչ, չեմ ուզեր խաբել և ոչ գողնալ, և եթէ հիմա չխօսելու ըլլամ, աս երկու տղաքը խաբած կըլլամ . . . իրենց . . . ։

ԲԷՆ. Հանդարտէ՛ բարեկամ ։

ԿԱՍ. Քու բարեկամդ . . . ո՛հ արժանի չեմ ըլլալու . . . զիս առաքինի մարդ մը կը կարծես. անանկ չէ՞. բայց առաքինիք արևէն կը վախնան. առաքինիք միայն գիշերնե՞րը կը պտտին, ինչու ինծի ամենևին չես հարցուցած՝ թէ ի՞նչ պատճառաւ մինակ գիշերները դուրս կ'ելլամ, և ինչու արևէն կը վախնամ, թո՛ղ որ ըսեմ . . . ։

ԹԻՊ. Կ'արգիլեմ ։

ԿԱՍ. Վասն զի անպիտան մըն եմ, վասն զի անօրէն մն եմ ։

ԹԻՊ. Իրաւ չէ ։

ԲԱՄ. Չեմ կրնար հաւատալ ։

ԲԷՆ. Բայց ի՞նչ բանէ կ'վախնաս ։

ԿԱՍ. Վախցա՞ծս . . . վախցածս արդարութիւնն է. կախաղանն է ։

ԲԱՄ. ԲԷՆ. Դո՛ւն ։

ԿԱՍ. Այո՛, ես ։

ԲԷՆ. Բայց ի՞նչ պատճառաւ ։

ԿԱՍ. Վասն զի մարդասպան մն եմ ։

ԹԻՊ. Պիտի լռե՞ս . . .

ԲԱՄ. Ո՛հ անկարելի բան է ։

ԿԱՍ. Կինս խղդեցի ։

ԲԷՆ. Դո՞ւ ։

ԿԱՍ. Այո՛, ես . . . և սակայն բարի մարդ մըն էի՝ և ընտիր գործաւոր մը, աշխատելով բաւական առատ ժողվեր էի. երբ իմ դժբաղդ ճակատագիրս զիս աղւոր աղջկան մը դիմացն հանեց . . . ։

ԹԻՊ. Հը՛մ, ծոյլ մը. թեթև աղջիկ մը, և . . .

ԿԱՍ. Ծո՛յլ, այո. բայց իր ձեռքերը պզտիկ ու ճերմակ էին . . . թեթե՞ւ, այո, բայց զարդարանքը որչափ կը վայլէին իրեն . . . բացերես՝ այո. բայց զինքը այնչափ կը սիրէի, որ եթէ գանձ մ'ալ ունենայի՝ իրեն պիտի տայի որ ուզածին պէս վայելէ. և ահա գիշեր ցորեկ անդուլ կ'աշխատէի անոր կամքը լիովին տեղը տանելու համար, և իր պակասութեանց դէմ աչք գոցելով՝ երբեք յանդիմանական բառ մ'անգամ չէր ելլեր բերնէս՝ յուսալով որ օր աւուր ամէն բան կ'անցնի բայց երբ ես մէկ կողմէն կոյր ըղկուրայն իմ կեանքս կը հալէի ու կը մաշէի իրեն համար, միւս կողմէն անօրէնը զիս կը խաբէ եղեր ։ Մարսիլեայի մէջ ամէն մարդ գիտեր՝ թէ ի՞նչ անօրէնութեամբ զիս կը խաբէր. ամէն մարդ ետևէս զիս կը ծաղրէր՝ այլ ևս կոյր վստահութեամբ անտեղեակ իր ըրածներուն՝ երբէք չէի կասկածէր իմ պատույս վրայ. սակայն օր մը յանկարծ իմացայ ամէն բան և ես խակ իմ աչքերովս ականատես վկայ եղայ եղեռնագործութեան մը ամենէն մեծին. ո՛հ, Թուրի մը հարուածը այսչափ ցաւալի չէր . . . պէտք էր որ նոյն հետայն զինքը վռնտէի, բայց սիրտըս կակուղ էր, և չըխնայելով իր դառն բայց կեղծաւոր արցունքներուն՝ որոնք ծունկի վրայ ինկած աղիողորմ կը թափէր իր աչքերէն՝ աւո՜ղ, ներեցի իրեն ։ Սակայն նոյն օրէն նախանձը տիրեց սրտիս մէջ, անհետացաւ անոր մէջէն խաղաղութիւնն ու երջան-

կութիւնը, մշտնջենաւոր կատակածին ու տրտմութիւնը աշխատաւոր աշխարհքի մարդոցն սրտէս, ուրով խնդալու պէտքի ներքինքս, փառք զի խաղած ատենս միայն մեծցա կը մոռնայի . . . Երբ ես առանձ դառն մենակի մը մէջ նստած՝ անցեալն յիշատակը մտքէս ջնջելու կը փափաքէի՝ յանկարծ գիշեր մը տուն գալով՝ կինս հոն չգտայ, անհնարին մութ՝ տեսայ որ բան մը կը փայլէր գետնին . . . ինչ տեսնամ, զինուորականի ուսնոց մը՝ որ բառ գիտցայ ինկեր էր հոն, յայտնի էր որ մարդ մը մտեր էր իմ տունս՝ և մեկնելու դուրս ելեր էր, ին և. այս մարդը դարձեալ սիրահար մը կը նշանակէր. խենդի պէս դուրս ինկայ՝ տեղեկացայ՝ ետևնուն վազեցի . . . քաղաքէն դուրս ծովեզրը կառապի սպասով կը թափառէի . . . վերջապէս տեսայ զինքը տունս տանելու . . . . տեսայ որ կինս նաւակի մը կը նստէր՝ որ կը հեռանար և որուն մէջն զինուորական գաւառաց մի՝ ձեռքերը բարձեր կը խրկէր . . . կը սիրական էր որ իմս կը բաժնուէր . . . ան առեն, ո՛հ, ան առեն փառացեի իր քովը, կինս զիս տեսնելով ուզեց փախչիլ, բայց անկարելի էր, որովհետև ուժով բռներ էի զինքը ... ծովուն մտեցեր էինք և այն կռուին առեն ինչ անցաւ չգիտեմ, միայն չկայ . . . ինքզինքս կորսնցուցած էի. գլուխս խելքս չկայ . . . յանկարծ ձայն մ'առի, և այդ ատակայի ձայնը կարծես թէ ականջիս մէջ առկաւ էին կը թնթայ . . . չորս զիս դարձայ . . . մարդ չկար քովս, մինակ էի, մինակ, ինչպէս ըլլալը չեմ գիտեր, արդեօք ձեռքէս փախչել ուզելով՝ ծովն էր ինկած, կամ թէ ես իմ այլայլութեանս ատեն զինքը նետած էի, ամենևին չեմ գիտեր:

ՌԷՆ. Խեղճ մարդ:

ԿԱՍ. Յանկարծ աչքիս ձերմակ հագուստ մը երևցաւ՝ որ ծովուն երեսը կը լողար միանգամայն կնկան մը ձայն առի . . . . ամուսնոյս ձայնն էր այն . . . մէկէն ծովը նետուեցայ . . .

ԲԱՄ. Կ'ուզէիր ազատել . . . ո՛հ, գիտէի թէ բարեսիրտ ես:

ԿԱՍ. Բայց չկրցայ ըրնել. և ինքզինքս կորսնցուցի. երբ աչքս բացի՝ տեսայ՝ որ տունն եմ . . . զիս ազատեր էին . . . բայց կի՞նս . . . պօռացի, կի՞նս . . . ոչ ոք տեսած էր զինքը . . . միմիայն զիս ազատեր էին . . . ուրեմն կինս մեռուցեր էի . . . ո՛հ, ան ատեն ուխտ մը ըրի որ պէս վասն զի դեռ կը սիրէի զինքը և մինչև անգամ կինայի ներել եթէ գտնայի զինքը:

ԹԻԳ. Ներել . . . անանկ կնկան մը՝ որ քու թշուառութեանդ պատճառ եղաւ. ինչ անխելքութիւն:

ՌԷՆ. Անշուշտ, անանկ կնկան մը համար ինքզինքդ ծովը նետելը շատ էր:

ԹԻԳ. Եւ ինչ . . . սեպենք որ կնկանդ մահուանը պատճառ եղած ըլլաս. այն կինն ալ այդպիսի պատժոյ մը արժանի էր. թողունք որ, ո՞վ գիտէ սառուցին դուն մեռուցի՞ր զինքը, գուցէ տակաւին կ'ապրի:



ԿԱՍ. Ո՛հ, տարիէն . . . ո՛չ, չեմ կարծեր . . . և սակայն գուցէ . . . բայց ո՛չ ո՛չ . . . անկարելի է:

ՌԷՆ. Թողունք այս խօսքերը՝ որ քեզ կը վշտացնեն:

ԿԱՍ. Աղէկ ըսիր, ահա երկար ժամանակէ ՚ի վեր իմ խօսքս կը նենք, ըսեմ ու հանգչիմ քիչ մը, վասն զի շատ հոգնած եմ. և ետքը երթամ Բամպրայի երջանկութեանը աշխատելու:

ԹԻԳ. Ի՞նչ, նոր բա՞ն մը կայ:

ԿԱՍ. Դեռ բան մը չեմ կրնար ըսել. այնչափ որ՝ գիտցի՛ր թէ ամեն բան յաջող կերթայ, և ձեզի խօսք մ'ունիմ ըսելու:

ՌԷՆ. Ինծի՞:

ԿԱՍ. Այո՛, ձեզի . . . ո՛հ, ես փողոցները մինակ հին բան չեմ գտներ . . . վաղը կը տեսնուինք. հրաման տուէք՝ որ քիչ մը հանգչիմ, որպէս զի՝ յետոյ աւելի ուժով աշխատիմ. . դուք գիշերները կը գնանք, իսկ ես ցորեկները:

ՌԷՆ. Գիշեր բարի ուրեմն:

ԿԱՍ. Շնորհակալ եմ. (կ'երթայ)

## ՏԵՍԱՐԱՆ Դ.

ԱՌՋԻՆՆԵՐԸ ԵՒ ՄԱՐԹԻՆ

ՄԱՐ. Կառքը պատրաստ է:

ՌԷՆ. Ուրեմն կեցիր բարով սիրելի Բամպրա . . . քիչ ատենէ կը տեսնուինք, վասն զի այսուհետև առանց քեզի չեմ կրնար ապրիլ:

ԹԻԳ. Ես գիշեր կ'սպասենք:

ՌԷՆ. Անպատճառ պիտի գամ:

(Թիգօ ու Ռէնէն կ'երթան:)

## ՏԵՍԱՐԱՆ Ե.

ԲԱՄՊՐԱ (յետոյ ԳԷՐԹԱ) ԿԱՍՊԱՐ (պառկած)

ԲԱՄ. (Առանձին) Ո՛հ. մինչև բարի ես Աստուած իմ . . . այս առտու դեռ կողաչէի քեզի իմ աղօթքիս մէջ՝ որ անօրէն սէրս խորտակես իմ սրտիս մէջ, և հիմա . . . ո՛հ, եթէ երազ մըն է տեսածս՝ կ'ուզեմ թէ երբեք չարթննայի . . . (ոտքի կ'ելլէ:)

ԳԷՐ. (Խորը երևնալով) Եթէ չեմ սխալիր, այս անդին է՝ որ ինծ տեղեկացուցին ... և սա աղջիկն է անշուշտ:

ԲԱՄ. (Ինքնիրեն) Ձայն մը կ'առնեմ: (Ոտք կ'ելլէ:)

ԳԷՐ. (Մեկուսի) Իրաւ է թէ, գեղեցիկ է եղեր:

ԲԱՄ. Տիկի՛ն . . . բայց կարծեմ թէ . . . :

ԳԷՐ. Կայնէ նայիմ . . . ես ալ քեզ կը յիշեմ . . . կարծեմ թէ անցեալները քեզ տեսայ:

ԲԱՄ. Այո՛, տիկին, միտքս է:

ԳԷՐ. Բայց ո՞ւր:

ԲԱՄ. Ձեր ձիերուն ոտքին տակը:

ԳԷՐ. Այո՛. կը յիշեմ:

ԲԱՄ. Տիկինը հրաման մ'ունի՞ ինծի տալու:

ԳԷՐ. Հրամա՞ն . . . ո՛չ, բայց եթէ՝ խօսք մ'ունիմ, անունդ օրիորդ Բամպրա չէ՞:

ԲԱՄ. Այո՛, տիկին:

ԳԷՐ. Մինթէ դուք չէ՞ք որ անցեալները Ռէնէ տը Վէրնօն անուանով պատանի բժիշկ մը մեծամարտութենէ վիրաւորուած դարմանելու համար հոս առիք:

ԲԱՄ. Այո՛:

ՊԻՐ. Այդ պարոնը դեռ հո՞ս է։

ԲԱՄ։ Իր տունը դարձաւ։

ՊԻՐ. (Զինքն) Զիս կը խաբէ. (Բարձր) Նստէ ուրեմն ու խօսինք։

ԲԱՄ. Կրնամ հարցնել ես ալ ձեզի թէ . . . ։

ՊԻՐ. Ո՞վ ըլլալը՝ ի՞նչ պէտի ընէք . . . բարեկամ մը . . . կամ թշնամի մը։

ԲԱՄ. Ըսել է թէ՝ այդ բժիշկը դուք ալ կը ճանչնաք։

ՊԻՐ. Այո՛, կը ճանչնամ, և . . . և կը սիրեմ ալ։

ԲԱՄ. Կը սիրէ՞ք։

ՊԻՐ. Իմ սիրահարս է։

ԲԱՄ. (Մտովի) Տէր Աստուած ի՞նչ կը լսեմ։

ՊԻՐ. Ինծի համար էր որ կռուեցաւ։

ԲԱՄ. Ձեզի՞ համար։

ՊԻՐ. Այո՛, ինծի համար . . . վասն զի զիս կը սիրէ՝ գանէ որչափ որ ես զինքը կը սիրեմ։ Ուստի կը տեսնես որ ամեն բան ճիշդ և անկեղծաբար կը յայտնեմ քեզի՝ Օրիորդ, գիտցիր նաև թէ իմ երկիւ էր՝ որ զինքը մենամարտութեան հրաւիրեց։

ԲԱՄ. Կարդացած։

ՊԻՐ. Այո՛ . . . և թէպէտ այդ մենամարտութեան երկրորդ օրը ստիպուեցայ Փարիզէն հեռանալ, բայց և այնպէս հեռուէն ալ տակաւին կրցայ իմանալ Բէնէյին ուր ըլլալը, և թէ ձեր ու ծերունւոյ մը խնամքը տակն ըլլալը, մանաւանդ իմացայ նաև այն ծերունւոյն՝ որ անշուշտ ձեր ազգականը պէտի ըլլայ՝ անկարելի և երևակայական դիտաւորութիւնները՝ որ . . .

ԲԱՄ. Անկարելի՞ . . . ։

ՊԻՐ. Ո՛հ, կը խղճամ վրադ, խեղճ աղջիկ, մտածէ՛ անգամ մը՝ թէ դուն ո՞վ, թէ և իր սիրոյ արժան ալ ըլլար՝ միթէ կրնա՞ր զքեզ սիրել . . . և քեզի հետ ամուսնանալ։

ԲԱՄ. (Ողբագին) Զիս չէր սիրեր . . . ուրեմն զիս կը խաբէր . . . ինքը՞ . . . ինքը՛ . . .

ՊԻՐ։ (Մեկուսի) Արտասուքներ . . . առանց կ'օգտուէի. (Բարձր) բայց սիրտս ու աղջիկս . . . և գիտցի՛ր որ միշտ քու բարեկամդ և պաշտպանդ պիտի մնամ... սիրտս կրնեմ . . . այսպիսի բաներ շուտով կը մոռցուին . . . և գրաւ կը դնեմ որ ամիս մը չի քշեր՝ Պարոն Բէնէյին սիրոյն յիշատակը խապառ կը ջնջուի սրտէդ . . . մ'ողբար . . . մ'ողբար . . . կերևայ թէ առջի անգամն է որ կը սիրես . . . ես ալ ճիշդ քեզի պէս եղայ, բայց անցաւ, հիմա և ոչ միտքս մնացեր է։

ԲԱՄ. Ո՛չ Տիկին, իմ սէրս անցողական չէ, ձեզ մանկ կրնեմ, բայց կը կարծեմ թէ դէշ երազ մըն է տեսածս, և սակայն դեռահաս եմ տակաւին, աշխարհիս ինչ ըլլալը չ'գիտէի; պարզմտութեամբ ամէն բանի կը հաւատայի. վիրաւորուած և կիսամեռ երիտասարդի մը հիւրընկալութիւն ըրի, և խնամքովս զանի մահուանէ ազատեցի. և իմ խնամոյս օգնութեամբը ազատուելուն համար շնորհապարտ եմ Աստուծոյ, բայց և ինքն ալ արդէն առաքինի և վեհանձն է, և իր ազնուութեամբը ամենուն



սիրելի և պաշտելի է. որուն վրայօք և ո՛չ փոքր դէշութիւն մը մէկու մը բերնէն լսած եմ, և ինծի ալ՝ Բամէլա՛, քեզ կը սիրեմ ըսաւ, իսկ հիմա դուք կ'ըսէք՝ թէ զիս խաբեց . . . խաբե՜լ զիս . . . խեղճ ու որբ աղջիկ մը անպաշտպան։ Բայց դուք՝ Տիկին, դուք որ ամուսին մ'ունիք, որուն անունն ու պատիւը կը կրէք՝ ու նոյն միջոցին կը խաբէք զինքը ի՞նչպէս ալ կ'համարձակիք այդ դժընդակ խաբէութիւնը ինծի յայտնելու՝ ինծի՛ որ անմեղ աղջիկ մըն եմ, ո՛հ, ես ալ անկեղծաբար կըսեմ որ ձեզի համար ես կ'ամչնամ։

ՊԻՐ. Օրիորդ։

ԲԱՄ. Սակայն՝ եթէ դուք զԲէնէն կը սիրէք՝ երբէք մի՛ կարծէք որ ան ալ ձեզ սիրէ, ո՛չ. անկարելի է այդ. մինչդեռ հոս քիչ մ'առաջ՝ իմ բարերար ընկերակցացս քովը Բամէլա՛ կ'ըսէր՝ Բամէլա՛ դու իմ ամուսինս պիտի ըլլաս. ո՜հ՝ անտարակոյս եմ որ զիս չէր խաբեր . . . ոչ ոչ, չէր խաբեր զիս։

ՊԻՐ. Դու իր կի՞նը . . . ո՜հ, խենդ ես եղեր. օրիորդ . . . բայց ես կը կարծէի թէ աղու մը հետ է վէճս, և ահա հակառակորդ մը կելլէ դէմս . . . ուրեմն գիտցիր որ թէ և Բէնէն քեզի անանկ խօսք մ'ալ ըրած ըլլայ՝ և սեպելով թէ զքեզ ստուգիւ սիրած ալ ըլլայ, ամէն ջանքս ի գործ պիտի դնեմ քու ձեռքէդ զանի յափշտակելու համար . . . ո՜հ՝ երբէք դու չպիտի կարենաս անոր կինը ըլլալ . . . դու իր կի՞նը . . . ատանկ ամուսնութիւն մը խզելու համար ամեն բան պիտի զոհեմ, ամեն բան անհնար պիտի ընեմ, հարստութի՛ւն՝ պատիւ մինչև անգամ իմ կենացս հանգստութիւ՛նը ...

ԲԱՄ. Բայց երբ ձեր երիկը, տիկին երբ ձեր ամուսինը այս բանը իմանալու ըլլայ, կրնայ Բէնէն մեռցնել։

ՊԻՐ. Թո՛ղ երկուքնիս ալ մեռցնէ՝ գիտցած եղիր որ ամեն բան աչքս առած եմ։

ԲԱՄ. Ի՞նչ սարսափելի ըսած խօսքերուդ։

ՊԻՐ. Ո՛հ, դու կը կարծես թէ Բէնէն կը սիրես, վասն զի այսպիսի քաղցր երազէ մը արթննալով քանի մը կաթիլ արցունք թափեցիր . . . բայց ես Բէնէյին համար իմ արիւնս թափելու պատրաստ եմ . . . ծ՛ն ուրեմն համարձակէ հիմա դէմս ելլելու. ու հետս կռուելու. յանձն կ'առնում կռուուիլ, այլ զգուշացի՛ր վասն զի պիտի վիրաւորուիս։

ԲԱՄ. Կռուի՞լ . . . հազիւ թէ այդ գժուածնունդ բանը կը հակնամ՛ ուր մնայ որ մտքէս անցնի բայց և այնպէս՝ եթէ միայն իմ կեանքս վտանգի մէջ լինոր՝ սիրտ կառնէի, և Բէնէյին համար բոլոր արիւնս կը թափէի կը քամէի ձեզի պէս. բայց այս ճամբով կը վախնամ որ անոր կեանքը վնասելու պատճառ կ'ըլլամ, արդ հան դարձէ՛ տիկին, այս վայրկենէս՝ իմ ու Բէնէյին մէջ ամեն բան լմնցած է, ամեն կերպ յարաբերութիւն դադրած է. ձերն ըլլայ Բէնէն, 'ի բոլոր սրտէ կը զոհեմ ձեզի, որպէս զի իմ պատճառաւս անոր վնաս մը չը-

հանի, որպէս զի տայի։

ՊԵՐ. Ուրեմն կերդնուս ինծի՞ թէ...

ԲԱՄ. Այո, կերդնում քեզի թէ երբէք ըմպելին կինը չպիտի ըլլայ։ (կերթայ)

ՊԵՐ. (առանձին) Ո՜հ, վերջապէս շունչ կառնեմ... հիմայ պէտք է հասկնամ՝ թէ ըմպելին հոն է թէ ոչ... սա գաւաթ գուցէ ըմպելին սենեակին հագորդէ. մնանք՝ նայինք... (աջ դէէ դռնէն կըմտնայ)

ԿԱՍ. (՚ի ներս) Այո, մեռած եմ... յանցաւոր եմ... բռնեցէք, տարէք զիս... իմ կինս... ես ձեռօքս մեռուցի... խղդեցի... կինս՝ զոր կը սիրէի... բայց անկից զիս կը խաբէր... ո՜հ, դատաւորք, զիս դատապարտելէ առաջ՝ հաւատացէ՛ք թէ նախանձն էր, բարկութիւնն էր, վրէժխնդրութիւնն էր՝ որ գրգռեցին՝ մղեցին զիս իմ ձեռքերս արիւնը թաթխելու... կինս կը սիրէի, կեանքս իրեն համար կը զոհէի, բայց անկից զիս կը խաբէր... հիմայ առէք բռնեցէք զիս... տարէք կախեցէք... բայց...

### ՏԵՍԱՐԱՆ Զ.

ԿԱՍՊԱՐ ՊԵՐԹԱ

ՊԵՐ. (մեկուսին ելլելով) Մարդս չկայ եղեր։

ԿԱՍ. (՚ի ներս) Չէ. չէ, կեցէք... ահա անկից է՝ որ կը տեսնամ... անիկայ... (դուրս) իմ կինս...

ՊԵՐ. Ի՞նչ կ՚ըլլայ սա մարդը։

ԿԱՍ. Այո... (կ՚որբնայ) Տէր աստուա՜ծ... երազի մէջ չեմ... սա ի՞նչ է... ի՞նչ կը տեսնամ... ահա՛ ինքն է... ինքն է՝ այո...

ՊԵՐ. (մեկուսի) Ո՞վ Երկինք...

ԿԱՍ. Քամթալի՞ն...

ՊԵՐ. (ինքնիրէն) աստուա՜ծ...

ԿԱՍ. Ո՜հ, այս անգամ կառքի մէջ չէ, իմ տունս... չ՚կրնար փախչիլ ձեռքէս...

ՊԵՐ. Քաշուիմ, երթամ օրկէ։

ԿԱՍ. Տիկի՛ն...

ՊԵՐ. Ի՞նչ կայ...

ԿԱՍ. (մեկուսի) Իւր ձայնը...

ՊԵՐ. Մէկը բնտռելու համար եկեր էի, ու հիմա կերթամ։

ԿԱՍ. (մեկուսի) Իւր ձայնն է...։

ՊԵՐ. Կեցէք բարով։

ԿԱՍ. (մեկուսի) Այո, նոյն ինքն է։

ՊԵՐ. Ի՞նչ երեսս ՚ի վեր այդպէս ապշած կը նայիս։

Ի՞նչու... դեռ կը հարցնե՞ս, թէ ի՞նչու։

ՊԵՐ. Անշուշտ...։

ԿԱՍ. Դու ալ ինծի նայէ անգամ մը։

ՊԵՐ. Ամենեւին տեսեն չեմ կըրնար կորսնցնել... եթէ կը բարեհաճիս... շատ աղէկ, ահա կը նայիմ։

ԿԱՍ. Միթէ իմ կերպարանքս չե՞ս յիշեր։

ՊԵՐ. Կերպարա՞նքդ... ամենեւին... սա ի՞նչ ըսել կուզես։

ԿԱՍ. Մարսիլեա միտքդ չի գա՞ր։

ՊԵՐ. Մարսիլեա՞... ո՛չ, գացած տեղս չէ։

ԿԱՍ. Երբէ՞ք։

ՊԵՐ. Կը տեսնուի թէ քեզի սըրտակից կնկան մը կը նմանիմ։

ԿԱՍ. Չ՛է, չես նմանիր, այլ



նոյն ինքն ես... այո, իմ կինս...։

ՊԵՐ. Քու կի՞նդ... հա. հա. հա. շատ խնդալու բան... խեղճ գլուխդ ժաղկե՛, մարդ, ե՞րազ կը տեսնաս, կամ խենդ ես մի։

ԿԱՍ. (մեկուսի) Ո՜հ, ահա կարծես թէ կը խնդայ... այո, երբոր ես նախանձով ու բարկութեամբ կ՚ողբայի՝ անիկայ ճիշդ այսպէս կը խնդար. (բարձր) տաղին եկուր նայինք, մի՛ տանջեր զիս... խոստովանէ՛ թէ դու ես... ըսէ՛ ինծի թէ մեռած չես... թէ քեզ չ՚մեռուցի։

ՊԵՐ. Ի՞նչ, քու կինդ մեռուցի՞ր. թշուառ մարդ. Անանկ կուգայ ինծի որ հիմա քեզ բռնել տամ։

ԿԱՍ. Ինչ կը լսեմ.

ՊԵՐ. Անշուշտ, որպէս զի երիկըս կասկածի մը չերթայ իմ վրայօքս։

ԿԱՍ. Երիկդ... միթէ կարգուած ես։

ՊԵՐ. Անտարակոյս... և ահա տասն կրնաս հասկնալ թէ ես քու կարծածդ չեմ. ու չեմ ալ կրնար ըլլալ... իր կինք... հա. հա. հա. խրատ որ խնդալս չեմ կրնար բռնել։

ԿԱՍ. Դարձեալ այդ ծիծաղը. այդ դիւական ծիծաղը։

ՊԵՐ. Կեցիր բարով ուրեմն... բայց նախ՝ քեզի սա խրատը տամ... նայէ որ այսուհետեւ քու գաղանիքներդ մէկու մը չըյայտնես... վասն զի արդարութեան ականջը հասնելուն պէս... կադախանը...

ԿԱՍ. Կախաղա՞նը...

ՊԵՐ. Այո... աղւոր կնոջդ մահը, բայց ՚ի գաղտնի...

ԿԱՍ. Ո՞վ երկինք։

ՊԵՐ. Եւ փախցիր կախաղանէ՛ն։

ԿԱՍ. Տիկի՛ն...

ՊԵՐ. Կախաղանէն... (կ՚երթայ)

ԿԱՍ. Ա՜հ... (կ՚իյնայ)։

## ՊԱՏԿԵՐ Զ.

(ԽՆՋՈՅՔ ԹԻԹԻՆ ԵՐՈՒՆ)

ԴՐԱԽՏԸ ՎԵՐԵՆ ԿԱԽՈՒԱԾ ԼԱՊՏԵՐՆԵՐՈՎ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԱԾ Է ՍԵՂԱՆ ՄԸ ԿԱՅ

### ՏԵՍԱՐԱՆ Ա.

ՌԵՆԵ, ԲԱՄԵԼԱ, ԹԻՊՕ, ՊՐԻՊՕՆ

ԼԱՐՓԱՅՈՒ, ՄԱՐԹԷՆ, ԹԻԹԻՆԵՐ

ԽՄԲԵՐԳ.

Կեցցե՜ն երգեր ու պարեր
Կեցցէն սիրոյ այս ժամեր
Որ մեր կենաց տարիներն
Անուշ թելով կը կապեն.
Զուարթ օրերս այն կեցցեն
Որք երբ հրաշէք վերածեն
Սև գիշերներն ՚ի փայլուն
Եւ դառն օրերն ՚ի խնտում
Կեցցէ յաւերժ կեր ու խում
Որ կ՚ափոխէ սիրտ մարդուն
Եւ գէթ վայրկեան մը կուտայ
Մեզի մոռնալ թէ մահ կայ։

ԹԻՊ. (գինին հրամցնելով) Սա գաւաթնալ իմ չորս հանդուցեալնե-

բաւս յիշատակին համար խմէ, Պ. Րէնէ ։

ՐԷՆ. Մե՛ծ սիրով ։

ԹԻԳ. Շնորհակալ եմ ։

ՐԷՆ. Կասպարը ո՞ւր է ։

ՄԱՐ. Անիկայ չորս ժամ կայ, աճապարանօք դուրս ելաւ, ինծի ըսելով՝ թէ սքանչելի լուր մը ունի բերելու ։

ՐԷՆ. Ի՞նչ լուր ։

ԹԻԳ. Ո՛վ գիտէ, բայց մեծ տագնապի մէջ էր . . . անշուշտ հրաշալի բան մը պիտի ընէ ։

ԳՐԻ. Ես կ՚ըսեմ թէ՝ Թատրոնը պարահանդէսը զուարճանալու գնաց ։

ԹԻԳ. Ամենևին. զուարճութենէ կը փախչի . . . ասա թէ ոչ հոս կ՚ըլլար . . . կարծես թէ հոն աւելի կը զուարճացուի ։

ԳՐԻ. Բայց տեսնէիր՝ որչափ դիմակաւորք կ՚երթային ։

ՄԱՐ. Փողոցները այս գիշեր անհամար ծաղկեալ կնիկներով՝ և բիւրաւոր ջահերով լեցուն է ։

ԳՐԻ. Այո, ես ալ տեսայ, ի՜նչ բազմութիւն . . . ի՜նչ իրար անցում . . .

ԹԻԳ. Անշուշտ, բարեկենդանի վերջին գիշերներն են ։

ՄԱՐ. Մինչև անգամ մեր ճանչւորներէն մեծ խումբ մը հոս պիտի գայ ։

ԹԻԳ ։ Ի՜նչ աղէկ կ՚ըլլայ, և առաւել կը զուարճանանք ։

## ՏԵՍԱՐԱՆ Բ.

ԱՌՋԻՆՆԵՐԸ ԵՒ ԿԱՍՊԱՐ

ԿԱՍ. (դրսէն պօռալով) Բամէլա՜ . .

ԹԻԳ. Կասպարին ձայնն է ։

ԱՄԵՆՔԸ. Այո ։

ԲԱՄ. Զի՞ս կանչեց ։

ԿԱՍ. (գալով) Բամէլա՜ ։

ԹԻԳ. Ուստի՞ կուգաս ։

ԿԱՍ. Ուստի կուգամ . . . Ամերիկայէն ։

ԱՄԵՆՔԸ. Ամերիկայէ՜ն . . .

ԿԱՍ. Չօսէ տ՚Անթէնի փողոց թիւ չորրորդէն կուգամ . . . մինչև հիմա ձեզմէ ծածկեր էի . . . խել հիմա որ ամէն բան յաջողեցաւ . . . ա՛հ կը փափաքիմ որ Բամէլային ուրախութենէն հիւանդնայ . . . բայց ի՜նչ կ՚ըսեմ. միթէ երջանկութիւնը մարդս կը մեռցնէ՞ . . . ։ Բամէլա՜, Բամէլա՜ . . .

ԱՄԵՆՔԸ. Ի՞նչ կայ ։

ԿԱՍ. Բամէլա՜ . . . աղջիկս . . . քու հայրդ գտայ . . .

ԲԱՄ. Հա՞յրս . . .

ԱՄԵՆՔԸ. Հա՞յրը . . .

ԿԱՍ. Ո՛հ. բայց այս գիւտը ճըշմարիտ է ։

ԲԱՄ. Հա՞յրս . . . միթէ կ՚ապրի՞ ։

ԿԱՍ. Այո, բոլորովին առողջ է ։

ԽՄԲԵՐԳ

Ի՜նչ բարի լուր՝ ի՜նչ ցնծութիւն
Բամէլային հայրը ողջ է
Գըտանք
Գըտանք
Եւ այս գիւտը ի՜նչ բերկրութիւն
Մեզ ամենուս կը պատճառէ
Խնդանք
Խնդանք
Այո՛ եղբարք նոր օր է մեզ
Խնդան սրտեր կարօտակէզ
Այսօր
Նոր օր

ԹԻԳ. Ի՞նչպէս եղաւ, ի՞նչպէս գտար չ՚պատմե՞ս ։

ԿԱՍ. Ի՜նչպէս պիտի ըլլայ . . .



Ես մինակ ինքնին գտայ . . . այն նամակները՝ որ քովս էին . . . որոնք Բամէլային մայրը մեռնելու ատեն ձգած էր, այն նամակները որոնք Ռաֆայէլ անունով կնքուած էին, կամ Մաքսիմ անունով մեծ մարդու մը տարի՝ որ Պ. Րէնէին հիւանդ եղած ատեն իրեն այցելութեան եկած էր ։ Այս մարդը չէի ճանչնար բայց իմանալով թէ Ամերիկացի է և յուսալով թէ Բամէլային հօրը վրայօք ինծի տեղեկութիւն տայ՝ ամենայն քաջութեամբ իւր տունը գացի և ներկայանալով նոյն պարոնին՝ համառօտիւ մը Բամէլային պատմութիւնը պատմելէս ետքը՝ նամակները ցուցուցի, ան ալ առաւ կարդաց և յանկարծ “ Ես այդ Ռաֆայէլը կը ճանչնամ ըսաւ, հոս փարիզ է ” ։

ԹԻԳ, Փարի՞զ . . .

ԿԱՍ. “ Քեզ իր տունը տանիմ ըսաւ ” ։

ԹԻԳ. Տարա՞ւ . . . գացի՞ր . . .

ԲԱՄ. Հայրս տեսա՞ր ։

ԿԱՍ. Ի՛նչպէս որ քեզ կը տեսնեմ ։

ԲԱՄ. Ո՛հ,

ԿԱՍ. Եւ հաղիւ թէ բանը հասկցաւ՝ իւր աչքերէն արցունքներ սկսան թափիլ, մայրդ միտքն ինկաւ, և երբ իրեն քու պատմութիւնդ պատմեցի, ելաւ զիս համբուրեց, այո, զիս գրկեց ու համբուրեց . . . ուզեց ելլել հոս գալ թող չտուի . . . կուզէի որ նախ կամաց մը քեզի իմաց տամ . . . բայց խօսք տուի իրեն որ այս գիշեր քեզ իւր տունը տանիմ . . . մէկէն իր կառքը տուաւ ինծի, վազեցի եկայ որ՝ քեզ առնեմ տանիմ ։

ԲԱՄ. Ո՛հ, կարծեմ թէ՝ երազ կը տեսնեմ ։

ԿԱՍ. Ամենևին ։

ՐԷՆ. Բայց իւր անունը ի՞նչ է ։

ԿԱՍ. Իւր անունը . . . Տարսի ։

ՐԷՆ. (մէկուսի) Տարսի՞ . . . ո՛հ Բամէլան ինծի համար կորսուեցաւ ([illegible]) ։

ԱՄԵՆՔԸ. Աս ի՞նչ ձայն է ։

ԿԱՍ. Ի՛նչ որ է նէ . . . եկուր Բամէլա՛, երթանք . . .

ԽՄԲԵՐԳ

Կեցցէն երգեր ու պարեր (կրկնութիւն)

# ԱՐԱՐՈՒԱԾ Դ.

## ՊԱՏԿԵՐ Ժ.

(ՀԱՅՐՆ ՈՒ ԱՂՋԻԿԸ)

## ՏԵՍԱՐԱՆ Ա.

ՊԵՐԹԱ ԲՕԼԻՍԱՐ

ԲՕԼ. Կոմուհի, . . . ։

ՊԵՐ. Շնորհակալ եմ, որ առանց ուշանալու եկար ։

ԲՕԼ. Երջանիկ եմ, որ ձեզի հաճոյ եղայ, մինակ պիտի հա-

մարձակիմ ըսելու թէ շատ մեծ տագնապի մէջ կը տեսնեմ զձեզ ։

ՊԵՐ. Կրնամ քաղաքավարին վստահիլ ձեզի ։

ԲՈԼ. Կարծեմ թէ մինչեւ հիմա գանգատելու տեղի մը չէք ունեցած ։

ՊԵՐ. Ուրեմն գիտցիր Պ. Բոլէտար. թէ ամեն բան փոխուեցաւ եւ ամեն բան հակառակ կերթայ. ինքզինքս յուսահատ վիճակի մէջ կը գտնամ. բայց եւ այնպէս ամենայն քաջութեամբ եւ հաստատութեամբ ամէն դժուարութեանց դէմ պիտի դնեմ եւ մինչեւ վերջին շունչս կռուելու յանձնառու եմ, ո՜հ խրացնէ մեծ պատերազմի յարձակում մըն է այս յարձակումս . . . կուզես հետս միանալ ։

ԲՈԼ. Այս առաջարկութիւնիդ ինծի մեծ պատիւ է ։

ՊԵՐ. ( Կընոջը եւ աղջկանը կը ցուցնէ Բոլէտարին որ նայի ) Ուրեմն մտիկ ըրէ՝ որ ամեն անցածը գիտնաս . . . ո՜հ այնչափ բան ունիմ ըսելու որ ուրիշ սիրտս չեմ գիտեր գիտցիր նախ՝ որ կնիկս իր աղջիկը տալու ։

ԲՈԼ. Ի՞նչ աղջիկ . . . ։

ՊԵՐ. Օ՜հ, գրեթէ միապատանութիւն մըն է այս . . . կնիկս ամենեւին չեմ գիտեր ինչ ծերուկ կնոջմէ մը աղջիկ մը ունեցեր եր այն որ աշխարհի անծանօթ եւ հրաշալի գեղեցկութիւն մը այսօր այն աղջիկը իւր հօրը գիրկն է ։

ԲՈԼ. Զարմանալի դիպուած ։ Ուրեմն . . . ։

ՊԵՐ ։ Ուրեմն թէպէտ եւ ներքես կ'ուզեմ կորսնցնել բայց երեսանց կամօքին ու բախտակից եղաց. ու ամենայն սիրով՝ իր աղջկանը սէր եւ համակրութիւն խոստացայ. վերջապէս ինքն ալ գաւկիս հետ մը մատրմակցին խոստումներ ըրի որոնց թերեւս եւ ոչ մէկը պիտի կարողանամ կատարել, սակայն եւ այնպէս խեղճ կնոջս կրկին անգամ սէր կացեց վրաս ։

ԲՈԼ. Ահա աղջիկ մը՝ որ ուրիշ երջանիկ կընար ըլլալ եթէ երբեք իր հայրը գտած ըլլար. իսկ կանխահէն այնպէս չէ որ փոքր կակած մը ընէ Պ. Տարտիւին իրեն ըրած նուերներուն վրայօք, լսածում վաւերական կտակով մը եղած է այդ պարգեւատուութիւնը եւ հետեւաբար իր աղջիկը իւր հայրական հարստութենէն ամենեւին բան մը պահանջելու իրաւունք չունենար ։

ՊԵՐ. Այո, առանց ըլլալը գիտեմ . . . բայց աս Բամէլան . . . ։

ԲՈԼ. Աղջկան անունն է ։

ՊԵՐ. Տիրոջը պէս անիծեալ անուն մը ։

ԲՈԼ. Բայց չեմ հասկնար թէ ի՞նչ կը նշանակէ այդ բարկութիւնը, որովհետեւ ձեր հարստութենէն վախնալու տեղի մը չունիք ։

ՊԵՐ. Ա՜հ, պարոն, խնդիրը մինակ հարստութեանս վրայ չէ. երջանկութիւնս է որ վտանգի մէջ է. ա՜հ չես գիտեր թէ ինչ անհնարին թշուառութիւն հասուց ինծի այդ աղջիկը. եւ դեռ որչափ կարող է հասցունել . . . եթէ միայն Բամէլա մը ըլլար դէմիս . . . այնչափ այլայլած չէի անանկ զիս . . . հօր ու մը պէս



կը խողդէի զինքը . . . այդ աւա՜ղ . . . անօթեկին դիպուած, մահաբեր դիպուած . . . երկրորդ մը ելաւ դէմս . . . ( ոտքի կ'ելլէ ) կիմանա՞ս . . . երկրորդ մը ելաւ դէմս՝ որ ահ ու սարսափ կը պատճառէ ինծի . . . որ անհնարին յուսահատութեան մէջ կը գլորէ զիս . . . ո՜վ Երկինք, Երկի՜նք . . . ։

ԲՈԼ. Տիկի՜ն ։

ՊԵՐ. ( Լռութեան մը ետքը ) Պարոն ա՛ռ աս քսակը, ու մէջի ոսկիները համրէ . . . խօսքս ետքը կը շարունակեմ. ( Բոլէտար ոսկիները համրելու ատեն Մեկուսի ) ա՜հ . . . անշուշտ կը սիրէ . . . բայց այն աղջկան ցուցուցած սէրը ոչ ինչ բան է . . . զբօսանք մըն է . . . որոշումներս ես չի գտանամ . . . երթամ՝ գտնամ ըլնէն եւ իրեն ըսեմ՝ եթէ իրաւ կամսին աղջկանը հետ կարգուելու որոշումնը ըրած է՝ թողու այդ դիտաւորութիւնը՝ վասն զի անկարելի է . . . վասն զի կամքը՝ որ մահացուցէն մը ունի իրեն դէմ ոչ երբեք պիտի հաճի այդ ամուսնութեան . . . ընդունէ ուրեմն իմ սէրս . . . ահա պատրաստ եմ՝ ո՛ւր որ կուզես՝ հետդ երթալու. երթա՛նք, փախչինք հեռու տեղ մը, ուր տեղ անվրդով վայելենք մեր սէրն ու երջանկութիւնը ։

ԲՈԼ. ( Մեկուսի ) Եռեսուն հազար Ֆրանք . . . կեցցէ մարդահաճութիւն ։

ՊԵՐ. Համրեցի՞ր . . .

ԲՈԼ. Այո, տիկին ։

ՊԵՐ. Հիմա ալ ծոցդ դի՛ր ։

ԲՈԼ. ( Մեկուսի ) Ի՜նչ անօրինակ առատաձեռնութիւն ։

ՊԵՐ. Քեզմէ ուրիշ բան մը կը պահանջեմ հիմա ։

ԲՈԼ. Ի՞նչ, տիկի՛ն, հրամայէ

ՊԵՐ. Աշխարհիս վրայէն անձ մը աներեւոյթ պիտի ընես ։

ԲՈԼ. Մարդասպանութի՜ւն . . . ։

ՊԵՐ. Ո՛չ, բանտարկութիւն . . . մարդ մը կայ՝ որ ամենօք իւր կինը մեռուց . . . այս մարդը կը ճանչնամ կուզեմ որ զինքը աքսորութեան մատնես՝ որ ցմահ բանտարկուի ։

ՔՕՆ. ( Ներսէն ) Ասկէ եկէք ։

ՊԵՐ. Մարդ կուգայ, եկուր իմ սենեակս մտի՛ր, հոն կը խօսինք ։

## ՏԵՍԱՐԱՆ Գ.

ԿԱՍՊԱՐ, ԲԱՄԷԼԱ, ՔՕՆՍԹԱՆ

ՔՕՆ. Հոս մտէք ու սպասեցէք երթամ տէրոջս իմացնեմ ։

ԿԱՍ. Շուտ ըրէ՛ քեզ սպասեմ ։

ՔՕՆ. ( Մեկուսի ) Աս ի՜նչ տեսակ մարդ է ։ ( Կ'երթայ ) ։

ԿԱՍ. Հէ՜ն, Բամէլա, տե՛ս ի՜նչ մեծ տուն, ի՜նչ պալատ . . . կարծեմ թէ թագաւորին պալատը այնչափ աղուոր չէ, աս հայելիները տես մէյմը, աս աթոռները, աս սեղանները . . . հապա աս ոսկեզօծ սիւները, ո՞ր մէկ զարդարանքներն ըսեմ, խելքիս կուգայ ( կը նայի ) ասոնք ամէնքն ալ մերը պիտի ըլլայ, այսինքն քուկդ . . . ա՜հ արդէն կը կարծեմ թէ թագուհիի մը պէս փայլուն հագուստներ հագած ես, ու հոս թագուհիի մը պէս այս պահոյրուն մէջ նազելաշուք կը ճեմես . . . ալ ո՜վ երեսդ կը նայի որ . . .

ԲԱՄ. Ո՛չ, դուն իմ բարեկամս, իմ հայրս ես . . .

ԿԱՍ. Հա՛յրդ . . . ալ ասկէ ետքը քու հա՛յրդ, դուցէ, վրաս խնդալու համար միայն . . . Կատար այսու հետեւ եւ ոչ երբեք նայելու կը համարձակի, ո՛հ ես գիտեմ մարդկային բնութիւնը. այս աշխարհիս մէջ ամեն բան ասանկ է,, հարստութիւնը մարդը կը փոխէ, հարստութիւնը աղքատութեան թշնամի է . . . . բայց ի՛նչ կ'ըսեմ, երբե՛ք, երբե՛ք. սանկ գարշ փառութիւն մը քու ազնիւ բարույդ վրայ մակաբերելն անգամ վատութիւն մըն է:

ԲԱՄ. Ո՛չ, ոչ երբեք կրնամ մանալ իմ բարերարս, ո՛չ . . .

ԿԱՍ. Բայց ի՞նչու արցունք կը թափես, կուլաս . . . երբ պէտք է ո՛ր . . . ([illegible]) թաշկինակ մ'ալ չունիմ. որ աչքերս սրբեմ . . . ([illegible]) ձայն մը կ'առնեմ:

ԲԱՄ: Այո՛, ինքն է անշուշտ . . ո՛հ,

ԿԱՍ. Ի՞նչու կ'այլայլիս . . . սիրտս ահա՛ կուգայ:

## ՏԵՍԱՐԱՆ Դ.

### ԱՌՋԻՆՆԵՐԸ ԵՒ ՏԱՐՍԻ

ԿԱՍ. Ինքն է . . . պարո՛ն . . . Տէր . . . Բամէլա Մօրէլ . . . :

ՏԱՐ. Ո՛չ Բամէլա Տարսի . . . կոմուհի մը . . . աղջիկս . . . ([illegible])

ԲԱՄ. Հայրս . . . :

ՏԱՐ. Այո՛. աղջիկս . . . քու հայրդ եմ . . . հայրդ, որուն հրաշալի հրեշտակ մը կերեւաս. հայրդ՝ որ քեզ տեսնելով, իր սիրելույն քու մօրդ յիշատակը բուռն զօրութեամբ իր սրտին մէջ կը կենդանանայ . . . նոյնէ սանկ քու՛ որ քեզ լաւ մը գիտեմ, հիմնամ երեսդ 'ի վեր . . . ո՛հ, ի՛նչ գեղեցիկ ես . . . եւ որչափ ալ բարի ըլլալու ես:

ԿԱՍ. Մի՛ տարակուսիր:

ՏԱՐ. Ի՞նչու աչքերդ դէպ 'ի երկինք կը վերցնես:

ԲԱՄ. Ո՛հ կարծեմ թէ տեսիլ մըն էր՝ որ աչքիս երեւցաւ, անանկ թուեցաւ ինծի՛ թէ մայրս Երկինքէն մեզի կը նայէր՝ ու ժպտելով մեզ կ'օրհնէր:

ՏԱՐ. Աղջիկս, աղջիկս . . . ա՛հ որչափ քեզ պիտի սիրեմ, եւ որչափ երջանիկ պիտի ըլլաս իմ քովս:

ԿԱՍ. Այո՛, որչափ, որչափ . . . ([illegible]) ի՛նչ անտանելի բան, թաշկինակ մը չունենալ:

ՏԱՐ. Աղքատութեանդ սանեն զիս կ'ատէ՞իր:

ԲԱՄ. Կեանքս քեզի համար անցուցի:

ՏԱՐ. Ա՛հ, աղջիկս, չկարծես թէ կամովին բաժնուեցայ մօրմէդ. այլ բաղդաւորող գործքերը զիս հեռու տեղուանք՝ Ամերիկայ ձգեցին. եւ արդէն իմ ընտանեացս քու մօրդ վրայ ունեցած դիւական ատելութիւնը՝ իմ բացակայութեանս բարեպատեհ առիթ գտնալով՝ իրենց վրէժը լուծելու համար իր վրայօք անթիւ անհամար բամբասանք եւ զրպարտութիւնք կը գրէին ինծի եւ անլուր չարիք կը հասցունէին իրեն. եւ ըրած չարութիւններին չերեւնալու համար կողմնակի խրկուած նամակներուն կը խարդախէին . . . հուսկ ուրեմն՝ երբ



Փարիզ վերադարձայ՝ խեղճ մայրդ մեռած էր, աւա՜ղ. եւ դուն կորսուեալ . . . բայց՝ հերիք՝ այս դառն յիշատակները . . . :

ԿԱՍ. Ձեզի բան մը ըսեմ, բարեսիրտ մարդ մըն ես եղեր:

ՏԱՐ. Բայց ինչո՞ւ այլայլած ես՝ աղջիկս, եւ երեսիդ գոյնը նետած . . . :

ԿԱՍ. Ան բան մը չէ . . . իր դայնը իր երեսը բերելուն կերպը գիտեմ ես, անոր դեղը իմ քովս է:

ՏԱՐ, Ա՛հ հա՛:

ԿԱՍ. Ես որ Բամէլայէն վաթսուն եւ մէկերորդ հայրն եմ իրեն երջանկութեան համար ուրշմունք մ'ըլլար էի:

ԲԱՄ. Ո՛հ, լռէ՛, Կասպար:

ԿԱՍ. Անանկ բան մը զոր պարոն կոմսը անշուշտ պիտի պատկէ:

ԲԱՄ. Տէր Աստուա՛ծ . . . :

ՏԱՐ. Շարունակէ՛:

ԲԱՄ. Ո՛հ, ո՛չ, ո՛չ . . , կ'աղաչեմ:

ԿԱՍ. Այո՛ պարոն, աղջկանդ երիկ մը գտանք, բայց թիթի մը չէ, եւ ո՛չ հնավաճառ մը . . . շատ ազնիւ, բարեսիրտ, ազնուական երիտասարդ մը՝ որ Բամէլան սիրելով՝ ինքզինքը անոր սիրցնելուն կերպը շատ աղէկ գտեր էր:

ԲԱՄ. Հա՛յր իմ, այդ ամուսնութիւնը անկարելի բան է.

ԿԱՍ. ՏԱՐ. Անկարելի՛ , . . :

ԲԱՄ. Այո՛:

ՏԱՐ. Ի՞նչ պատճառաւ, աղջիկս, ինծի համար՝ առանց այն մարդը ճանչնալու՝ ստոյգ եմ հիմակուընէ՝ թէ արժանի է քու սիրոյդ:

ԿԱՍ. Ո՛հ. թէ որ անունն ալ ըսեմ . . . :

ԲԱՄ. Մ'ըսեր, կ'աղաչեմ:

ՏԱՐ. ([illegible]) Թո՛ղ որ ես իրեն առանձին հարցնեմ, ինքը թո՛ղ խոստովանի:

ԿԱՍ. Ուրեմն ձեզ միայն թողում:

ՏԱՐ. ([illegible]) սա պարոնը սենեակ մը տար: (Կասպար ծառային ետեւէն կ'երթայ:)

## ՏԵՍԱՐԱՆ Ե.

### ՏԱՐՍԻ, ԲԱՄԷԼԱ.

ՏԱՐ. Ահա միայն մնացինք, աղջիկս, յուսամ թէ ինծմէ բան չես պահեր:

ԲԱՄ. Հա՛յր իմ . . . :

ՏԱՐ. Ո՛հ, շուտ ըրէ՛, գաղտնիքներդ յայտնէ՛ ինծի, ինծմէ ուրիշ ո՞վ կրնայ սիրտդ բանալ:

ԲԱՄ. Ների՛ ինծի հա՛յր, եթէ հիմա չեմ համարձակիր ըսելու եւ ակամայ անհնազանդ կը գտնուիմ ձեր հրամանոյդ, բայց վաղը ամեն բան կիմանաք, վասն զի հիմա ձեզ գտնալուս համար ունեցած անպատում խնդութիւնս զիս կ'այլայլէ, հիմա՝ որ ձեզ գտայ՝ երջանիկ եմ, այո՛ ծայրագոյն աստիճան երջանիկ եմ, եւ ասկէ ուրիշ բանի մը չեմ կարօտիր, հաւատացէք հա՛յր իմ:

ՏԱՐ. Սիրելի աղջիկս, շատ աղէկ, կը զիջանիմ խօսքերուդ, սակայն կը յուսամ որ՝ ի՛նչոր ինծմէ կը ծածկես՝ անշուշտ սրտեկան ազնուութեամբ մը՝ սակայն քու մօրդ . . . այսինքն խորդ մօրդ՝ բայց որ արժանի է քու սիրոյդ՝ անոր ամեն բան պիտի ըսես:

ԲԱՄ. Խորդ մօրս . . .

ՏԱՐ. կամաւոհի Տարսիի՝ որ ամէն բան գիտէ. և որ քեզ կը գրկայր մէջ ինծի պէս սիրով գրըկէ . . . սիրով տեսնես հիմա՝ թէ ի՛նչ բարեկամին և հեզահամբոյր կին մըն է :

## ՏԵՍԱՐԱՆ Զ.

ԱՌՋԻՆՆԵՐԸ. ՊԵՐԹԱ. (յետոյ) ՔՕՆՍԹԱՆ

ՏԱՐ. (պէրթային) Եկուր, սիրելիս, եկուր . . . . ահա աղջիկս . . . . (Բամելային) մայրդ է :

ՊԵՐ. (մեկուսի) Ինքզինքը սիրով մատնէ. (բարձր) Օրիորդ :

ԲԱՄ. (Պէրթան ճանչնալով հը չփոթի և մեկուսի) Ինքը . . . հոս . . . հօրս ամուսինը . . .

ՏԱՐ. Բամելա՛ . . . աղջիկս . . . ի՛նչ կ'ըլլաս :

ԲԱՄ. Հայր իմ . . . միթէ մայրս է տիկինը :

ՏԱՐ. Այո՛, կամաւոհին է աղջիկըս :

ԲԱՄ. (մեկուսի) Ա՜հ :

ՏԱՐ. Ի՞նչ կ'ըլլաս . . . . (Բամելա աթոռին վրայ կ'իյնայ) :

ՊԵՐ. (Տարսին մեկտի ընելով) Թո՛ղ որ օգնեմ իրեն :

ՊԵՐ. (ցած Բամելային) Զգուշացի՛ր որ չմատնուիս . . . յետոյ կը խօսինք :

ՏԱՐ. Ի՞նչպէս եղար . . .

ՊԵՐ. Աղէկ է, աղէկ . . . ահա կու գայ :

ՏԱՐ. (մեկուսի) Ի՞նչ ունի աղջիկս . . .

ՊԵՐ. Կոմս, աղջիկդ շատ գեղեցիկ է, և ահա արդէն իր վըրայ եռանդագին սէր մը կ'զգամ սրտիս մէջ . . . ո՛հ, որչափ երջանիկ պիտի ըլլամ քեզի հետ զանի ապրելու :

ՏԱՐ. (Քօնսթանին որ կ'երևնայ) Ի՞նչ կու գաս :

ՔՕՆ. Կոմս Մորսինը եկեր է՝ ու հետերնիդ անմիջապէս տեսնուիլ կ'ուզէ :

ՊԵՐ. Գնա՛ կոմս, և ես հոս կը կենամ :

ՏԱՐ. Աս միջոցիս Բամելայէս ի՛նչպէս հեռանամ :

ՊԵՐ. Միթէ ես քովը չեմ :

ՏԱՐ. Յուսամ թէ ինքզինքը գըտաւ :

ՊԵՐ. Այո՛, ահա կը տեսնաս՝ որ աղէկ է . . . գնա՛ դուն :

## ՏԵՍԱՐԱՆ Է.

ԲԱՄԵԼԱ. ՊԵՐԹԱ. (յետոյ) ԿԱՍՊԱՐ.

ՊԵՐ. Մօտիկ ըրէ ինծի, աղջիկս . . . տանելիս սուղ է :

ԲԱՄ. Հրամանքդ . տիկին . . . հրամա՞նքդ ես . . . :

ՊԵՐ. Այո՛, ես եմ կոմսուհին . . . այս դիպուածը ոչ քու մըտքէդ կանցնէր՝ և ոչ իմս :

ԲԱՄ. Հրամանքդ հօրս կինը . . . :

ՊԵՐ. Այո, իր որդուած՝ յարգուած՝ պաշտուած՝ ամենասիրելի և ամենակարող կինը :

ԲԱՄ. Արդեօ՞ք ի՛նչ դժոխային հնարքներով, և ի՛նչ սատանայական խաբէութիւններով այդպէս սրտին տէրն եղար :

ՊԵՐ. Ի՛նչ փոյթ . . . ճշմարիտը սա է որ եղայ՝ և եմ :

ԲԱՄ. Եւ ի՛նչ . կու գես որ հիմա դոցե՞մ բերանս, լռե՞մ . . . ո՛հ, ատանկ պարագայի մէջ լռութիւն պահելը մահացու մեղք մըն է, վասն զի հօրս անպատուութեա



նը հաղորդ գտնուած պիտի ըլլամ, ուստի որդեկան պարտաւորութիւնս կ'ստիպէ զիս քեզ մատնելու և ամեն բան յայտնելու :

ՊԵՐ. Կը մատնես զիս, բայց միանգամայն հայրդ կը մեռցնես :

ԲԱՄ. Տէր Աստուած . . . ի՛նչու . . . :

ՊԵՐ. Վասն զի՝ զիս այնչափ կը սիրէ որ՝ եթէ բամբասանքդ լսէ՝ իսկոյն կը մեռնի :

ԲԱՄ. Ո՜հ, անիծեա՜լ սէր . . . :

ՊԵՐ. Փուճ տեղը մ'այրալիս օրիորդ, զիս մօտիկ ըրէ, մի կարծեր երբեք թէ ես նոյն ըլլամ՝ ի՛նչպէս որ Թիւիլրիներուն դրախտին մէջ մեր առաջին անգամ տեսութեան օրը գտար զիս, և երբան ատեն քու սիրելիդ ըլլալով ծանրացաւմն եղայ քեզի, և մինչև անգամ ապաւինացայ. սակայն անկէ ետքը պատահած այլ և այլ դէպքերը բոլորովին փոխեցին զիս, նաև իմ վիճակս. և հիմա որ Երկինք տանիլ անակընկալ և բարեբաստիկ դիպուածով մը զիս քեզի մայր և քեզ ալ ինծի զաւակ ըրին՝ արդէն քու վրադ ունեցած սէրս ու ատելութիւնս սրտէս խոպան ջնջուած ու անհետացած ըլլալով՝ անոր տեղը հիմա սիրոյ և համակրութեան զօրաւոր զգացում մը կ'իմանամ սրտիս մէջ. և ահա պատրաստ եմ'ի բոլոր սրտէ քեզ սիրելու :

ԲԱՄ. (մեկուսի) Ո՜վ Երկինք . օգնութիւն . . .

ՊԵՐ. Տես, օրիորդ, ես զաւակ չունիմ, ի՛նչպէս դուն ալ մայր. և ահա պատրաստ եմ բնական զաւակի մը պէս՝ աղջիկանս պէս սիրելու. և կը խոստանամ քեզի իմ ամուսնոյս՝ քու հօրդ հետ՝ երջանկութեանդ հոգ տանելու, մինչև անգամ հարուստ ազնուական և միանգամայն գեղատեսիլ երիտասարդ մը՝ վերջապէս ուզածիդ պէս ամուսին մը քեզի գտնալու :

ԲԱՄ. (մեկուսի) Անէ՜ծք . . . դըժոխք :

ՊԵՐ. Բայց մեղքս կը մնայ՝ թէ որ այս խօսքերուս՝ դիտաւորութիւնս Ռէնէին վերաբերիլ կարծես, արդէն Ռէնէին ինծի դէմ բանեցուցած անշնորհք և յանդուգն վարքը զիս բոլորովին պաղեցուց իրմէն, և բաւական ժամանակէ հետէ սրտիս չարաչար կ'ատեմ զինքը, և հիմա սիրտըս մինակ ամուսնոյս եմ տուած որմէ ոչ ոք կարող է զիս բաժնել. և խղճմտանքս ալ չթողուր՝ որ աշխարհիս ամենէն բարի և ազնիւ մարդը խաբեմ :

ԲԱՄ. Կեղծաւո՛ր . . . . նենգաւո՛ր :

ՊԵՐ. Ի՛նչ կը յանդգնիս ըսելու :

ԲԱՄ. Ես ի՛նչ կրնամ ըսել այդ դժոխային սուտերուդ դէմ՝ որոնցմով խաբել կը կարծես զիս. և ո՜վ գիտէ՝ ի՛նչ նոր մատնութիւններ և չարաշուք հնարքներ կը խորհիս սրտիդ մէջ այս միջոցին . . . խօսքերդ սուտ, նայուածքդ սուտ, շարժմունքդ սուտ սէրդ սուտ. և դուն ինքնին բոլորովին մարմնացեալ սուտութիւն, անձնաւորեալ խաբէութիւն :

ՊԵՐ. Ո՜հ, անիծեա՜լ աղջիկ . . . (կատաղութեամբ Բամելային վրայ յարձա-

ձեռքն ափէն կապար ներս կը մտնէ )

ԿԱՍ. Կամաց . . .

ՊԵՐ. (շարժում—ընելով) Օ՛հ, դո՛ւն . . . հո՛ս ։

ԿԱՍ. Քու բանիդ չեմ գար՝ հէ։

ՊԵՐ. Զիս մաքիկ կընէիր . . .

ԿԱՍ. Ո՛չ. բայց լսեցի . . . այո՛ լսեցի՝ և մաքիկ ըրի, ինչպէս . . . Գ. Կոմս Տարսին եկաւ ինծի ըսաւ թէ օրիորդ Բամէյլան հիւանդցեր է, լսելուս պէս վազեցի քովը գալու, մէյ մ'ալ սա սրահէն անցնելու ատեն՝ յանկարծ դաշնակ մը զարնուածի պէս կեցած պատկերի մը առջեւ տղերս կապուեցան՝ արձանի պէս մնացի հոն, կարծես թէ այդ պատկերը սպառնալեօք մը ինծի կը նայէր. և իւր խոշոր աչքերէն կրակ կը ցայտէին. երբոր երեւակայութիւնս խանգարելով կը թուէր ինծի թէ շրթունքը պիտի շարժի . . . մէյ մ'ալ տեսնամ որ՝ կրացնէ խօսիլ սկսաւ . . . այո՛, իւր ձայնը ականջիս եկաւ . . . . . բայց պատկերին ձայնը չէր. այլ բուն իսկ կնկան ձայնը . . . այսինքն քու ձայնդ, ինչ որ մի և նոյն բանն է. վասն զի այն պատկերը քու պատկերդ էր. (յայտ) քու կինդ՝ Քանթալան ։

ՊԵՐ. Աղբեր ցնդեր ինչ կըսես մարդ, խե՞նդ ես, մի թէ՞ յիմարանոցէն փախած մինես ։

ԿԱՍ. Ամենուն . . . և քիչ առնէ խելացի ըլլալս կը հասկընեմ քեզի ։

ԲՈՄ. Տէր աստուած . . .

ԿԱՍ. Հրամանքդ օրիորդ, դժուա՞ր հօրդ քովը. ու հանդարտ բանէ սիրած, այո. մի տարակուսիր. պարոն Բէնէն բոլոր սրտէ կը սիրէ զքեզ, ու քեզմէ ուրիշը ոչ սիրեց՝ և ոչ ալ սիրելը մտքէն կանցնէ, և գրաւ կը դնեմ որ հետը պիտի միանաս, աստուծոյ անգամ այսուհետեւ կարող չէ զիս արգելուլ քեզ երջանիկ ընելէ, այո՛, քեզ կատարեալ երջանիկ պիտի ընեմ, դո՛ւն դուն, մի՛ կայնիր, գնա, օրիո՛րդ ։ (Բամէլան կ'երթայ) ։

ԿԱՍ. Ահա՛ միմիակ մնացինք . . . խել մը բաներներ ունիմ քեզի . . . ալ հիմա չես կրնար յանդգնիլ ըսելու թէ Քանթալան չես, և թէ Մարկիզա գացած չես ։

ՊԵՐ. Կը վերյիշե՞ս այդ խելառ խօսքերը, այս թէ ոչ՝ քեզ վըռընտել պիտի տամ ուրկէ ։

ԿԱՍ. Ո՛հ, ո՛չ հիմա ատ բերանները մի բանեցներ ինծի, առանց ատենը անցաւ ։

ՊԵՐ. Քեզ շատ մը պէս հիմա դուրս նետել կուտամ, քաշէ ձայնդ ։

ԿԱՍ. Անկարելի բան ։

ՊԵՐ. Թշուառակա՛ն մարդ ։ (դէպ ի սեղանը կ'երթայ՝ որպէս զանգակը զարնէ )

ԿԱՍ. Ի՞նչ է միտքդ ։

ՊԵՐ. Ծառաներս կանչեմ՝ որ քեզ դուրս նետեն ։

ԿԱՍ. Կեցի՛ր զանգակը կը զարնես բայց կը զղջաս . . . նախ նայինք ու խօսինք . . . ահա ես նստեցայ . . . առանց աթոռներու մէջ նըստելու եմ եղեր, հէ . . . իրաւ որ շատ աղէկ ըրեր եմ քեզ խաղցելուս . . . ահա հարցուցեր ես . . բայց չխօսիլը բաւ՝ թէ այս պարոնէն ելլել և դարձեալ իմ խելքս



բնակարանս գալ՝ քիչ մը դժարկէկ պիտի գայ քեզի, անանկ չէ. հէ։

ՊԵՐ. Ինծ մաքիկ ըրէ . . . լռութեանդ համար ինչ կը պահանջես ։

ԿԱՍ. Հա՛, հա՛, հա՛, ամկա՞լ կուզես սրտալ զիս . . . և որո՞ւն ամկալը ։

ՊԵՐ. Հապա միտքդ ինչ է նայիմ ։

ԿԱՍ. Օհ հօ. կը տեսնուի թէ զիս վերջապէս սկսար ճանչնալ ։

ՊԵՐ. Այո՛, ճանչցայ ։

ԿԱՍ. (Հեգնօրէն) Շնորհակալ եմ ազնուութեանդ ։

ՊԵՐ. Բայց մի կարծեր թէ կըրնաս աչքս փախցնել. աւելի յանցաւորը ես չեմ, և ապացոյցն ալ սա է որ քեզի պէս արդարութենէ փախնողի չապաստանեցայ, և քեզ մեռած կարծելով՝ կրնայի կարգուիլ ։

ԿԱՍ. Անդիմադրելի ապացոյց ։

ՊԵՐ. Եւ այն լռութիւնը՝ որ քեզմէ կը պահանջեմ՝ աւելի քեզի համար օգտակար է, վասն զի թէ որ ես երկու անգամ կարգըւելուս համար պիտի պատժուիմ դուն իբրև մահապարտ պիտի պատժուիս ։

ԿԱՍ. Ետքը՛ ։

ՊԵՐ. Ո՛հ, անվախութիւն մի կեղծեր, գիտեմ ես քու երկչոտ բնաւորութիւնդ դեռ երեկ հետըդ արդարութեան և կախաղանի խօսքը քեզ սարսափեցուց ։

ԿԱՍ. Երէ՞կ, գուցէ . . . բայց հիմա ամենեին չեմ վախնար, և ահա պատրաստ եմ հետդ երթալու ։

ՊԵՐ. Ո՞ւր ։

ԿԱՍ. Արդարութեան ։

ՊԵՐ. Կեցի՛ր ։

ԿԱՍ. Թէ որ կուզես՝ հոս կանչել տանք ։

ՊԵՐ. (սարսափած) Լռէ՛ ։

ԿԱՍ. Կը տեսնե՞ս, որ վախցողը ես չեմ ։

ՊԵՐ. Խօսք մըն ալ, վերջապէս ինչ բանով կրնաս գոհ ըլլալ ։

ԿԱՍ. Առաջարկութիւն մը . . . շատ աղէկ . . . պայմանաւ մը մինակ քեզ ազատ կը թողում . . . (մեկուսի) առ այժմ . . .

ՊԵՐ. Ի՞նչ պայմանաւ ։

ԿԱՍ. Բամէլան Բէնէին հետ կարգուելու միջոցներուն հոգտանելու պայմանաւ ։

ՊԵՐ. Ի՞նչպէս ։

ԿԱՍ. Գ. Կոմսին յայտնելով՝ թէ դուն կը սիրէիր Բէնէն, բայց թէ Բէնէն մերժեց քու սէրդ ։

ՊԵՐ. Սուտ է. Բէնէն զիս կը սիրէ ։

ԿԱՍ. Խնդալու խօսք . . . սաոփ յանձն կառնուս՝ անանկ չէ՞ . . արդէն կենացդ մէջ գուցէ առաջին անգամ չկատակ խօսք մը բաց կ'ըլլաս, խօսք տուր թէ. ամէն բան պիտի խոստովանիս Կոմսին։

ՊԵՐ. Բայց չե՞ս մտածեր՝ որ այդպիսի յայտնութիւն մը կրնայ զիս մեռցնել ։

ԿԱՍ. Ատ իմ խառնուելու բանս չէ ։

ՊԵՐ. Ուրեմն անհնարին է որ ես կարող ըլլամ այդպիսի խոստովանութիւն մը ընելու, թող որ յուսահատութեամբս մեռնիմ, բայց չեմ թողուր որ իմ սիրածս ուրիշին ըլլայ ։

ԿԱՍ. Դուն գիտես, ուրեմն ես

յանձն կ'առնում ամեն բան Գ. Տարօնին յայտնելու ։

ԳԷՐ. Քեզի չի հաւատար ... այն մարդը որ կոյր զկուրօրէն կը սիրէ զիս՝ աւելի ինծի պիտի հաւատայ՝ քան թէ քեզ:

ԿԱՍ. Ո՛հ գիտեմ թէ ի՛նչ վարպետուհի մըն ես, և ստախօսութիւնը չարութեանց գլխաւոր գործիքն է. բայց երբ քու ստութիւններդ խոստովանելու համար չըսաւեն իմ խօսքերս՝ ապացոյցները բաւական պիտի օգնեն ինձ ։

ԳԷՐ. Ապացոյցները ... և ո՞րոնք են նոքա:

ԿԱՍ. Ի՛նչ զարմանալի հետաքրքրութիւն է այդ ։

ԳԷՐ. Առանձին խօսքերուդ խենդը կը հաւատայ ։

ԿԱՍ. Ըսածդ ստուգելու համար միայն մի պատմեմ քեզի, լաւ ուշ դիր ։ Թիկի մը՝ հեռավաճառ մը ամեն գիշեր փողոցները կըպտտի և գետնէն ամեն տեսակ բան կը ժողվէ իր ապրուստին համար ... անիկա մը կայ, գիշեր մը հանդէս կար այս պալատին մէջ ... կառապան մ'ան Թիկին ալ նոյն գիշերը բաց դիպուց այս պատուհանին տակէն կանցնէր, և նամակ մը գըտաւ. որ Գ. Բէնէին ուղղուած էր .... կարծեմ՝ այդ նամակը գրողը պիտի գիտնաս դուն, հէ:

ԳԷՐ. Ո՛հ: (մէկդի) ապացոյց իր վրա՞ն է ... ։

ԿԱՍ. Իրաւ է թէ՝ այն նամակը ձգուած և կէս մը այրած էր, բայց մնացածն ալ բաւական կը գտնուի, այն կիսայրած կտորուանքն ալ լոկին ամեն բան կիմացնէն Գ. Տարօնին, և աչուըները կը բանան ։ — Ահա՛ Քաղթարլան այս ապացոյցն է որ պիտի ցցնեմ կոմսին՝ թէ որ առաջարկութիւնս ընդունելու չըլլաս ։

ԳԷՐ. Չէ .. կ'ընդունիմ, և կըկատարեմ ուզածդ ։

ԿԱՍ. Երբ որ ուզելու ըլլամ։

ԳԷՐ. Այո՛, երբ որ ուզելու ըլլաս ։

ԿԱՍ. Ինծի նայէ ... երեսս նայէ ... նոր սատանայութիւն մը չի բանեցնես ... զգուշացի՛ր ու չխաղկ ձանձան ձեռքերդ մի՛ ձգեր. ապա թէ ոչ՝ Քաղթարլան, քեզ այս անգամ իրաւցնէ կը խղդեմ. բայց ոչ թէ ծովու մէջ այլ ուրիշ կերպով վազը կը տեսնուինք:(կ'երթայ)

## ՏԵՍԱՐԱՆ Թ.

ԳԷՐ. (առանձին) Տէր Աստուա՛ծ ... աս ի՞նչ է ... արդեօք ի քուն եմ թէ արթուն եմ ... ի՞նչ էր՝ որ լսեցի ... ի՞նչ եղա՞ւ ... ո՞ւր եմ ... ի՞նչ կըլլամ ... և ի՞նչ պիտի ըլլամ ... ո՛վ յաւիտեն կատարութեանս ... այս ի՛նչ անակնկալ հարուած ... ո՞ր մէկ աղէտներուս վրայ ողբամ ... որ մէկ ցաւերուս վրայ կոծիմ ... մէկ կողմէն սիրոյս հակառակորդ ... աչուոր աւոյեան մը գէմս ելնելով ... որ բուռն զօրութեամբ սիրաս յափշտակել կ'արտանայ ... միւս կողմէն՝ որ գժնդակագոյնն է, այս մեծահարուստ ձախութիւններէն՝ որոնց մէջ երկւասող կը փայլէի յանկարծ՝ քաղցր երազէ մը արթննալու պէս խաւար զրկուելով՝ գարձեալ առաջին թշուառութեանց և յաւին



չքաւորութեանց տարտարոսը գահավէժ գլորել ... աւա՛ղ ... ո՛վ Երկի՛նք, Երկի՛նք ... ։

# ՊԱՏԿԵՐ Բ.

(ԿԱՍՊԱՐ Ի ԲԱՆՏ)

## ՏԵՍԱՐԱՆ Ա.

ԿԱՍՊԱՐ (գետինը պառկած, նստը) ԳՐԱՄԻ և չորս հոգի վերարկուներով պլլուած կու գան ։

ԳՐԱՄԻ ՈՒ ԱՆՁԻՆՔ

ԵՐԳ

Մեղ. մեղ. կամաց գալենք
Մեղ. մեղ. չ'արթնցնենք
Բանտարկեալնիս կը գտնանք
Ըղձուցանանք որ չ'արթննայ ։
(Գրամի Կասպարին քովը ծունր [illegible] կը դնէ)

ԿԱՍ. (արթննալով) Ո՞վ է հոն ։

ԳՐԱ. Ես քու բանտապետդ ։

ԿԱՍ. Ա՛հ, իրաւ, մոռցեր էի թէ՝ բանտն եմ ... զիս հոս բերելու առեն ըսիր թէ այս բանտը ...

ԳՐԱ. Մարդասպանաց բանտն է։

ԿԱՍ. Մարդասպանաց ...

ԳՐԱ. Կերեւայ թէ յանցանքդ շատ մեծ է, որովհետեւ դատաւորէն զատ ուրիշ մէկը չի կրնար գալ քովդ ։

ԿԱՍ. Դատաւո՛րը ... ո՛հ, ո՞ւր է, գար մէյմը ... ո՛րչափ պէտք ունիմ իրեն ... նախ իրմէ պիտի խնդրեմ որ Քաղթարլանն ալ հոս բերել տայ ... գուցէ երկու յանցաւորք մէկ տեղ ըլլալով ... ո՞ւր, զիս մինա՞կ կը թողուս ։

ԳՐԱ. Այո՛, կերակուրդ բերի, և կերթամ:

ԿԱՍ. Կաղաչեմ ուրեմն, ժամ մ'առաջ դատաւորը հոս դայ ։

ԳՐԱ. Արդէն պիտի գայ ... կեցիր բարով:

ԿԱՍ. Ի՛նչ .... կանթեղն ալ կ'առնես ։

ԳՐԱ. Այո՛, հրամանն ատանկ է ... և քնանալու համար լոյսի պէտք չունիս ։

ԿԱՍ. Քնանա՛մ ... ա՛հ ...

ԳՐԱ. Գիշեր բարի ։ (կ'երթայ)

ԿԱՍ. Ո՛վ թշուառութեանս ...

ԳՐԱ. (դառնալ) Մոռցայ քեզի իմաց տալու թէ՝ բանտիս մէջ խեղ մը զինուորներ կան՝ որոնք հրացաններով կ'սպասեն ... և հրացաններն ալ լեցուն են .... գնտակներով (դուրս երթալով) գնտակներով ։

ԿԱՍ. Ո՛հ, ես թշուառ ապրելու համար եկեր եմ այս աշխարհքըս. և ինչու, ի՞նչ ըրի որ, ինչու պիտի չարչարուիմ միշտ. մի թէ Աստուած արդար չէ ու չի տեսներ իմ անմեղ վարքս և յաւիտենական փշերս ... ահա բանտը մինակ պակաս էր ... Քաղթարլանը մտնելու համար գնտակներէն չ'պիտի վախնամ, Բաժելային օգնութեան հասնելու համար՝ ո՛հ, ամեն բան աչքս առի ... աս պատուհանը ... բայց գուցէ պահապաններ գտնուին. անշուշտ, (լոյս մը կ'երեւայ) լոյս... հասէք, հասէք ... օգնութիւն.

(լոյսը աներեւոյթ կըլլայ) ո՛հ, ո՛ւր է՝ որ գնաց . . . ի՛նչպէս ըսեմ . . . (լոյսը նորէն կ'երեւայ) ահա դարձեալ լոյս մը . . արդեօք պահապան զինուորներն են . . ամենեւին . անոնք առանց լապտերի կը պտըտին . . . (պատուհանէն վեր պօռալով) ո՛վ որ ես նէ, անցուո՛ր, գըթա՛ խեղճ բանտարկեալի մը :

ԹԻՊ. (ներսէն) Ո՞վ է հոն :

ԿԱՍ. Սա ձայնը . . .

ԹԻՊ. Ո՞վ կայ հոն կըսեմ:

ԿԱՍ. Օ՛հ, հա՛յր Թիպօն է, (բարձր) ես եմ, հայր Թիպօ . . . ես . . . ես . . . անունս ալ մոռցայ :

ԹԻՊ. Կասպա՛ր . . . իմ հոգեզաւակս . . .

ԿԱՍ. Այո, այո . ճիշդ՝ բուն իսկ Կասպարը . . . Կասպարը . . . բանտն եմ բանտը . . . հասիր . . . ազատէ զիս :

ԹԻՊ. Կայնէ՛, կայնէ՛ . . . դուն չես կրնար վեր ելլել, բայց ես կրնամ վար իջնալ:

ԿԱՍ. Ի՞նչ պիտի ընես :

ԹԻՊ. Նախ սա լապտերս առ : (շուանով մը վար կ'իջեցնէ լապտերը)

ԿԱՍ. Ա՛հ :

ԹԻՊ. Բռնեցի՞ր :

ԿԱՍ. Բռնեցի :

ԹԻՊ. Կայնէ նայիմ հիմա : (պատուհանէն կ'իջնայ)

## ՏԵՍԱՐԱՆ Բ.

ԹԻՊՕ, ԿԱՍՊԱՐ

ԿԱՍ. Ա՛հ, հայր իմ:

ԹԻՊ. Ի՞նչպէս եղաւ որ այս ծակն ինկար : (Երաժշտութիւն :)

ԿԱՍ. Ես չինկայ, այլ զիս դրին հոս որ մարդասպաններուն համար շինուած է :

ԹԻՊ. Ինչպէս բանտ, ասիկայ բանտ չէ :

ԿԱՍ. Հապա՛ :

ԹԻՊ. Ասիկայ քարայր մ՚է՝ ուրուն վրան Պ. Բօլիսար նօտարը կը նստի, անանկ նօտար մը՝ որ միանգամայն . . . ինչ որ է . . . զինքը աղէկ կը ճանչնամ :

ԿԱՍ. Հաւատալս չիգար ըսածիդ. ստոյգ գիտե՞ս թէ այդպէս է, չ՚սխալի՞ս :

ԹԻՊ. Ո՛հ, չէ, ահա ինչպէս որ քեզ գիտեմ՝ որ Կասպարն ես, անանկ ալ ստոյգ եմ ըսած խօսքիս . . . քանի քանի անգամ եկեր եմ ես այս տունը, և Պ. Բօլիսարին ալ ինչ կենդանի ըլլալը լաւ գիտեմ . . . ագահ մը, դահիճ մը, սադայել մը, գազան մը, շուն մը . . . ինչ գիտնամ՝ սատկուելին խել մը ածականներու արժանի . . . բայց ի՞նչպէս եղաւ՝ որ բռնուեցար :

ԿԱՍ. Կամքին պալատէն ելայ՝ ու դրախտը կերթայի, ճամբան յանկարծ երկու զինակուոր անձինք դէմս ելան՝ զիս բռնեցին՝ աչքս բերանս գոցեցին, մէյմ'ալ աչքս հոս բացի :

ԹԻՊ. Հա՛մ հա՛մ հա՛մ . . . բայց սա մարդը ի՞նչ ունի հետդ :

ԿԱՍ. Այս մարդը հիմա կը հասկընամ ինչ կ՚ուզէ . . . . իմ կինս այս մարդը սոկով որսացեր է . . . սա սա է, ուրիշ բան չէ՛ շուտ ելլենք երթանք :

ԹԻՊ. Մ՚աճապարեր, անանկ ո՞ւր պիտի երթանք, և ի՞նչպէս պիտի կրնանք այս ծակէն ելլալ:

ԿԱՍ. Սդ .



ԹԻՊ. Ի՞նչ կայ :

ԿԱՍ. Ոտքի ձայն կառնեմ . . . բանտապետն է՝ որ սանդուխներէն կ'իջնայ, նախ պէտք է զանի խղդենք :

ԹԻՊ. Չէ . չէ . Թո՛ղ որ ներս մտնայ՝ նայինք ինչ է միտքը :

ԿԱՍ. Աղէկ ըսիր, ուրեմն մարէ կանթեղդ ու պահուըտէ :

ԹԻՊ. Ո՞ւր պահուըտիմ:

ԿԱՍ. Անկողնիս տակը, շուտ ըրէ : (Թիպօ կը պահուըտի :)

## ՏԵՍԱՐԱՆ Գ.

ԿԱՍՊԱՐ, ԳՐԱՍԻ, ԹԻՊՕ (պահուըտած) Բօլիսար. և անձինք՝ վերարկուներով պլլուած :

ԳՐԱ. Պարո՛ն, դատաւորդ եկաւ . ասք ե՛լ:

ԲՕԼ. (Բանտապետին) Թո՛ղ լապտերը և քաշուեցէ՛ք :

ԳՐԱ. Շատ աղէկ . . . (ցած) վախկոտ մըն է եղեր :

ԲՕԼ. (ցած) Շատ մի՛ հեռանար:

ԹԻՊ. (մէկդի) Ես ալ պահուըտած եմ:

ԲՕԼ. Մօտեցի՛ր յանցաւո՛ր . . . կը տեսնաս որ արդարութիւնը ուշ կամ կանուխ կը գտնայ յանցաւորը ու կը պատժէ :

ԿԱՍ. (մէկդի Ի՛նչ շան երես է եղեր սա մարդը . . . համբերենք . . .

ԲՕԼ. Տասը տարի առաջ Մարսիլեայի անցքը յայտնուեցաւ, և կը գթամ քու վրադ, խեղճ մարդ, գէշ վիճակի մը մէջ ես :

ԹԻՊ. (մէկդի) Հապա դուն, աներես :

ԲՕԼ. Բայց քու կնկանդ վարքն ալ գիտեմ, եթէ ամեն բան շիտակ խոստովանելու ըլլաս, դուցէ անոր յանցանքովը՝ քու կեանքդ քիչ մը թեթեւնայ :

ԿԱՍ. (մէկդի) Նենգաւոր . . . ի՞նչ է միտքը, ի՞նչ ըսել կ՚ուզէ :

ԲՕԼ. Արդարութիւնը՝ ուրիշ երբեք բան մը չ՚ծածկուիր . անհրաժեշտ ամեն բան կիմանայ, մինչեւ անգամ իմացայ և գիտեմ թէ Րէնէ անունով մարդ մը կընկանդ նամակ մը գրեր է . և այն նամակը քու ձեռքդ անցեր է :

ԿԱՍ. (մէկդի) Հիմա հասկըցայ . . . :

ԲՕԼ. Անանկ չէ՞ :

ԿԱՍ. (մէկդի) Այս նամակը ձեռքէս առնելու համար էր որ այս ծակը դնել տուաւ զիս . . . :

ԲՕԼ. Չե՞ս պատասխաներ :

ԿԱՍ. Այո՛, պարո՛ն, քովս է :

ԲՕԼ. Ո՞ւր է, նայիմ :

ԿԱՍ. (ծոցէն թուղթ մը հանելով) Ահաւասիկ սա է :

ԲՕԼ. Տո՛ւր ինծի :

ԿԱՍ. Ո՛հ, չ՚աճապարենք :

ԲՕԼ. Անզգա՛մ, այդ նամակը կուզեմ ըսի, ի՞նչ յանդգնութիւն է . . . :

ԿԱՍ. Ուզելուդ վրայ երբեք սարակոյս չունիմ, բայց այն նամակը ուրիշի մը պիտի տրուի :

ԲՕԼ. Զիս կը զայրացնես . բանտի մը մէջ՝ իմ իշխանութեանս տակը այդ ի՞նչ համարձակութիւն . պարզ խենդութիւն մը կըսեն ասոր . վասն զի ինչպէս որ ըլլայ՝ կրնամ ես այդ նամակը առնել . առանց բռնութեան տուր կըսեմ:

ԿԱՍ. Այո՛, գիտեմ որ ուխտեալ ես այս նամակը ձեռքէս կորզելու՝ ո՛ և է միջոցաւ, որպէս

զի կոմսուհի Պերթային՝ պալիկն իմ կնկանս տանիս, անանկ չէ՞, պարոն Բօլիսար . . . հէ՞ :

ԲՕԼ. Հէ՛ն :

ԿԱՍ. Ո՛հ, ես քեզ կը ճանչնամ, անզգամ, դու դատաւոր չես՝ այլ անզգամ մը :

ԲՕԼ. Ա՛հ թշուառական . . . աղէկ որ վրաս զէնք առեր եմ : (Ծոցէն ատրճանակ մը կը հանէ, և նոյն միջոցին Թէպօն ետեւէն ցատկելով ու ատրճանակը յափշտակելով մէկ կ'ընէ) :

ԿԱՍ. Վար ա՛ռ սա թամթերդ :

ԲՕԼ. Օ՛հ :

ԿԱՍ. (Թէպօյին յետոյէն ատրճանակը առնելով) Զայն մի՛ հաներ, մի՛ . . հիմա . . .

ԹԻՊ. Կայնէ՛ սա նզովածը կապեմ :

ԿԱՍ. Մի՛ շարժիր անիծեալ : (Թէպօ կը կապէ զԲօլիսարը) :

ԹԻՊ. Լռութի՛ւն . . . կուգան կոր : (Դուռը ետեւ կը պահուըտին, Պրոսի ու Էրկիւ անցնին ներս մտնալու տեղէն կամացուկ մը դուրս կը սպրդին) :

ԲՕԼ. Բռնեցէ՛ք սրիկան, բռնեցէ՛ք :

ԿԱՍ. (Դրանէն դուրս ելլելով վրան գոցելով) Կեցէ՛ք, կեցէ՛ք, հիմա կուգանք ձեզ ալ կ'ազատենք : (Պրոսի ու անցնին գետինը կ'իյնան) :

# ԱՐԱՐՈՒԱԾ Ե.

## ՊԱՏԿԵՐ Թ.

(ՎԱՐ ԱՌԷՔ ԴԻՄԱԿՆԻԴ)

### ՏԱՐՍԻՒՆ ՏՈՒՆԸ ԼՈՒՍԱՒՈՐԵԱԼ ՊԱՐՏԷԶ ՄԸ

### ՏԵՍԱՐԱՆ Ա.

ՏԱՐՍԻ, ՄԱՔՍԻՄ, ՄՕՐԻՍ, ԴԻՄԱԿԱՒՈՐՔ, ՀՐԱՒԻՐԵԱԼՔ

ԽՄԲԵՐԳ

Հեռի մեզմէ տխրութիւն
Պարահանդէս բացուեցաւ
Սրտեր ցնծութեամբ լեցուն
Մոռնան իրենց հոգն ու ցաւ.
Բարեկամք ու եղբայրներ
Եկէք պարենք անվեհեր
Տիկիններն են շքեղ
Զանոնք չ'ուզենք են ագեղ.
Ձեռք զարնենք անոնց մէջքին
Սէրս մը տանք փափուկ լանջքին
Դառնանք 'ի ձախ և 'ի յաջ
Մէկ մը ետ մէկ մը յառաջ :

ՄԱՔ. Իրաւցնէ կոմս, այսի՞նչ փառաւոր հիւրընկալութիւն և ի՞նչ շքեղատեսիլ հանդէս :

ՄԱՔ. Հանդէսին Դիւցազնուհին դեռ չ'տեսնուիր :

ՏԱՐ. Իմ աղջիկս, զոր դանալը քեզի կը պարտիմ . . . հիմա կուգայ (ուրիշէ մը կը ծածկէ :)

ՄՕՐ. (Մտախոհ) Բայց միթէ կոմսուհոյն համար չէ՞ այս հանդէսը :

ՄԱՔ. Ո՛չ, Օրիորդ Տարսիին համար է . չես գիտեր ի՞նչ սրտաշարժ պատմութիւն մըն է : (Մօրիսին թևը կը մտնայ, ու խօսելով կը պտըտին)



### ՏԵՍԱՐԱՆ Բ.

ԱՌՋԻՆՆԵՐԸ, ՊԵՐԹԱ, ԼՕՍԱՆ.

ԼՕՍ. (Պերթան իր թևը առած) Ընդունէ՛ իմ շնորհաւորութիւններս Տիկի՛ն . . . այս հանդէսը շատ վայելեր է ձեզի . . . պաշտելի էք . . . (ցած Մօրիսին) բայց վերջին աստիճան անտանելի է, հետը չի խօսուիր այս գիշեր (Պերթա կը նստի, և քանի մը երիտասարդ կուգան հետը կը խօսին :)

ԼՕՍ. (Մօրիսին) Կոմս, ամիս մը առաջ անդամ մ'ալ այս տունը հանդէս մը տրուեցաւ, և այն հանդէսը մենամարտութեամբ վերջացաւ . տեսնանք՝ ասկից ի՞նչ պիտի վերջանայ :

ՄԱՔ. Ո՛հ . չեմ խաբուիր :

ԼՕՍ. Ո՞րու կը նայիս :

ՄԱՔ. Հեռու եկուր, մեծ սրահն երթանք :

ԼՕՍ. Ի՞նչ է միտքդ :

ՄԱՔ. Եկուր որ ըսեմ : (կ'երթան)

ՏԱՐ. (Պերթային) Ինչու Բամէլան հետդ չէ :

ՊԵՐ. Վասն զի չուզեց հետս ներկայանալ :

ՏԱՐ. Ի՞նչ ըսել է . երթամ նայիմ :

ՊԵՐ. Շատ տխուր է . պատճառը չուզեց ինծի ըսել :

ՏԱՐ. Ա՛հ, հասկցայ :

ՊԵՐ. Դուն գիտես եղեր ուրեմն :

ՏԱՐ. Այո՛, վասն զի հոս չեկած՝ կուզէին զինքը մէկու մը հետ կարգել . . . բայց պէտք է որ նախ ես իմանամ՝ թէ ով է :

ՊԵՐ. Աղջիկդ ուզող մարդուն անո՞ւնը :

ՏԱՐ. Դեռ անունն ալ չի սորվեցայ :

ՊԵՐ. Ուրեմն, գուցէ այս գիշեր ես ըսեմ քեզի :

ՏԱՐ. Դո՞ւն :

ՊԵՐ. Կը յուսամ :

ՔՕՆ. (Գալով՝ Տարսիին) Օրիորդ Բամէլան՝ աղջիկնիդ ձեզ կուզէ տէր :

ՏԱՐ. (Երթալով մեկուսի) Ի՞նչպէս կըլլայ որ Պերթան այդ մարդը կը ճանչնայ : (կ'երթայ)

ՊԵՐ. Քօնսթան :

ՔՕՆ. Հրամմէ տիկի՛ն :

ՊԵՐ. Պ. Բօլիսարը դեռ չ'եկա՞ւ :

ՔՕՆ. Ո՛չ, տիկի՛ն : (կ'երթայ)

ՊԵՐ. (մեկուսի) Այն նամակը որ ինծի խոստացաւ բերելու . . . ո՞ւր մնաց . . . . . կեանքս հիմա այն թղթէն կախեալ է . . . ա՛հ, երբ այս տուտու Րէնէին տունը գացի, ոտքն ինկայ, լացի, աղաչեցի . . . այն քարասիրտը . . . այն դահիճը . . . միայն Բամէլան կը սիրեմ ըսաւ ինծի . . . մերժեց . . . անհամբեր ըսաւ իմ սէրս, որով մշտակէզ կայրիմ ու կը տոչորիմ . . . բայց Րէնէ, անգութ՝ անօրէն Րէնէ . չպիտի տալ քեզի այդ սէրը . . . ես միայն վրէժս առնեմ . . . բնաւ հոգս չէ, թող ետքը մեռնիմ . . . վրէժս առնեմ կ'ըսեմ, բայց ի՞նչպէս . . . (Պերթայ այս խօսքերը ըսելու ատեն՝ երիտասարդ մը կուգայ ու դոմինոյով ծածկուած, գլուխը կարմիր) :

ՄՕՐ. (Երիտասարդին նայելով) Իրաւ-

որ սա կարմիր գլխակաւորը ճանչցայ։

ՄԱՔ. Դուն միշտ կը ճանչնաս, չճանչցածդ չկայ։

ՄՕՐ. (ցած Պէրճոյին) Սա երիտասարդը կը տեսնե՞ս։

ՊԷՐ. Կը տեսնեմ. ի՞նչ կայ։

ՄՕՐ. Գիտե՞ս ով է։

ՊԷՐ. Չեմ գիտեր։

ՄՕՐ. Րէնէն . . . (կը հեռանայ Մօրիս։)

ՊԷՐ. Րէնէ՞ն . . . Րէնէն հո՞ս . . . ըսել է թէ՝ զիս տեսնելու համար եկեր է . . . ո՛հ։

ՄԱՔ. Ահա՛ Օրիորդ Տարսին։

ԱՄԷՆՔԸ. Օրիորդ Տարսի՜ն . . .։

ՏԵՍԱՐԱՆ Գ.

ԱՌԱՋԻՆՆԵՐԸ, ԲԱՄԻԼԱ։

ՄԱՔ. Ի՞նչ չքնաղ է։

ՄՕՐ. Շա՜տ չքնաղ։

ՄԱՔ. Կամուհիէն աւելի աղուոր է։

ՄՕՐ. Անտարակոյս։ (Երիտասարդը Բամիլային կը մօտենայ։)

ՏԱՐ. Կաքաւի նուագարան կը ջալէն, և ահա քեզ հրաւիրելու կուգան։

ՊԷՐ. (Մեկուսի) Այո՛, անտարակոյս ինքն է։

ՐԷՆ. (ցած Բամիլային) Հինգ վայրկեան հետդ տեսնուիլ կուզեմ։

ԲԱՄ. Տէր Աստուա՜ծ։

ՊԷՐ. (Մեկուսի) Կը խօսին, և Բամիլան դողայ։ (Եփրեմին կանչելէ)

ԲԱՄ. Րէնէ՛, եթէ հայրս գիտնայ՝ թէ հոս եկեր ես . . .։

ՐԷՆ. Զիս կը մեռցնէ, անանկ չէ. թո՛ղ անանկ ըլլայ. հոս եմ չեմ երթար։

ԲԱՄ. Սիրոյս համար կ'աղաչեմ, գնա՛, գնա՛ . . . վաղը կը գրեմ քեզի և . . .։

ՊԷՐ. (Մեկուսի) Ի՞նչու չուզեր հետս տեսնուիլ։

ՐԷՆ. Բամիլա՛, անհրաժեշտ հետդ տեսնուիլ կուզեմ. եկո՛ւ կըսեմ, եկո՛ւ։

ՊԷՐ. (Բարձր ձայնով ու Քէթրինին անցնելով) Վայրկեան մը կեցէ՛ք։ (Ընդհանուր շփոթութիւն) — Միթէ կը վայլէ՞ Կոմս, և հրաման կուտա՞ք որ մէկը առանց իր գլխակը վար առնելու յանդգնի զՕրիորդ Տարսին կաքաւի հրաւիրելու։

ԲԱՄ. Մերժեցի տիկի՛ն, մերժեցի . . .

ՐԷՆ. (Բարձր) Տիկի՛ն։

ՊԷՐ. (Մեկուսի) Ինքն է։

ՏԱՐ. Ի՞նչ է այս Պէրթա։

ՊԷՐ. Կո՛մս, այն անունը՝ որ քեզմէ կը ծածկէին՝ հիմա պիտի ըսեմ քեզի։

ԲԱՄ. Տիկի՛ն . . .

ՊԷՐ. (Մեկուսի) Գոնէ՛ վրէժս առնեմ. (Բարձր) Հիմա պիտի ճանչնաս այն մարդը որ աղջկանդ հետ գաղտնի տեսնուելու նպատակաւ՝ ծպտեալ կերպարանքով յանդգնեցաւ մինչեւ հոս գալու. այն անօրէնը՝ զոր արդէն լաւ կը ճանչնաս. (Րէնէին) Օ՛հ ուրեմն, վար առ գլխակդ։ (կը զատէ դիմակը վար կ'առնէ)։

ԲԱՄ. (պօռալով) Րէնէ՛ն . . .

ՏԵՍԱՐԱՆ Դ.

ԱՌՋԻՆՆԵՐԸ ԵՒ ԿԱՍՊԱՐ.

ԿԱՍ. Այո՛, վա՛ր առէք դիմակնիդ, ամէնքդ ալ վար առէք։



ՊԷՐ. (Մեկուսի) Ո՛հ, աղմո՛ւկ է, աղմո՛ւկ։

ՏԱՐ. Րէնէն իմ տունս . . .

ԿԱՍ. Այո՛, պարոն, իրաւունք ունի գալու։

ՏԱՐ. Իրաւո՞ւնք . . .

ԿԱՍ. Անտարակոյս, (նամակ մը ցուցնելով) և ահա իր հրաւիրագիրը։

ՊԷՐ. (Մեկուսի) Ա՜հ, հիմա կորսուեցայ . . .

ԿԱՍ. Ո՛հ, փառք Աստուծոյ. ճիշդ և ամենաճիշդ ատենին հասայ. ձեզի ցուցնելու համար սա...

ՏԱՐ. (Նամակը առնելով) Այս կեղծ նամակը . . .

ԿԱՍ. Այո՛, ամիս մը առաջ այս պալատիս պատուհաններուն առջեւէն անցնելու ատեն գետնէն ժողվեցի. ան ատեն ալ ճիշդ ատանկ խնջոյք մը կար հոս . . . այս նամակը Պ. Րէնէին գրուած էր. և ասոր համար թուր մն ալ կերաւ խեղճը առանց յանցանք մը ունենալու, վասն զի Րէնէն բարի մարդ մ՚է, և իր կեանքը վտանգի մէջ դրաւ՝ նամակին հեղինակը ազատելու համար՝ այն որ այս կինն էր։

ՏԱՐ. Ո՛հ, անպարտութեանս . . . վա՛տ և ապերախտ կին։

ԲԱՄ. Հա՛յր իմ, Հա՛յր իմ . . .

ԽՄԲԵՐԳ

Համեստ կարծեցեալ տիկինը սիրուն
Զոր մենք տեսած ենք առաւու իրիկուն
Վարպետ ձեւերով զամենք խաբելով
Ամէն մարդէ ալ կը սպասէր գորով
Հասկցանք հասկցանք
կին չէ եղեր այլ փորձանք.
Զարդերն ու բեհեզ, մարգարիտ ու գոհար
Ինքն ալ անոնցմով արփոյն պէս ցոլար.
Իրեն չէն եղեր այն ամէն բաներ
Դիւրահաւան ենք. զմեզ է խաբեր.
Իմացանք իմացանք
Իմացածնուս զարմացանք։

ՏԱՐ. Վրէժխնդրութի՜ւն։

ԿԱՍ. (Քէթրինին անցնելով) Պ. Կո՛մս կեցէ՛ք . . . ձեզի չլինար վրէժ առնել իրմէ. և ոչ ձեր վրէժխնդրութեան արժանի է. արհամարհանք մը ընելնիդ միայն բաւ է ձեր բարկութիւնը գոհացնելու համար վասնզի ձեր անունը չէր որ անպատուեց, որովհետեւ իրենը չէր այն անունը որ կը կրէր, որուն ոչ իրաւունք ունէր կրելու, և ո՛չ իսկ արժանի։

ՏԱՐ. Զուրցածներէդ բան մը չեմ հասկնար։

ԿԱՍ. Ըսել կուզեմ թէ՝ այս կինը՝ որ զինքը Կամուհի Տարսի կանչել կուտար, և որն որ ադամանդներով և փառացի զգեստներով զարդարուած այս հոյակապ պալատիս մէջ կը գտնուանար՝ Կասպարին կինն է . . . խեղճ Կասպարին . . . հնավաճառ Կասպարին . . . (ցած) վերջապէս իմ կինս . . .։

ԱՄԷՆՔԸ. Իր կի՛նը . . .։

ԿԱՍ. Այո՛, իմ կինս, իմ, իմ . . . սակայն մի կարծէք թէ այս կինը Կասպարի պէս խեղճ Թիթիէ մը կ'ամչնայ, այլ ինքն՝ Կասպարն է որ ատանկ հիանալի կին մը ունենալուն համար խայտելուն

գետինը կը մնայ . . . սանկ սոսկալի կին մը՝ որ ձեր անունը՝ ձեր աղամանդները՝ ձեր ստացուածքը՝ իր գլխուն հնարքներովը ամենն ալ գողցաւ . . . բայց հէ հէ, ատենն եկաւ՝ որ բոլորն ալ ես պիտի տա[illegible] . անանկ չէ տիկին, այսի[illegible] Քաղթալան, չեմ կարծեր որ այդ հագուստներով արդարութեան դիմացն ելլաս ։

ԱՄԵՆՔԸ. Արդարութեա՜ն ։

ԿԱՍ. Այո՛, կարծեմ թէ երկու անգամ կարգւող կնիկը անպատիժ չեն թողուր ։

ՊԵՐ. Բայց այդ արդարութիւնը՝ որով իմ աչքս կը վախցնես, քեզի պէս մարդասպանը առանց պատժի կը թողու՞, որ քու պատիժդ կախաղանն է ։

ԿԱՍ. Այո, բայց պիտի տեսնայ քեզ՝ որ մեռած չես, մանաւանդ որ շատ ալ առողջ ես . վերջապէս ինչպէս ալ որ ըլլայ՝ նէ՝ թող ըլլայ, արդարութիւնը միշտ արդար է ։

## ՏԵՍԱՐԱՆ Ե.

ԱՌՋԻՆՆԵՐԸ, ԹԻՊՕ ԵՒ ԶԻՆՒՈՐՔ ։

ԹԻՊ. Արդարութիւնը ահա՛ եկաւ . . . և արդէն ղպարմ բոլխարը մեր դրած ծակէն հանելով՝ ուրիշ ծակ մը դրաւ՝ որ ամենախորունկ ծակ մըն է, ուսկից ազատելու ալ յոյս չունի խեղճը . . . հիմա Տիկի՛ն, կամ ասունի՛ կարգը քուկդ է . հրամէ՝ տեսնենք ։

ՊԵՐ. (Տորոփէն) Ո՞հ պարոն . գթութի՛ւն, գթութի՛ւն ։

ՏԱՐ. (Բէմէլու և բէնէն ճրկուղը մէջ առնելով) Հեռացի՛ր, փնա, անօրէ՛ն ։

ԽՄԲԵԱԿՔ

Արդար երկնից վրէժխնդիր կայծակներ
Ուշ կամ կանուխ կիյնան 'ի գլուխ մարդընչաց
Կ'ահանեն երկինք արդարներու արցունքներ
Երջանկութիւն չնորհել բաղձան թշուառաց ։

ՎԵՐՋ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI--1922
имени А. Мясникиана
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

41802